



ԵՐԻՒՈՒՆ

1969-ԺՀ

Ωνδρ
ΗΩ Συνη

Դեկտեմբեր

ԷՐԱՐՈՒԾԻՒ

ՊԱՀՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

d f

1969



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | | | |
|---|--|--------------------------------|----|
| ԽՄԲԱԳՐԱԿԱՆ | —Ս. | Էջմիածնի և հայ ժողովրդի գավակը | 3 |
| Կոմիտաս վարդապետի հմբակենագրությունը | . | . | 6 |
| Կոմիտապան քննար | . | . | 9 |
| ԿՈՄԻԴԱՍԱՎԱԿԱՆ | . | . | |
| ԿՈՄՍԱՆ ԶԱՐՅԱՆ | —Կոմիտասին | . | 10 |
| ԵՂԻԾԵ ՉԱՐԵՆՑ | —Կոմիտասի միշտակին | . | 11 |
| Էպիտաֆիա | . | . | 12 |
| ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ | —Հատված՝ «Անոնի գուեպակառուն» պրեմիյը | . | 12 |
| ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ | —Կոմիտաս | . | 13 |
| Երգ Կոմիտասին | . | . | 13 |
| ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆ | —Դեսի կառափնարան | . | 13 |
| ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ | —Կոմիտասին | . | 14 |
| ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱՋ | —Բևյթ՝ Կոմիտասին | . | 15 |
| Թե չծնվեր մեծ Կոմիտասն իմաստուն | . | . | 15 |
| ԵՐՎԱՆԴ ՊԱՐՍՈՒՄՅԱՆ | —Զայցի հնձվոր, Կոմիտաս... | . | 15 |
| ՎԱՃՐԱՄ ՍՈՅՑՅԱՆ | —Նախանձագ հայկական | . | 16 |
| ԱՍՔԱՆԱՋ | Ամենայն Կոմիտասի պատկերի մոտ | . | 16 |
| Խոներ Կոմիտաս վարդապետից | . | . | 17 |
| Կոմիտաս վարդապետը համաշխարհային մեծ երաժշտագետների գնահատմամբ | . | . | 20 |
| Հ. ԱԾԱՌՅԱՆ | —Հուշեր Կոմիտասի մասին | . | 23 |
| Ա.Ի. ԻՍԱՀԱԿՅԱՆ | —Կոմիտասի անմահ միշտակին | . | 27 |
| Ա. ՄԱՆԱՌՅԱՆ | —Հուշեր | . | 28 |
| ԿԱՅՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՄԻԴԱՍԱՎԱԿԱՆ ՎԱՐԴԱԿԱԴԵՏԻ ԱՆՁԻ ԵՎ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ | . | . | |
| ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ | . | . | 30 |
| Ա. ՉՈՊԱՆՅԱՆ | . | . | 31 |
| Գ. ԼԵՎՈՆՅԱՆ | . | . | 31 |
| Դ. ԴԵՄԻՐՅԱՆ | . | . | 32 |
| ՄՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆ | . | . | 32 |
| ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ | . | . | 32 |
| ՄԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ | . | . | 33 |
| Ա.ՌԱՔԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ | —Մեծ Կոմիտասը | . | 34 |
| Գ.ՌԻԳՈՐ ԳՅՈՒԼՅԱՆ | —Սոլյումնից Կոմիտաս | . | 40 |
| Ա.ԱՄՎԵԼ ԱՆԹՈՒՄՅԱՆ | —Խոներ Կոմիտաս վարդապետի մասին | . | 43 |
| ՄԻՀԱՅՐԱՆ ԹՈՒՄԱՅՆ | —Կոմիտաս վարդապետի հավիտենական կերպարը | . | 49 |
| ԵՐՎԱՐԴ ԳՈԼԱՆԴՅԱՆ | —Մեծ սգալոր երգիչին Կոմիտաս վարդապետին | . | 51 |
| Ռ. ԱԹԱՅՅԱՆ | —Կոմիտասի երկերի հրատարակությունը | . | 53 |
| Ն. ԲԱՀՄԻՅՅԱՆ | —Նշանաբեր հայոց հոգևոր եղանակների կոմիտապան գրառումներից «Արարատ»-ն ու Կոմիտաս վարդապետը | . | 56 |
| Հորեւանական հանդիսավորություններ՝ նվիրված Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակին | . | . | 70 |
| Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակի հանդիսավորությունը հոգևոր եւմարանում | . | . | 75 |
| ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ | . | . | 77 |
| Հանճիստ արժ. տ. Վահան ավագ քահանա Գրիգորյանի | . | . | 78 |
| Թանկ «Էջմիածին» ամսագրում 1969 թվականի բնագարւմ տպագրված հումքերի | . | . | 79 |

ԽՐԵԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՂԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ. ԷԶՄԻԱԾԻՆ

«ԷջՄԻԱԾԻՆ» Ա.ՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS.

Հանձնված է արտադրության 24/XI 1969 թ.: Ստորագրված է սպազմության 16/I 1970 թ.
Տպագրական 5,12 մայոք, թուղթ 60×84 $\frac{1}{8}$, պատճեռ 823

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1969 թ.

ՀՐԱՄԱՆԱԴ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓՈԽ ԵՒ ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱԶԳԻ ԾԱԿԱՅ ԵՒ ՔԻ ՈՐՈՌՄԱՆ ԽԵՎԱՐ ԱՅ ԵՒ ԿԱՅՕՔ ԱԶԳԻՆ
ԵՊԻԿՈՂՈՍԱՐԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՄԿՈՍ ԱԺԵԱՅՆ ԱՅՅՈՒՅ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐ ՀԱՄՎԱԿԱՆ ՆԱԽԱՇԵՄ ԱԲՈՒՅՑ ՎՅՈՒՐԱՏԵԱՆ
ԱՆԻՐԵԱԿԱ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ ՄՐՈՅ ԿԱՅԻԴԻԿԵ ԷՇԻԱԾՆԻ

ՄԵՐՄԵ
ՄԵՐՄԵ
ԱՅ
ՄԵՐԱԿ,
ՄԵՐԱԸ
ՀԱԶԱՐ
ՏՈՒՆ,
ԱՅՏՈՒ
ԱԾ:



ԼՈՒՆ
ՆԱԿՆ
ԱՆՈՅԾԸ
ՀՈՎՆ
ԱՆՈՅԾԸ

ՔՐԻՍՈՍԱԽԱՆ ՄԻՋՈՅ ՈՂԶՈՒՅ ԵՒ ՕՐԵՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵ-
ՄԻ ՏԱՆՆ ԿԻԼԱԿԻՆ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՊԱՎՈՅ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՅ ՄՐՈՅ ԵՐՈՒՍ-
ԱՆԻՆ Տ. ԵՂԵԶԻ ԱՐՔԵՊՈՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՅ ԿՈՍՏԱԴԻՆՈՎՈՅ Տ. Տ.
ՇՈՐՈՎՔԱՅ ԱՐՔԵՊՈՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՅՈՐԵՆ ԱՐՔԵՊՈՍԿՈՊՈՍԻՆ, ԵՊԻԿՈՊՈՍԻՆ, ՎԱՐԴԱ-
ՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՑ, ԵՒ ԱԱՐԿԱՆԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՈՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱ-
ԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՏԾՈՒՆԻՑ ԵՒ ՄԻՋԵՑԵԱ ՎԱՄԱՅ ՀԱԿԱՏԱՅՅԱ
ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՅ

Ա մեսան ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԵՅ, ՄՈՅ ԽԵՎԸ ՏԱՄԵՆԵԱ ՏԱՐԻՆԵՐ ԱԽՈՅ, 1881 ԹՈՒԽՆ, ԿԸ ԼՈՒՐ ԵՐԿՈՅՈ
ԱՅ ԲԱՂՅՐ ՀԱՅՈՅ ՓՈՔՐԻԿ ՍՈՂՈՄՈՒԽՆ, ՈՐ ԿՈՅ ԳԱՅ ՀԵՊՈԱՐ ԿՈՒՏԻՆԵԱՅ ՀԱՅՈՅ ՀԱՅՄԱՅՔԵՆ.
ՄԱՅՐ ԹԹՈՒՄ ՀՈՎԵԱՅՈ ՊԴՐՈՅԸ, ՈՒՍՏԱՆ ՏԱՐՄԵՐԻ ԸՐՄԱՑՔԻՆ, ԼՈՅ ԵՒ ԶԵՅ ՏՈՒԱ ԱՆՈՐ
ՄՏԵՅՆ, ՀՈՎԻՆ Եւ ԱՖԵՑՈՅ ԱՆՈՐ ԸՆԴՀԱՆԵՐԸ, ՓՐԵԿԻ ԽԵՎԱՆ ՍԵԼԱՆՆ ԱՅՅՈ ԶՈՐՈՒԹԵԱՄԱ-
ԱՅՑՈՅՆ ՏՆՈՒՆ Առա ԵՒ ԾՈՎԱ ԽԵՎԱ ՀԱՅՄԵՐ ԿՈՍԻՏԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԵՅ:
ՍՈՂՈՄՈՅ, ՀԱԿԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԸՆԴԱ ԵՐԱՅ ՄՈՒՐ ԷՇՄԱԾՆԻ ԿՈՍԻՏԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԵՅ ՍՈՒՐԵ
ԵՎՈՒՄԵՆ ԸՆԴԱ ՀԱԿԱՆԱԿՈՒՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ:

ԿՈՍԻՏԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԵ ԲԱՐԵՆՈՐԳԻԿՆ Ե ՀԱՅ ԵԿԵՂԵՑՎԱԿԱՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԵՐԱԾԾՈԽԹԵԱՆ
ԵՒ ԳԻՒՏԱՐԱՅ, ՈՐՈՒ ԳՈՐԾ ԿԱՐԵՒ Ե ԱՐՁԵԿՈՐԵ ՄԻԿԱՅ ՄԵՄՐՈՊԵԱ ՏԱՓԱԿԵՈՎ: ՀԱՅՈՅ ՀՐԱԴ
ՀԱՄԻՐ ՏԱՐԻՆ ԹԵՎՈՅ, ԿՈՍԻՏԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԵ ԵԿԱ ՏԱՐՈՒՆԵԱԿԵՈ ՕԵՎԱԿԱՆ ՄԵՅ ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆ
ԳՈՐԾ, ԵՐԳ ԱԽՏԱՏԱԿԱՆ, ՄԵՅ ՎԱՅ ԶԻ ԵՐԳ ԽՈՎԵՐ ՏԱՐՈՒՆԵԱԿՈՒԹԻՆՆ Ե ԵՅ ՊԱՅԱՄԱԿԵՅ.
ՊՈՒՐՈՅ:


ԱՐԴԱՐԵ, ԽԵՎՊԵՅ ՄՈՒՐ ՄԵՎՐՈՐ ՔԱՈՍԵՆ ԴԻՒՐ ԲԵՐՐԻ ԵՒ ԲԻԿԵՐԵՆԵՅ. ԶԱՅԵՆԵՐ ՀԱՅ ԲԱՐԱ-
ԼԻՆ, ԵՒ Ի ԱՇԿԵ ՈՐ ԱՆԵՎԱՐԱԿ, ՊԱՐԿԻՆԵՅ ԿՈՒՐՈՅ ՀԱՅԵՐԵՆ ԵՎԵՈՒԽ, ԱՎԱՐԵ ԱԼ ԿՈՍԻՏԱՆ ՎԱՐ-
ԴԱՎԵՅ՝ ՊԵՂԵՅ, ՄԱՐՐԵՅ Եւ ԼՈՅ ԱՆԵՎԱՐ ԲԵՐՐԻ ԿՈՅ ԱԼԳԻՆԵՅ ՀԱՅ ԵՐԳԻՆ: ԵՒ ԲԱՎՈՐ ՏԱՐԻՆ
ԱՆՈՐ, ԱՆԱՊԱՆԱԿԵ, ՄԵՅ ՆՈՐ ԱԽԻՆՈՎ ՈՐ ԱՏԵՂԵՐԱՐ ՏԵՎՈՒԿ, ԱՅ ԱԼԳԻՆԵՐ ՀԱՅ ԵՐԳԻ
ԼՈՅ ԲԱԽԵՆ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱ, ԿՈՍԻՏԱՆ ԵՊԵԿԻ ՄԵՅ ԳԱՅԻ, ԺԱՆՑԱՅ ԻՐ ՀՈՂԻՆ, ԻՐ ՊԵԿԱՆ ԽՈՎԱՆ-
ԹԻՆՆ: ԿՈՍԻՏԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԵ ՍԻՒՅԵ ՄԵՅ Ե, ՈՐ ՎԱՄԱՅ ՀՈՒԿ: ԱՅ ՊԻՏԻ ԱՄՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ:
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱ ՊԻՏԻ ԻՐՈՒԿ, ԽԵՎՊԵՅ ԵՐԳ, ԽԵՎՊԵՅ ԱՅՈՐ, ԱՅՆԵ ԱԼ ՎԱԻՆԵԱՆ: ԱԿԱՆ
ԿՈՍԻՏԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԵ ՀԿԱՅ ՀԱՐԱՎԱ ՀԱՅ ԵՐԱԾԾՈԽԹԵԱՆ: ԱՄԵՅ ՀԱՅ ԵՐԳ ՄԵՅ, ԳԻՆ ԱՄԱԿԱԿԱ-
ՄԵ ՊԵՏԵ:

ԵՒ ՄԱՆԱԿԱՆ ՈՉ ԽԵՎ ՎԵԿ ՄԵ ՊԵՏԵ Ե ՊԱԿԵՄԵՅԵ, ԿԱՅ ԱԿԵԵՆԵ ՎԱՐԴԱՊԵՏԵ ԵՐԱԾԾՈԽ-
ԹԵԱՆ: ՄԵՅ ԱՅԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՐ ՊԱՄՐԱԱ ԵՐ ԱՐԻՆ ԹԱՓԵԼՈՒ, ԽԵՎՊԵՅ ԽՐ ԸՆԸ ԵՐ ԱԿԻ-
ԹՈՎ ՄԵ:

ՈՐ ՔՐ ԿՈՍԻՏԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԵ, ԻՐ ԱՏԵՂԵՐԱԿՈՐ ՀԱՅԱՐԻ ԱԽԵՆԱԲԵՐՈՒՆ ԾՐՎԱՆ ՍԵՄԻՆ ԿԸ ԳԵ-
ՆՈՒՐ ԵՒ ԿԸ ՊԱՏՐԱՍՈՒԿ ՊԵԿԱՆ ՆՈՐ ՊՈՍՈՒՈՒ, ՀԱՅ ԵՐԳ ՀԱՍՑԵՆ ԱՅՎՈՒՄ ԱՐԱՊՈՒՆԵԱՐՈՒ-
ԵՐ ՀԵՎԵՑԵՆ ԱՅՎՈՒ, ՈՐ ԱՆՈՐ ԼՈՅՈՎ ԲԵՂԵՐԱԿՈՒԿ ԵՐԱՖԵՏԱԿԱՆ ԱԽԻՆՈՅ ՀԱՄԱՅ, ՈՐՈ-
ԳՈՐ ԶԵՐ ՄԵ ՓՈՐԵ ՔԱՐԵ ԱԽՐ ԵՐԳԻՆ, ԱՆՈՐ ԿԵՎԱՐ:

ՀԱՅ ՊԱՏԱԿԱՆ 1915 Ե ԽԵՎ ՅԵՎԻ ԱԿԻ ԱԿԻ, ՏԱԿ, ԵՅ ԽԵՎ ԱԿԻ ԱԿԻ, ԵՐԱԾԾՈԽԹԵԱՆ:



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ա. ԷԶՄԻՍԾՆԻ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՎԱԿԸ

1969 թվականի նոյեմբեր ամսվա մեջ համաժողովրդական խանդավառությամբ և պետական նախաձեռնությամբ ու հովանավորությամբ տոնվեց Մայր Աթոռ ս. Էջմիածնի և հայ ժողովրդի տաղանդավոր զավակ, մեծն Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակը:

Անցնող տարին արդարն եղավ հորելապահական տարի:

Աշնան առաջին օրերին, համաժողովրդական ցնծությամբ տոնեցինք մեր քնարերգության հանճարեղ վարպետ Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակը:

Հոկտեմբեր ամսվա մեջ նույնափիսի սրբտագին խանդավառությամբ, միջեկեղեցական ու ազգային մակարդակի վրա Մայր Աթոռում, ներքին և արտասահմանան մեր բոյր թեմերում նշվեց Հայոց Հայրապետի ծննդյան 60-ամյակն ու գահակալության 14-րդ տարեկանը:

Նոյեմբերին՝ Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակը:

Նոյն հորելապահական հանդիսությունները վերածեցին համաժողովրդական փառասունի, և որին իրենց մասնակցությունը բերեցին նաև մեր ժողովրդի և հայ մշակույթի բարեկամներն ու հիացողները:

Կոմիտասը իր երաժշտական վաստակով արժանավորապես կանգնել է աշխարհահռչակ մեծ երաժշտների լուսն փաղանգում:

Կոմիտասան երգով հայ մշակույթը մի անգամ ևս արժանավորապես ներկայացավ աշխարհին և մարդկությանը:

Հայոց Հայրապետը իր 1969 թվականի հունվար 24 թվակիր սրբատառ կոնդակով հրահանգում էր՝ այս տարի հոկտեմբերի 12-ին, Սրբոց Թագոմանչաց կիրակի օրը, բոյր հայ եկեղեցիներում հոգեհանգստյան հանդիսավոր արարողություններ կատարել, ոգեկոչել հիշատակը մեծ վարդապետի և մի անգամ ևս արծնորել հրա մեծ վաստակն ու գործը մեր մշակույթի պատմության մեջ:

Հայրապետական նոյն գեղեցկահյուս կոնդակում Հայոց Հայրապետը այնքան ճշգրտորեն ու պատկերավոր արտահայտությամբ հաստատում էր, որ.

«Սողոմոն, նախանձամության ընծան եղավ՝ սուրբ Էջմիածնին: Կոմիտաս վարդապետ սուրբ Էջմիածնի ընծան հանդիսացավ՝ հայ ժողովրդին»:

Սրբան և իրավ:

Կոմիտասը վերածնվեց ս. Էջմիածնի կամարների տակ որպես հայ և հայրենասեր, կազմակերպվեց որպես մտածող, արվեստագետ ու հայ երգի ճշմարիտ վարդապետ, իր հոգին բացալ հայոց պատմության խորհրդին ու շնչին, ինչպես մեր անցյալի այլ եռամեծ վարդապետները, և ս. Էջմիածնի լույսի և օրհնության ներք եղավ այն, ինչ եղավ, և ապա կանչվեց իր մեծ առաքելության:

«Մայր Աթոռու հոգեսոր դպրոցը, ուսման տարիներու ընթացքին, լուս և ձև տվալ անոր միտքին, հոգին, և անեցան անոր շնորհըները Փրկչի Խօսան սեղանի ահեղ զորովայմբ», —գրում է Հայոց Հայրապետուր:

Կոմիտաս վարդապետը իր կյանքի 20 տարին անցնացքել է ս. Էջմիածնի հովանու տակ: Էջմիածնի խորհրդի, մօնուղութի հետ նա կապված է եղել ու մնացել իր հոգու բույր թելերով և իր ստեղծագործական ներշնչումներով:

Արդարն, Էջմիածնում շատ բան կա կապված մեծ վարդապետի սուրբ անման և անման գործի հետ: Վանական մժեղուրտը, Էջմիածնը իր պատմությամբ, իր առաքելությամբ ու դերով, հոգեհարազար է եղել Կոմիտաս վարդապետին: Այս իմաստով երբեք պատահականություն չեղ հայրապետական մաղթերգի գրի առումն ու կոմիտասի դաշնավորումը Մայր Աթոռում.

**Ամեն հայի սրտից բխած,
Լիիր այս ձան, ո՞վ Աստված,
Երկար կյանք տուր Հայրապետին,
Երկար օրեր Հայոց Հոր:
Տե՛ր, անսասան պահիր Դու միշտ
Քո իսկ հիմնած Մայր Աթոռ:**

Էջմիածնում դաստիարակված բազում սեպունդների և այդ թվում նաև Կոմիտասի երախտագիտական, որդիական խոսքն է այս՝ ողջված ս. Էջմիածնին:

Էջմիածնում հասունացավ, կազմակերպվեց մեծ երաժիշտը, որպես «ձիթենի պատղակ», հայոց Աստծու և համազգային այս մեծ Տան մեջ, այս դարավոր հաստատության մեջ:

Վանքը, ճեմարանը դարձան Կոմիտասի ստեղծագործությունների դարբնոցը:

Էջմիածնն ու ճեմարանը նրան հոգեսոր, մտավոր ու հայրենասիրական լիցը ու շունչ տվեցին, ներշնչում ու ոգևորություն:

Կոմիտասը Էջմիածնի կամարների տակ գտավ հայ երգարվեստի ինքնատիպ ակուր և դարձավ մեր ազգային երաժշտության սերմանացան:

«Արարատ»-ի էջերում նա գրի առավ մեր երաժշտական գորհարները, գրեց իր հիմնական գործերը, երաժշտագիտական, տեսական, ազգագորական աշխատությունները: Էջմիածնի ձեռագրաց մատունադարանի մեջ նա իր շնորհակալ գլուխ խունարհեց մագաղայաց ձեռագրերի, երաժշտական հրաշալիքների վրա և երկար տարիներ աշխատեց հայտնաբերելու հայ խազագրության մեծ գաղտնիքները և, որպես մեր երգարվեստի նոր Մեսրոպ, գտավ հայ հոգին մի անգամ ևս իր ենկեղեցական և ժողովրդական երգե-

րի մեջ և, որպես բազմահնուտ երգահան, գծեց այն ուղիները, որոնցով պետք է ընթանար հետագալին հայ երգարվեստը:

Էջմիածնի մթնողրտում և ճեմարանի հարկի տակ նա կոփիեց նաև որպես մեծ հայրենաստեր:

Այդ օրերին Էջմիածնի Գևորգյան ճեմարանը մի սրտառուց մասրանկարն էր Արեվադյան և Արևմտյան Հայաստանների: Հայոց աշխարհը գալիս պազանվում էր վանքի մեջ և ճեմարանում: Կոմիտասը սահման քայլում լսում էր հայոց պատմության շոնչը, հայ երգարվեստի թանկագին մասունքները որպես սրբություն, ոգի, ապրում ու խոռվը, հոգում ու տեսիլք, ու նրա միտքը պայծառանում էր, ողողվում հայոց երկինքներից իշոնդ լուսով և խորհուրդով:

Կոմիտասը գտավ հայ երգը, հայի ոգուն բնորոշ տիպականը, մեր երգարվեստի արմատները ու այն պեղեց հարազատորեն, մաքրազարդեց ավելորդ տարրերից, բյուրեղացրեց իր ստեղծագործական քորաքի մեջ, դարձավ նրա խանդավագության գիտական հետազոտողն ու առաջազր՝ դասական պարզությամբ ու քերցությամբ, ու գտածը վերադարձրեց իր ժողովրդին. **«Զքոյս ի քոյց քեզ մատուցանեմ, հայ ժողովորդ»:**

Կոմիտաս վարդապետը հրաշք երևոյթ էր, մի նոր հայտնություն մեր երաժշտական մշակույթի պատմության մեջ:

Կոմիտաս վարդապետը միաձոյլ ամբողջություն է որպես հոգեւորական, երաժշտագետ, գիտնական ու հայրենաստեր:

Եվ որպես այդպիսին էլ նա միշտ մնաց, ինչպես բովանդակ մեր ժողովրդի, այնպես էլ Մայր Աթոռի, նրա գահակալների, նրա լուսամիտ միաբանների սիրո, քաջալերանքի ու պաշտամունքի առարկան:

1915 թվականին եկավ մեծ ու մահաբեր մրիկը. լոեց նրա սրբազն քնարը, խոստումնալից հաստության վառ գարնան օրերին:

Փշրվեց նրա արվեստագետ ու գգայուն հոգին. նա դարձավ կենտանի նահատակ 20 տարի:

Ընկալ մեծ արվեստագետը, ու կիսավար մնացին հայ երաժշտական արվեստի մեծ գործերը, մտահացումներ, ինչպես «Սասունցի Դավիթ»-ը, «Սասնա քաջեր»-ը, «Լարդան սպարապետ Մամիկոնյան»-ը, խաղերի ուսումնասիրության և վերծննման գործը, հայկական երաժշտանոց հիմնելու և երաժշտագիտական գիտությունը զարգացնելու ծրագիրը:

Կոմիտասի ողբերգական կյանքը խորհրդանշում է մեր ժողովրդի պատմական դառը ճակատագիրը:

Կոմիտասը, սակայն, վերածնվեց իր ժո-

ղովրդի ու իր հայրենիքի մես, իր կյանքով, իր ձգտումներով, երազներով և ստեղծագործությամբ:

Նա մարմնավորում է մեր ժողովրդի Ակարագիրը, հանճարը, պալքարը, ճակատագիրը, ու նաև նրա վերածնունդն ու հայթանակը:

Երգը չի մեռնի, ճառագայթը չի գեղեցմանվի:

1936 թվականին նա եկավ հայրենիք, որպես Եշխար, որպես սրբություն, հավերժացած ու անմահացած ապրելու համար հայրենի հողի վրա, իր հարազատ ժողովրդի սրտում:

Կոմիտայան երգը այսօր սեփականությունն է ամեն հայ հոգու:

Այսօր մեր վերածնված կյանքի մեջ, մեր հայութական և ներոսական երթի մեջ կա' բորբոքը Կոմիտասի, կա' գարունը Կոմիտասի, կա' լուսնը և զարդ Սիփանա քաջերի, որպես ազգային ինքնանանաչման և գոյատևման անխորտակելի ազդակ, իր ազգային բորբոքով և համամարդկային խորությամբ:

Ինչքան գեղեցիկ են թելադրական՝ Հայոց Հայությունը և Կոմիտասի կոմիտասական անդամանությունը:

Եսոց Հայրապետի կոնդակի հետևյալ սրտառուց խոսքերը.

«Ասե Կոմիտաս, վարդապետ արդար, երգը նոր Հայաստանի: Այդ քո երգի է, որ քեզի կու զա: Այդ երգի թեկերով ամբողջ ազգը հայոց, որ ի Հայաստան և ի սփյուռք աշխարհի, երախտապարտ սիրով կիսնարհի քո հիշատակիդ և մեծ գործիդ առջն, քու տեսիլքներուդ հավետ հավատարիմ մնալու սրբազն ուխտով:


Այսօր Հայոց Հայրապետը օրհնություն և անթառամ պատկ կրերե քեզի՝ սուրբ Էջմիածնն, ծմբավայրը քո լուս հոգիի»:

Հայոց Հայրապետի հետ բովանդակ հայությունը այսօր ծնկի կա և Էջմիածնի և մեր ժողովրդի տաղանդավոր զավկի՝ նոամեծ Կոմիտաս վարդապետի գործի և հիշատակի առջն:

Կոմիտասը միշտ մեզ հետ է, հարազատ, ժամանակակից և հասկանայի:

Փառք Կոմիտասը ծնող մեր արի ու բարի, տաղանդավոր ժողովրդին:

Կոմիտասի անձի և գործի մեջ մի անգամ ևս համաշխարհային չափանիշով արդարութեն փառավորվեց հայ մշակույթը:



ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծննդեմք: Ուսման ընթացքը: Սուրբ
Էջմիածնի միարան: Երգիչ և ուսուցիչ:
Մայր Աթոռում: Համերգներու և դասա-
խոսություններու: Գրվածքներու:

Ծննդեմք 1869 թվին, սեպտեմբերի 26-ին.
Փոքր Ասիայի Կուտինա կամ Քյութամիա
քաղաքում: Երրորդ օրն ինձ մկրտել են և ա-
նոնս դրել Սոդոմուն:

Հայր՝ Գեղրդ Սոդոմունանը՝ քյութամիա-
ցի է. իսկ մայր՝ Թղագումի Հովհաննիայանը
բուրսացի: Երկուս էլ հայ են:

Հորու ու մորու ազգատոհմն ի բնել ձայնեղ
է: Հայրու ու հորեղբարյուն՝ Հարությունն Սոդո-
մունյանը հայտնի դպիր են եղել մեր քաղա-
քի և. Թեղորորու եկեղեցում: Մորու և հորու
տաճիկ լեզվով և եղանակներով հորինած
երգերը, որոնցից մի քանիսն արդեն գրել
եմ 1893 թվին հայրենիքումն, դեռ երգում են
մեծ հիացմունքով մեր քաղաքի ծերերու:


Մայրու վախճանավել է 1870 թվին իսկ հայ-
ուր՝ 1880 թվին: Ծննդեմքին մանից հետո
ինձ՝ միամոր զավակիս դաստիարակել և
ուսմանն մասին մեծ հոգ է տարել հորական
տասն Մարիամը:

1876 թվին էր, երբ առաջին անգամ ուրս
դրի դպրոցի շեմքը: Մեր քաղաքի վարժա-
ռանը մի շորու քածանմունք ունեցող դպրոց
էր: 1880 թվին ավարտեցի այդ վարժարա
նը և հայրու, իր մանից չորս ամիս առաջ,
ինձ ուղարկեց Բուրսայի վարժարանը: Դեռ
տարին չըղողորած, հորու մանիսն պատճա-
ռով, մեր քաղաքը վերադարձաւ:

1881 թվին մեր վիճակի առաջնորդը՝ Գե-
ղորդ վարդապետ Դերձակյանը պետք է գնար
սուրբ Էջմիածնի եախսկոպոս ձեռնադրվելու: Գեղորդ Դ Ամենային Հայոց կայողիկուրը
հրամանագրել էր, որ առաջնորդը հետու բե-
րել և մի որք աշակերտ իր ս. Էջմիածնում
հիմնած Մայր Աթոռի Գեղրդային ճեմարա-
գի համար: 20 որքի մեջ վիճակն ինձ ընկալ
և առաջնորդն ինձ ս. Էջմիածնի քերակ:

1881/82 ուսումնական տարեշրջանին՝

սեպտեմբերի 15-ից մտա Գեղրդային հոգևոր
ճեմարանն իրեն գիշերօթիկ սան և ավար-
տեցի դպրանոցական ու լարանական բա-
նություններու:



Կոմիտաս վարդապետի ձեռագիրը

Ժինը 1892/93 ուսումնական տարեշրջանին:
1896 թվից, հայ հայտնի բարեգործ Աղեր-
սանդր Մանեաշյանի օժանդակությամբ,
զնացի Բերլինի երաժշտական ուսումն կո-
տարելագործելու: Դիմեցի աշխարհամուշակ
չութականը Հովսեսի Հովհաննին, որ Բեր-
լինի արքունի երաժշտանոցի տեսուչի էր:
Խորհուրդ տվալ մտնել Ռիխարդ Շիմութի
մասնավոր երաժշտանոցը: Ուսուցանելու
և արքունի երաժշտագետ տեսուչ Ռիխարդ
Շիմութը հանձն առավ ինձ հետ պարագել և
առանձնապես:

Թեև ծանոթ էր ինձ դաշնակի ուսումն
մինչև կեղծ հաջորդությունները, բայց
սկզբիցն սկսեցինք, որ հիմնավոր լինի:
Շիմութի մոտ մնացի ուղիղ երեք տարի՝

¹ Սոդոմունյաններն ու Քյութամիայի հայ մին ընտա-
նիքները համական զոք ցեղիցն են և գաղթել են
մը դարու վերջում Գոյոցն վագանի Եղիսա զուլից:

1896 թվի հունիսից մինչև 1899 թվի հունիսը՝ Ավարտեցի տեսական ու մանավաճար գոյօնական երաժշտության ամբողջ դասընթաց:

Միաժամանակ խելական ուսանող գրվե-

Ծեմարան տաճ օրից երգիչ և Մայր Աթոռի աշքի ընկնող ձայնեղ մասուկներից մեկն էի: Երբ Գերգ Դ կայուղիկոսն իշնում էր Վեհարանից Մայր տաճար, ես և իի մի ձայնեղ ընկերս կանգնում էիմ Նորա Աթոռ-

Программа

Widely distributed throughout the Americas, especially in open habitats.

Carbohydrates are the most abundant organic molecules found in living organisms. They are composed of carbon, hydrogen, and oxygen atoms.

Дипломъ

D I P L O M E

Библиография Годичный журнал Академии Наук СССР, издаваемый в Университете. Выходит в 1950 г. в 10 томах. Тома 1-4 включают в себя материалы конференции по проблемам физики и химии вспомогательных материалов. Тома 5-10 включают в себя материалы конференции по проблемам физики и химии вспомогательных материалов.

Le Comité d'Appel de l'Académie des sciences Biologiques de St. Petersburg décide que *Archaeobacillus* nomme soit éliminé et soit remplacé par *Archaeobacter*, et admet au premier rang espèce de *A. caldus* en 1895, et placée dans ce genre, et que *A. novellus*, à type en 1895, à l'origine difficile, pour tous les types accepter le nom *Archaeobacter*.

| | |
|---|--------------------------|
| Eléphant | <i>Loxodonta</i> L. 1758 |
| Éléphant | <i>Elephas</i> L. 1758 |
| Les espèces des moutons Malabariques sont : | |
| Mouton | <i>Ovis</i> L. 1758 |
| Mouton de la Malabarique orientale sont : | |
| Mouton de la Malabarique occidentale | <i>Ovis</i> L. 1758 |
| Mouton de la Malabarique orientale | <i>Ovis</i> L. 1758 |
| Mouton de la Malabarique griseâtre | <i>Ovis</i> L. 1758 |
| Lambs | <i>Ovis</i> L. 1758 |

Следует подчеркнуть, что в этом случае имеется
единственный метод определения, позволяющий избежать эта-
ким образом ошибок в определении содержания или отсутствия антибиоти-
ков в биоматериалах.

*Le temps de la révolution française. Ancien.
Le temps de la Révolution française. Ancien.*

11

1000100000

4780000-00-Sub0000

Կոմիտաս Վարդապետի Ակադեմիան՝ ճեմարանի դպրոցական բաժնի աշխատման կապակցությամբ


ցա Քերլինի արքունի Ֆրիդրիխ-Վիլհելմ Բայ-
մասարանի փիլիսոփայական բաժնում և
լրացրի երածառության փիլիսոփայական
պատմական դասընթացը: Ուսուցչապետ-
ներս էին F. Bellermann, G. Friedlander
և O. Heischer:

1899 թվին, սեպտեմբերին վերադարձա և Հյուծիածին:

ոի մոտ և այնպէս երգում միայնակները: Մեր երգելու ժամանակ ծերունի Հայրապետի արցունքները գլորվում էին և թափարվելով երկար ու ճերմակ մորուսի վրայով թարգմանվում էին Փիլոնի ծալքերի մեջ:

Սակայ Ա-ի օրով արդեն գլխավոր դասապետ էի Մայր Աթոռում Դ դասարանիցն սկսած: Մկրտիչ Ա-ի օրով 1893-ի սեպտեմբերի սկզբին հշանակվեցի ճեմարանի երաժշտության ուսուցիչ: Դաս էի տայի հայ եկեղեցական երաժշտությունը հայ նորագույն և եկրոպական ձայնանիշերով մի դժև արտասահման գնալու: Երաժշտանոցն ու համալսարանն ավարտելուց հետո 1899-ի սեպտեմբերին վերսկսեցի ճեմարանի դասերս, հշանակվեցա Մայր Աթոռի երաժշտապետ և վարում եմ Մայր տաճարի բազմաձայն խոմքը:

Առաջին համերգը միացած էր Բերդինի բարախոսության հետ: Եվլուպայոս մեծ համերգս տեղի ունեցավ Փարիզում, Փարիզի հայկական միության ձեռներեցությամբ: Այս համերգով հայատակ ունեի ծանոթայացել Ֆրանսայի երաժիշտ աշխարհին հայ ժողովրդական ասեղագործություններին: Այս համերգի մասին



Կոմիտաս վարդապետի մկրտության վկանականը

Խոսեցին գրեթե բոլոր երաժշտական հրատակությունները, իսկ մանրամասնարար La mercure Musical 2-ը Ապնե Մօս 23—24, 15 Decembre, p. 422—424: Փարիզի համերգից հետո հրավեր ստացա Զիլիցերիակի հայ ուսանողություններից համերգներ տալու համար հետևալ քաղաքներում՝ Ֆրուրիխ, Լոզան և Ժնև, Կովկասում համերգներ եմ տվել և. Էջմիածին, Երևան, Տիֆլիս և Բագու:

Անդրամիկ դասախոսություններ արել եմ «Հայ ժողովրդական և եկեղեցական երաժշտության մասին» ավարտելուց ամսից աշակերտներ Բերդինի համերգ կցելով, 1907 հունվարի 13-ին:

Մրու դասախոսությունները նոյն նոյնի մասին արել եմ սուրբ Էջմիածնա Գեղրգուան ճեմարանում, Խորիր գյուղում, Տիֆլիսում, Բագու, Փարիզ, Լոզան, Ժնև, Վենե-

տիկ քաղաքներում հայերեն լեզվով նայ հասարակության համար:

Դա աշխատություններու են՝

Ս. Տափած

Ս. Տափած Բողվածներ՝

1. Հայոց եկեղեցական եղանակները. Ալրարան.

2. Նյութեր ԺԹ դարու հայոց երաժշտության պատմության. Արարան.

3. Քննադատական Բողվածներ. Արարան.

4. Das Interpunctions system der Armenier (Sammelbande der Internationalen Musik-Gesellschaft. Jahrgang I. Heft 1. Oktober-November 1899, Seite; 54—64).

5. Armeniens Volkstümliche Reizentanze (Zeitschrift der Armenischen Philologie). 1901. I. B. H.

6. La Musique Rustique Arménienne. (Mercure Musical et Bulletin Français de la Société Internationale de Musique. (Section de Paris) III. Année, 15 Mai 1907, pp. (472—490).

Բ. Երգարաններ՝

1. Հայ Ակնա ժողովրդական երգերի (25 հատ). 1895, ս. Էջմիածին (հայ ձայնավիշերով).

2. Հազար ու մի խաղ. ա. Հիսուսի. 1904.

3. Հազար ու մի խաղ. բ. Հիսուսի. 1905.

Ծանոթություն. Հազար ու մի խաղեր պարուն Մ. Արելյանի հետ.

4. Mélodies Kurdes (13 հատ) Imprimerie de Musique de P. Jerrgenson, Moscow, 1905 (?) (3).

5. «Հայ բնար» հնախարածու գեղչով երգերի. La Lyre Arménienne. Recueil de chansons Rustiques, Imp. C. G. Roder, Paris.

6. Հասով երգեր զանազան թերթերում:

Գ. Անտիպ աշխատություններ՝

1. Հայ ժողովրդական երգեր.

2. Հայ նոգեր երգեր.

3. Օտար երգեր զանազան լեզուներով

4. Տաճիկ երգեր.

5. Զանազան պարեր նվագարանների համար.

6. Ուսումնակիրություն հայ ժողովրդական երաժշտության.

7. Ուսումնակիրություն հայ եկեղեցական երաժշտության.

8. Խազարանություն.

9. Զանազան երաժշտության դասագլութեր.

10. Թարգմանություններ (երաժշտության վերաբերյալ):

ԿՈՄԻՏԱՍՍՅԱՆ ՔՆԱՐ*

Մեր հայ գավառն է խավար,
Տգիտության է պալուր.

Ուսում տարեք
Ու լուս վառեք,
Ու հուս վառեք,
Հայ տգեսող վտարեք:

Պահճա՛ դու, հայ միություն,
Գյուղին տվիր հայ դպրոց,
Սրտի, մտքի կոտ հնոց.
Պահճա՛ դու, հայ միություն,
Պահճան հայեր բարեգործ.
Հայուն՝ դպրո՞ց,
Հայո՞ւ դպրոց:

Մեր հայ երկիրն անապատ,
Ու հայն ընկել պատեպատ.

Գույքան տարեք
Ու Բող վարեք,
Ու խոր վարեք,
Հողի կուրծքը պատառեք:

Պահճա՛ դու, հայ միություն,
Գյուղին տվիր հուր գույքան,
Որ գյուղացիք արտ փութան,
Պահճա՛ դու, հայ միություն,
Մանկալ, հոտաղ ձայն կուտան՝
Հայուն՝ գույքան,
Հայու գույքան:

ՄԱՅՐԻԿԻՍ ՕՐՈՐԸ

(Հատվածներ)

Դեռ արգանդում՝ մայրիկը ինձ
Վարդ էր բուրում, ոռոգում.
Եվ իր նոգոս այգ-արևով
Գուրգուրում ու նորոգում:
Ծընած օրեն մայր շըրթներով
Մեր Էր վառոս օրորում,
Արև-լուսին նոգվով-մըտքով
Նըլքարում ու բոլորում:
Հայր զարկերով արի-արի
Խոսում էր իմ երակում,
Մայր կաթերով արյուն-արյուն
Հոսում էր ու կերակրում:

Քեզի տեսնեմ, ի՞մ հասորիկ,
Կյանքին ուղին սիրազել,
Հայս ու անհայտ դու որոնեն,
Քեզի՝ լինին իրազեկ:
Մի՛ թափառե կյանքի պարապ
Անապատում դու իզուր,
Քեզ պահապան սորք հալասս
Լուս, սիրո, լուս ու Հոր:
Օրիկ օրին,
Իմ Անուշին:

Գիշեր-գիշեր, լուսնե-լուսին
Մըտքին ծովը խորացալ,
Ցորեկ-ցորեկ, արև-արև
Հոգոս նովը գորացավ:
Մորքս կըտակն ալիք-ալիք
Մըրտին ավանդ պահեցի,
Երկրե-երկին, երկնե-երկիր
Ազատ-արձակ սահեցի:
Օրիկ-օրիկ
Գարուն նորիկ:
Երգ ու տաղեր սարեն, ձորեն
Տուն ու ամպով զարթելով
Տուն ու տաճար սըրտի խորեն
Բույր ու ձայնով բարդելով:
—«Օրե՛ր սարին
ու տաճարին»:
Կանաչ երկրի մըթնոլորտը
Պատառ-պատառ հաղթեցի,
Կապույտ երկնի լուս խորը
Կատար-կատար գալթեցի:
Կարդի բույրով, լուս համբույրով
Գիրկը թըրուավ Մայրիկը,
Զեռքես բըռնեց, առավ-տարավ,
Տարավ ցուցուց Հայրիկը:
—«Երենեկ օրին»
Երկնի խորին»:

* Նմուշներ Կոմիտաս վարդապետի քնարերգությունից:



ԿՈՄԻՏԱՍԱԿԱՆ

ԿՈՄԻՏԱՆ ԶԱՐՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍԱՒԻՆ

Նրա աճյունը Հայաստան տպանելու առթիվ

Բարի ճանապարհ, վարդապետ, վերադարձ բարի...
Դիակառքիդ մոտից գարունն էլ, ահա, ծամերը թափած,
Սահում է կամաց, մատները դնում երկնակամարի
Սրինգների բյուրեղ ձայների վրա,
Որ ճառագայթի ճակատոյ ըմբուտ:

Բարի ճանապարհ, վարդապետ, վերադարձ բարի...
Վաղը, երբ պառկած երկայն գրկում անհամբեր նավի,
Կերթաս ծովերով, խելառ ծովերով այս մոլորակի,
Դագաղիդ գլխին հովեր կքայլեն,
Եվ ալիքների խմբերը՝ հուզված ծովի լարերից
Սի հսկայական քնար կհյուտն
Ե՛վ շառաչելով, և՛ դղորակով կհովվերգեն նավի կողերին երեր...
Հանկարծ կցցվեն հունական երկրի վայրերից կախարդ
Ստվերներ մեծաշուր, ստվերներ հումկու և արշավուսի
Փերուզ արյունից, արծաթից սարտող ձիթենիների
Եվ երկինքների լազուրից պայծառ մի երգ կհյուտն
Եվ քեզ կօրորեն վերջին օրորով:

Բարի ճանապարհ, վարդապետ, վերադարձ բարի...
Ա՛ն, գիտեմ, գիտեմ, դառն վայրերից անցնելու պահին
Քո կոսկերի տակ մի գիշեր կուզ, կծկված բերանիդ

Ծայրից դողալով մի կաթիլ արյուն վայր կիշտե նորից...

Սև ծովի բուքը կիսա դղորդ...

Մեծ աղաղակներ կհասնեն նավին և քեզ կկանչեն:

Եվ այդ հույզերը, փոթորիկը այդ անողորմ ողբի
Հիվանդ ուղեղիդ վերջը կրանան, և կիսնթանաս:

Բարի ճանապարհ, վարդապետ, վերադարձ բարի...

Բայց այդ կիմի հիշատակ վերջին, այս բիրտ աշխարհի

Հիշատակ վերջին: Վերջին մղավանշ, վերջին սև տեսիլք,

Որի դանակը մորթել էր երգդ և սիրտդ փակել թանձր խավարում:

Հետո, վարդապետ, լուն' ևս ձայնը տարագիր սրտիս,

Հետո, վարդապետ, կգա վեհաշուր, պայծառ գմբեթը հայոց աշխարհի

Եվ կրաքրանան լուսե խմբերի երգեր աննման...

Անհամբեր շարքով քեզ կրոլորեն լեռները մեր վես,

Դաշտերը մարմանդ, դալար սեզերը, ձորերը մեր խոր,

Ուկե կոկորդով կլկան, ուրախ աղբյուրները մեր,

Շատագայլների բամբիոը զարնող գետերը զվարթ,

Եվ դա կիմի համերգ մի հնկա, որի նմանը չի լաված երբեք

Եվ ոչ մի վայրում: Մի դաշնակություն, որի մեղեդին

Գալիս է հնչուն հոդերի կրծքից, սարերի կանաչ բորոգաների

Կանչող հմայքից, ձորերում ձայնող խուլ թմբուկներից,

Դաշտերում սահող մեղմ ջութակներից և այն զանգերից,

Որոնք հնչում են, երբ մեր արևը կաշում է ժայռին,

Եվ վայր է թափվում խոլ ջրվեժների դողանշը արծայ,

Եվ դա կիմի համերգ մի հնկա, որի նմանը չի լաված երբեք

Եվ ոչ մի վայրում: Դիսկանտներ ուկե, բուտներ խորունկ,

Կաղամախիների խշցոներ խորհուրդ, բաղերի ծոցից

Եկած շրշուններ, հասկերի գլխին սահող լենտոներ,

Եվ ալիք-ալիք խոտերը շարժող ֆուգան հովերի՝

Կգան, կկանգնեն, և հոգուդ խորքի չերգված երգերից

Հայոց աշխարհի բոլոր ձայները կհամերգնեն նորից:

Բարի ճանապարհ, վարդապետ, վերադարձ բարի...

ԵՂԻԾԵ ՉԱՐԵՆՑ

ԿՈՄԻՏԱՍԻ ՀԻԾԱՏԱԿԻՆ

Հատվածներ

Հայրենին երգն ես դու մեր՝

Վերադարձած հայրենիք:

Դեմքիդ՝ տանջանքն է դրել

Անագորույն մի կմիք.—

Եվ հանճարի հեռակա

Հուրն է հանջուս ճակատիդ:

Դնչպես մարող ճայնագայթ

Արարատի գագայիին:

Դու աշխատանքն ես երգել,

Եվ քրինքը մանկայի—

Անջուր հանդեր ու հերկեր,

Սիրո երգեր անձկայի...

Դու պանդուխտի տարագիր

Սիրոն ես երգել կարոտող՝

Իրրեն հեռու արագի

Կապված սիրո-կարոտով:

Արդյոք կարո՞ղ էր քո սուրբ,
Բնելված հոգին երազել,
Որ դառնալու ես մի օր
Քո հայրենիքը վսեմ,
Որ պիտի շուրջը բուրի
Սերն ու գգվաճքը մեր այս,
Եվ Չարենցը համրուրի
Քո շրջունքները մեռած...

Օ, վարդապետ անվետար,
Որ օրերում վրդովիչ
Զայնի հովիվ լոկ եղար
Զեռիդի սրինգ մի թովիչ,

Դու աղոյեքի փոխարեն
Զայն խնկեցիր միայն վեհ,
Դեպի երկինք, որ բյուրեն
Ծողովորիդ սիրտն էր մեծ...

Կիաղաղվի վերջապես
Խոնջած աճյունը քո հար—
Դարձած մոխիր կենաքեր,
Դարձած ավյուն, դարձած քար...
Հայրենացած՝ սրբացած՝
Կապրի հոգիդ հմայող՝
Դարձած ելնող երգի ձայն,
Եվ հայրենի դարձած հող...

Է Գ Ի Տ Ա Ֆ Ի Ա

Աստ' Կոմիտասն է հանգչում՝ իբրև հող ու աճյուն առհավես:
Սիրտ միխրացած, դարձած հող՝ երբեմնի անոյշ ձայնածին:
Ա՛յր մահացու՝ աշխարհում նա եղել է դպիր, վարդապետ:
Այր մշտածն՝ ձայնապետ—ձայների արքա—ձայնագիր:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

ՀԱՏՎԱԾ՝ «ԱՆԼՈՒԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ» ՊՈԵՄԻՑ

Դու ամենայն Հայոց երգի Վեհափառն ես,
Դու՝ մեր երգի Մելոդիպ Մաշտոց,
Գիրն ու տառն ես Հայոց երգի:

Հայոց երգի
Անծիր ներկի
Ե՛վ ակոսն ու խորունկ առն ես,
Ե՛վ մատընտիր սերմը նրա,
Ե՛վ խոստումը գալիք բերքի...

Եվ ծիրանի մեր այն ծառն ես,
Որ ինչքան էլ ճղակոտոր՝
Ծըտկվել է և բար տվել...

Եվ հայրենի այն ծիծառը,
Որ հավիտյան բոյն է դրել

Մեր հոգու մեջ,
Մեր կիսավեր ու դեռ կանգուն տաճար-
Աերի

Ու մեր երկնի գմբեթի տակ...
Դու՝ մեր տավիղ,

Եվ քո յարը
Մինչև անգամ և հատվելիս
Հայերեն է նորից ճնգում:
Դու՝ մեր սրտի ձայնալարը,
Մինչև անգամ վհատվելիս
Հայերեն ես դարձյալ տնքում...

Դու ես բարը
Եվ սրբատաշ մեր պատշարը.
Հացը օրվա
Եվ նեղ ժամի մեր պաշարը.
Մեր փակ հոգին, բաց աշխարհը,
Սրբագրոված մեր նշանարը.
Եվ մեր նարը՝

Օտարամուտ ախտի դիմաց.
Խնկածավալ մեր տաճարը՝
Օտարամուտ աղտի դիմաց.
Վերադարձի մեր պատճառը՝
Մեր հարկադիր գաղթի դիմաց.
Համահավաք մեր հանճարը՝
Ազգաւրիյուտ բախտի դիմաց...

Դու մեր հաստատ Մասիս սարը՝
Վատահեղի թիկունքն ես մեր,
Մեր երգերի ծովասարը
Ու բյուրական ակունքն ես մեր,
Մեր արևոտված հավքի լեզուն,
Մեր կարոտած ֆիդան յարը,
Մեր լեկիլեցուն հոգիների ձայնատարը,
Մեր երգերի խա՛զը-նոտա՛ն-ձայնատարը.
Զայնասրկիյուղ կենդանի
Ու ձայների թանգարա՛նը,—
Մեր հայկական երգարա՛նը...

Եվ մեզանից արդ ընդունիր
Երախտիքի այս խաչըուը,
Այս խաչըուը՝ քո իսկ հերկի:

Ընդունիր դու, դու՝ մեր երգի
Մշտահնչուն նվազարասի:
Ընդունիր դու՝ մեր ցարուցիր
Մասունքների հավաքարար.
Դու՝ խազերի մեր քերական,
Դու՝ հոգևոր մեր շարական.

Դու՝ սրբազան մի ավազան,
Որ մեր հոգին ախտահանեց,
Դու՝ բիբլիական մի գավազան,
Որ ուր դիպակ՝ աղբյուր համեց.
Դու մեր կարոտ ու մեր մորմոր,
Մեր տաղի քուրմ,
Մեր խաղի մոգ,
Մեր մշտահոնչ ու մշտարթուն,
Անոնելի զանգակատուն...

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

Կ Ո Մ Ի Տ Ա Ս

Նրա համար ես
Աղոթում եմ,
Մինչև լուսերը
Աղոթում են:

Եվ աստղերը, որոնք
Մշտարթուն են,
Իմ աղոթքի վրա
Մեղմ թարթում են:

Օգնիր նրան,—ասում եմ,—
Նա ցրտում է,
Նա արև է երազում,
Նա տրտում է...

Հեռու լուս իմ երկրից,
Մուտք վանդակում,
Մեռնո՞ւմ է նա աներգ
Ու բանդագուշ...

ԵՐԳ ԿՈՄԻՏԱՍԻՒՆ

Սիրոս քեզնով լեցուն է,
Սիրոս այնական,
Քո երգերը ցնծուն են
Նուրբ ու անտես:

Եվ արտերի՞ն ոսկեավոր,
Արահետներին,
Երգուն է երգըդ օրոր
Անցած օրերից:

Օրոր հանդին ու կալին,
Հասկերին օրոր,
Օրոր հոգնած մաճկալին
Օրո՞ր, օրո՞ր:


Օրոր և քեզ մեռավո՞ր,
Հեռավո՞ր իմ,
Օրորներին օրոր,
Երգիդ մտերիմ...

ԳԵՂԱՄ ՄԱՐՅԱՆ

Դ Ե Պ Ի Կ Ա Ռ Ա Փ Ո Ա Ր Ա Ն

Կոմիտասի հիշատակին

Այնտեղ էին նրանք... Վարուժանը խոհուն,
Միամանթոն՝ հայացքն ուղղած դեափի երեր,
Եվ ո՞վ գիտե արդյոք, արդյոք ի՞նչ էր խորհուն
Կոմիտասը՝ հոգում պահած բազում երգեր...



Նրանց տանում էին հեռու կառափնարան.
Լուս էր Վարուժանը, Սիամանյուն խոհուն,
Հայացքն ողղած դեպի երկինքը անսահման
Կանգնել էր Կոմիտաս ինչպես տաճարի պատ:

Չուլվել էր նա կարծես կապոյտ երեկոյին,
Ծովի պաղ հովերով մորուքն աղեծածան,
Նրա շորթերը պաղ արդեն երգում էին
Հայոց պատարագի հուզիչ «Տեր ողորմյան»:

Երգում էր նա... Եվ նորդ շիթերն արտասորի
Թափվում էին երգի հնչյունների նման,
Երգում էր նա... Եվ այդ հուսի, աղերսանքի
Մեղեղին էր հրա սփոփանքը միայն...

Երգում էր նա... Ծորուն հնչյունները երգի
Չուլվում էին ծովի մրմուճներին օդում.
Երգում էր նա... Ավին կանգնած ժողովրդի
Սրտից աղոթաձայն հառաջանք էր պոկում:

Նավը շարժվեց: Դանդաղ պոկվեց արդեն ափից,
Բոնած անհայտ ու մութ հեռունների ճամփան.
Ու տարածվում էր դեռ օդում աղերսալից
Հայոց պատարագի հուզիչ «Տեր ողորմյան»:

Եվ հեռացավ, կորավ ծովի մշուշներում,
Ու խավարին ձուլվեց հուսի «Տեր ողորմյան»:
Քամին հրա վերջին հնչյուններն էր բերում
Ծովի ցայտող ջրի պաղ շիթերի նման:

1948, 7, VII

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Կ Ո Ս Ի Տ Ա Ս Ի Ն

Քո երգերի մեջ գուրանի վար է,
Ծիրանի ծառ է ու խնկի ծառ,
Սիրավոր լոր է ու Սոնա յար է,
Թուխ այտի խալ է ու ծնկի ծալ:

Մոր լցված աչքը որդու գալուն է,
Ծեմքի քարին է զրկված հարկի,
Ամպու երկինք է, ձյունու գարուն է,
Կուց-կուց արուն է օրոր հավքի:

Կրակի բոցը դանդաղ մարում է,
Մեռնող սրտի պես թոյլ բարախում,
Եվ կրակի մոտ տխուր մայում է
Մատաղի գառը վանքի բակում...

Ծանր նստել ու հոնքը կախել է
Տանտիրոց տերը հոգաը խորին:
Արևի շողքը երդից կաթել է
Ու փշրվել է թռնի շորին:

Ծաշթողի պահ է, սուփրան փոած է,
Քրտնած գավաթ է, համեմ ու հաց:
Դեզի շվաքում երեխի լաց է,
Դեզին թիկնած է հարսը շիկնած...

Լուսեյակ գիշեր է, կալե կտոր է,
Կալե սափոր է, կալե գավաթ:
Լացող պրտի մեջ լավի սարսուն է,
Լավի կարոտ է, լավի հավատ...

Գաղթը մոտիկ է, բախտը հեռու է,
Հոգնած ճամփա է ու հոգնած ոտք:
Ցավի՝ անտակ, հովսը ցամաք առու է,
Խորքերը լաց են, լացը՝ աղոթք:

Այսպես է երգը... Երգը հնչում է,
Ու ներշնչվում են ցամաք ու ծով,
Մի բուն երգի մեջ ապրում, շնչում է
Անդարձ աշխարհն իր անցողարձով:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

ԲԵՅԹ ԿՈՍԻՏԱՆԻՆ

Աշխարհի ծովը մտած դու հայոց մրմունչի
գետ,—
Պանդուստին դու տուն բերող անուշ ծոփի
նայրենի տան...

Թե չծնվեր մեծ Կոմիտասն իմաստուն՝
Հայ ժողովորդն այսպան բարձր չէր լինի,
Թե չլիներ հայ ժողովորդն աշխարհում՝
Կոմիտասն էլ այսքան բաղցր չէր լինի:

ԵՐՎԱՆԴ ՊԱՐՍՈՒՄՅԱՆ

ԶԱՅՆԻ ՀՆՁՎՈՐ, ԿՈՄԻՏԱՆ...

Հայոց աշխարհի լեռներեն դաժան
Եվ դիվարնակ մըթին կիրճերեն,
Հայոց աշխարհի դաշտերեն ցրիվ,
Վարար գետերեն, լիճերեն բյուրեն,
Առասպելատիա սուրբը սևաքեմ
— Զեռքին՝ մագաղաթ, ակո՞ս հնգագիծ—
Անխոնչ տիտանի քայլերով կանցնի,
Կշրջի անվերջ և ամենուրեք,
Մատներով լուսեղ Զայներ կինձեն...:
Ու գուրգուրանքով հնձածն այդ շքեղ
Լայն մագաղաթին վլրա ակուված
Զուգահեռներուն մեջը կամքարեն՝
Որպես գալիքին բացվող գանձարան...:

Ծիրանի ծաղկին շշունչը մեղմիկ,
Եվ ալգեկութքի խինդը երգեցիկ:

Սիրտն ըրած մագնիս՝ սրտերեն Հայոց
Լուսին կրերե, որպես վերջին գանձ,
Սիրտերն անտոնի, դնդերներն անհայոց
Սիփանա քաջաց, հավատքն հարության,
Որ դարձած աղոթք—մարդեն Մարդ—
Աստծուն—
Կիսանի երկինք՝ որպես պատարագ...

Ծուրթին՝ պատարագ, սրտին՝ սերն հողին,
Զեռքերուն սեղմած մագաղաթն իր գանձ,
Հսկան ձայնաբաղ, հսկան Կոմիտաս
Կու գա հոն ծունկի հավերժաբենակ
Օշականցին դամբանին առջն,
Եվ իր լուսագիծ մագաղաթն անծալ
Կընծալե Անոր որպես տուրք արյան.
— Դուն Հայոց երկրի բարբառին տրվիր
Հավերժին տանող ոտքեր երկարյա,
Եվ այդ բարբառին թևերուն տրվին
Երկինքներ տանող խոյանքը Զայնի...

Առաքելակերպ Սուրբը սևազգեստ
— Զեռքին՝ մագաղաթ, ակո՞ս հնգագիծ—
Կիսանի ահա դաշտերուն ցրիվ...
Մատներով կախարդ՝ կինձեն՝ Զայներ...
Ծոինչը խոյին գուղձեր ցանցընող,
Բառաչը եղին լուծին ընտանի,
Ժրափիր ծիլին արևուն բացվող
Եվ կշոռվան ալիք ցորյանի ծովին,

ՎԱՀՐԱՄ ՍՈՒՅԱՆ

ՆԱԽԱՆՎԱԳ ՀԱՅԿԱԿԱՆ

Կոմիտաս հայոց,
Դուն կուտինացի
Երգի պատմահայր,
Դուն նվազախոս
Հայսմավորք տոսդի,
Հին փառքի տոմար,
Նոր ովսուի դաբիր,
Նարեկ ձայնագիր,
Դուն լուսավորիչ,
Կոմիտաս երգի:

Կոմիտաս հայոց,
Դուն վեղարավոր
Արվեստի հերոս,
Երգի թագավոր
Ամենայն Հայոց,

Դուն երգակըրոն,
Մեղեդի քարոզ,
Դուն հոգևոր ձոն,
Դուն մշխիթարիչ
Կոմիտաս երգի:

Կոմիտաս հայոց,
Նըլվագի փարոս,
Հայ երգի Մենտոր,
Քուրմ մըշակույթի,
Դուն սարկավագ Հոր
Վարդապետ որդի,
Խըրիմյանի սան,
Զայնի Հորդանան,
Երգի Մըկըրտիչ,
Կոմիտաս երգի...

1969

Ա.ՍՔԱՆԱԶ ԱԺԵՄՅԱՆ


ԿՈՄԻՏԱՍԻ ՊԱՏԿԵՐԻ ՄՈՏ

Թող լինի մասոնք, սրբություն սրբոց
Այս լուս պատկերը մեծ Կոմիտասի,
Թող նշխարք լինի, թող լինի նարեկ,
Մեր այրված սրտին պահպանիչ ասի:
Թող գարունը մեր ծաղկունքով լցվի
Երբեք ձյուն չանի,
Ծիրանի ծառը ամի, բարձրանա,
Առաս բար բռնի,
Թող որ անտոնին վարդագույն տուֆից
Մեկի փոխարեն հազար տուն շինի:

Կոունկը սիրով, հույսի թներով,
Հայրենակարոտ մեր եղբայրներին
Դեպի տուն բերի:
Թող ծիծեռնակը՝ մեր ծիծեռնակը,
Մտքի հոգևոր գանձերով լեցուն,
Լուս տաճարի կամարի մերքը
Հաստատ բույն հյուսի,
Որ հզորաթն նոր սերունդը մեր,
Պարզ երկնքի տակ ճախրի դեպի վեր,
Սիրո աստղիկին սրտի խոսք ասի:

1969 թ. քաղ. Երևան





ՀԱ - 13. 1947

ԽՈՀԵՐ ԿՈՄԻՏԱՍԱՎԱՐԴԱՊԵՏԻՑ

Հայ ժողովրդի զավակները. դուք կարդացեք Մովսես Խորենացի, Նոյիշե, Նարեկացի, Խաչատոր Աբրուլան, Շաֆֆի, Ալիշան, Պեշիկթաշյան և տեսեք, թե ով ենք մենք:

* * *

Այժմ հաճամանքները լավանում են, ժողովրդը պատկվել է և լորջ կերպով ուսման ետևից է գնում, որ միակ փրկությունն է մեր և ապագա կյանքի պատվանդանը:

* * *

Այսպիսի հաճամանքներում, երբ ավելի զորեղ զենք չունենք՝ քան մեր հին ու նոր եկեղեցուն ու աշխարհիկ և գիտական ու գեղարվեստական կարողությունները ցուցադրել, որ տեսնեն, թե իբր ողորմություն չէ որ խնդրում ենք, այլ իբր մարդկային զարգացման զորավայրն ազգ ենք հրապարակ ենում: Երանի թե սկզբեն այս զենքն առնենք. առանք մի զենք որ ավելի զորեղները փշեցին. քայլ մեր ունեցածը՝ անընկրծների և անխորտակելի է՝ հայու սիրուն ու հոգին է իբր զենք շաշում: Լավ է ոչ, քան երբեք: Մանավանդ, երբ հրապարակ է ելուն հայ հանճարը՝ հայ անձերի, կազմակերպիչների, երգողների, նվագողների և խոսդների ձեռքով արդեն զինաթափ են լինում ամեն նախապաշտությներ միանգամայն:

Մենք մեծ մասամբ գավառը կճանշնանք իր տգիտությունով և հետամնացությամբ: Բայց գավառը իմ աչքիս առօս կպատկերանա իբր սրբավայրը հայ գեղարվեստի հշխարժերու, իոն կտեսնեմ հայ երգը՝ հայ գեղուկին շրթներու վրա, հայ գոյրանը, հայ գելցուկը՝ իր արորին ու մամկալին հետ, ու քարերն անգամ նվիրականություն մը կը-թիշեցնեն: Այդ քարի բեկորներն են մեր հայրենիքը, իոն են շերտերը մեր գեղարվեստին և ոչ թե մայրաքաղաքներուն մեջ, որիկ մենք գավառը կդիտենք իբր խավարի վայր:

* * *

Մահվան արժանի է այն ժողովուրդը, որ զորիկ է գեղարվեստն, որովհետև ժողովուրդ մը՝ որ գեղարվեստ չունի, կնշանակէ թե զգալու կարողությունը չունի: Եվ ի՞նչ է ժողովուրդ մը՝ որ չի զգար:

* * *

Ինձ համար չկա որիշ երկինք՝ քան իմ ժողովրդի հարազատ հոգին:

* * *

Մեկ հասկացված անկեղծ ձայնը հազար ճառ կարծեն, որովհետև ճառը պետք է մար-

սև հասարակությունը, որ կարենա անկե սևունդ առնել, ինչ որ ժամանակներու գործ է. իսկ ձայնը վայրլյանի մեջ կթափանցե մարդուն կուրծքն ներս և այնուղե կթիմնե զգացման ու մտքի վառարան:

* * *

Հայոց լեզուն ունի իր հասուն հնչավորությունը, որին և համապատասխանող երաժշտություն:

* * *

Խեղին հայ ժողովուրդ, ազգ ես և ինքուտույն այնքան, որքան մյուսները. այդ ոչ կարող է մերքել: Ունին հասուն ուղեղ, կը դատեն: Ունին հասուն մարդարանական կազմ, որով կզատվին այլ ազգերեն ու անոնց կազմեն: Սակայն սիրոտ, որ զգացմանց աղբյուրն է, քուկդ չէ եղել. այլ, մի ինչ որ ասորա-բյուզանդական և հնդկապարսկական է եղել:

* * *

Վաղ պատանեկական օրերես մինչև այսօր, իմ հոգու հսկիչն է ան և իմ ուսուցիչը... Հոգվույս մեջ ամենօրյա արձագանքողը... Աշխատիլ, տքնիլ, պայքարել՝ միայն և միայն ժողովուրդին և մարդկության համար... Ես երբեք չեմ կարող ապրիլ առանց Արովյանի... Ուսանողության ատեն, երբ առաջին անգամ «Վերը Հայաստանին» կարդացի, հոգվույս մեջ այնպիսի ալեկոնություններ զգացի, որ երբեք չեմ մոռնար:

* * *

Հայ երաժշտությունը ոչ միայն մեղի ու տխուր չէ, այլ համակ ուժ է և կենդանություն ու իր մեջ կսնուցանե փիլիսոփայությունն իսկ, ոգին իսկ իր ցեղին, որովհետու երաժշտությունը ամենեն մաքուր հայելին է ցեղին, ամենեն հարազատն ու կենդանին անոր բոլոր արտահայտությանց մեջ—կենդանի,—որքան կենդանի է այդ ցեղը, ուժել,—որքան ուժեղ է իրեն ծնունդ տվող ժողովուրդը:

* * *

Գեղուկը բնության հարազատ զավակն է. ուստի ճաշակել է բնությունը բովանդակ հոգով ու սրտով: Իր երգերուն մեջ բնությունը կխոսի, որովհետու բնությունն է նախ իր մեջ խոսած: Իր սրտին մեջ բնության ծովը կհուզվի, վասն զի ինքն իսկ բնության ալիքներուն վրա կդեգերի: Իր երգերն իր

կյանքն են, զի իր ամբողջ կյանքը—իր երգերուն մեջ է ներշնչչած: Վերջապես, գեղջուկ երգերը տեսակ-տեսակ ասուն հայելիներ են, որոնք զատ-զատ, իրենց ծնունդ առած վայրերուն դիրքը, կիման, բնությունն ու կյանքը կանդադարձնեն:

* * *

Մեր փրկությունը կուելու կոփելու ենք Փերպուրի (Պետերբուրգի) պարհապնդերու դուներուն առաջ... չպետք է խարվենք Եվրոպայի զանազան խոսումնալից խարկանքներուն. իմանալու ենք և գործնական ճամփա բռնելու՝ ըստ իս առաջին քայլն է բոլոր բոլոր հայությանն ամփոփել ուսուի իշխանության տակ. երկրորդ քայլն է տընտեսական ու քարտյապես. զուս ազգային, առանց օտարին ու մեզ ամսարս գաղտփարներով առաջնորդվելու՝ զարգանա... Երրորդ քայլն արդեն ինքը ուսու հեղափոխությունն է, որ պիտի անե, ոչ թե մենք. իսկ մենք օգտվելու ենք այդ քայլեն:

* * *

Զմայլեցնող երգերը հայ ժողովրդին սեփականություններն են, ոչ թե իմ:

* * *

Հայ ժողովրդական երաժշտությունն ունի երկու գլխավոր ճյուղ՝ արևմտյան և արևելյան: Առաջինին եղանակները լայն են և բարդ, ճյուղ են և լուրջ, պայծառ են և եռանդուն. երկրորդին՝ սեղմ են և պարզ, աղքատ են և թեթև, դալուկ են և խաղաղ:

* * *

Մեր ժողովրդական և եկեղեցական եղանակները հավասար չափով չեն զարգացած: Առաջինները արտաքին քաղաքական պայմանների ազդեցության տակ ճնշվել, սեղմվել, ամփոփվել են, առանց կորցնելու իրենց խորությունը և արտահայտիչ ուժը: Իսկ երկրորդները, եկեղեցու անձնումների հովանու տակ աճել, ընդլայնվել և զարգացել են:

* * *

Ծինականն այն կախարդ վարպետն է, որ կարդում է հարազատորեն բնությունը, ստեղծում բազմաթերեն մտքեր, նոցա փշում իր հզոր ու պարզ շունչը, դրոշմում է իր բնավորության եկանուկ՝ ներքին և արտաքին լրիվ կյանքով և կնքում է բատերով ու եղանակով իր հարազատ զավակը՝ «Գութաներգը»:

* * *

Ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործը, գնացեք և սովորեցեք նրանից:

* * *

Պարն ամենահիմնական նշանակությունն ունեցող երկույթ մըն է. ամեն գեղարվեստ պարի մեջ կապարտվի: Իբրև շարժում պարը շատ կարևոր դեր ունի ապագա դպրոցական կյանքի գեղարվեստական շարժումի մեջ, վասնզի պետք է գիտնալ, թե ամեն գեղարվեստ,—ինչպես երաժշտություն, քանի դասկագործություն, ճարտարապետություն և այլն,—շարժում է: Ամեն կյանքի մեջ պար կա: Արդեն ամբողջ տիեզերքի կյանքը պար չէ:

* * *

Իրավ է, ես գտել եմ հայ հազերի բանալին և նոյնիսկ կարդում եմ պարզ գրվածքները, բայց դեռ վերջնակետին չեմ հասել, զի յորաքանչյուր խազի խորհրդավոր հմաստին բափանցելու համար, նոյնիսկ տասնյակ ձեռագրեր պրատելով, երբեմն ամիսներ են սահում... Թող հայ հասարակությունը ներդր, մանաւլանդ համբերող ինչի մինչև որ հնարավոր չափով, կատարելապես վերջացնեմ իմ տասնվեցամյակից ավելի տևող տաժանազին ուստմնասիրություններու: Հոյս ունին թե մոտիկ ապագայում, առանձին հատորներով, հասարակության սեփականություն պետք է դառնա:

* * *

Պատմությունը գրեթե լուս է, ոչինչ չէ հաղորդում հայոց եկեղեցական հին եղանակների, ինչպես և խազերի մասին:

Ավանդությունը հայոց եկեղեցական հին եղանակների գրությունը կամ կարգավորությունը, որ ամենայն հավանականությամբ գրեթի գրությունը շրջանի արդյունքն է, վերագրում է ս. Սահակին:

Ե դարում գրեթի գյուտը, ս. Գրքի թարգ-

մանությունը հոգևոր երգեր հառաջ բերին, հետզինեւուն զարգացավ եկեղեցական պաշտամունքն ու ժամերգությունը. հանդես եկան մի շարք եղջեւեր՝ հորինեցին շարականներ, ճառեր, ներքողներ, եկեղեցական, տերության և սրբոց տոների նշանակությունը ժողովրդին բացատրելու նպատակով: Այդ իսկ շարականները գլխավոր չարժանից եղան ուժն ձայն և երկու սանելի եղանակների հառաջ գալուն, ըստ Յայսմափորքի ս. Սահակի ձեռքով. պատասխան սաղմուերգությունը տեղի տվեց շարականի եղանակներին:

* * *

Շարականների բովանդակությունը շատ հարուստ է. արտահայտում են կրոնական գագամունք: Բովանդակության գլխավոր մասերն ա. Բավարի եկան մասը, բ. Քրիստոսի տօնօրինությունները, գ. եկեղեցու խորհրդները, դ. ս. Գրքից կտորներ, որոնք լուսարանում են Քրիստոսի տօնօրենությանց որևէ գաղափարը, և ե. սրբերը, որոնք նըւպատեցին քրիստոնեական ճշմարիտ լուս տարածման: Այսպիսի բազմակողմանի բշվանդակություն ունեցող բանաստեղծական մի ս. Գրքը, անշուշտ պետք է, որ ունենար և բազմապիսի եղանակ, համապատասխան կրոնական գագամունքին:


* * *

Ես պիտի հասնիմ իմ բուն նպատակին—մեր հայ ժողովրդական երաժշտության գանձերը դուրս պիտի բերեմ հայուննի ավերակներնեն....:

* * *

Ես տարիներու աշխատանքով շիներ եմ իմ ուղեգիծը, որին ընթացեր եմ մինչև ցարդ և պիտի ընթանամ ասկե ետքն ալ, որքան ատեն որ ուժ զգամ երակներու մեջ. ոչ մեկ խոշնդոտ չի կրնար կանցնել զիս իմ առաքելության մեջ. որուն նվիրականությանը համոզված եմ ես բոլոր սրտով:





ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ ՀԱՄԱՇԽԱՌԱՅԻՆ ՄԵԾ ԵՐԱԺԾՏԱԳԵՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Զեր հմտալից և խորիմաստ դասախոսությունների միջոցով խորունկ հայացք ծգել տվեցիք դեպի այն երաժշտությունը, որ մեզ համար ցարդ գրեթե փակ էր, և որ մեզ՝ արևմտյաններիս շատ բան ուսուցանել կառող է:

* * *

1899 թվի Բեղյինի միջազգային ընկերության սրահում Կոմիտասի կարդացած դասախոսությունը հայ հոգևոր և ժողովրդական երաժշտության մասին այսի մնա անմռունակի: Առաջին անգամ է, որ Բեղյինում այդպիսի մի դասախոսություն է կարդացվում և գոյց մինչև այժմ Փարիզի աշխարհական համադաշտուածում անգամ այսպիսի դասախոսություն չի կարդացվել:

Բեղյինի արքունական համալսարանի պրոֆեսոր, մեծ երաժշտագետ

O. Ֆլայշեր

* * *

Կոմիտասը աննման վարպետ է. նրա դաշնակումը աներևակայելի դժվար ու գունավոր է. նրա մեներգի ու խմբերգերի շարադրությունը անկարելի է գերազանցել:

Խմբավար, գերմանացի մեծ երաժշտագետ Ալուս Մելիխ

* * *

Երգի համաշխարհային տիտան է Կոմիտասը, բազմակողմանի երաժիշտ ու գիտական, այն բացառիկ դեմքերից, որոնք է-ական են կատարում իրենց ժողովորի հոգևոր կամքում: Խոսքերով չի կարելի

գնահատել այն, ինչ նա արեց նայ ժողովրդի համար... Այսօր մենք աղիք ունեցանք լսելու նրա խմբերգերը, որոնք ցնցեցին մեզ: Դրանք այնպիսի ամսագուտ գոհարներ են, վարպետության այնպիսի փայլով գրված, ունեն ազգային այնպիսի բուրմունք և մարդկային խորություն, որ կարող են ավետարան լինել ոչ միայն հայ, այլև բոյր ազգերի երաժշտների ու երաժշտասերների համար:

Կոմիտասի գործն անման է ոչ միայն նրա անկրկնելի երգերով, այլև իր սքանչելի արդյունքով, որ ժամանակակից հայ երաժշտությունն է: Եվ այսօր մենք հարգանքով ու սիրով, մեր ամրող երկրի երաժշտական մշակույթի կողմից, խոնարհում ենք մեր գլուխները Կոմիտասի աճունի առաջ:

**ՍՍՀՄ-ի Կոմպոզիտորների միության
քարտուղար Տիխոն Խոնճնիկով**

* * *

Կոմիտասը իր ժողովրդի իսկական հանճարն է. նրա անունը սրբություն է բոլոր մեծ ու փոքր ժողովորդների համար: Նրա իմաստուն և նուրբ, ուժեղ և երբեք չճացող, խոր, ինչպես իր ժողովրդի հոգին, ստեղծագործության բյուրեղյա մաքրությունը բարձր են գնահատում աշխարհի երաժշտները:

Կոմիտասի երաժշտությունը լավ գիտեր և սիրում էր իմ հայոց, որը նույնպես իր կյանքը նվիրեց մարիական ժողովրդի երաժշտական կուլտուրային:

Խոնարհվում են Կոմիտասի պայծառ հիշատակի առջև:

Մարիական ԽՍՀՄ-ի արվեստի վաստակավոր գործիչ, Կոմպոզիտոր
Անդրեյ Էշպայ



* * *

Առաջին խոսքերս Կոմիտասի մասին չըքմեղանքի բառեր պիտի լինեն: Մեծ ամթուվ խոստվանում եմ ...ծանոթ չէի նրա երկերի հետ ...ի՞նչ երգահան և ի՞նչ արտակարգ հայտնություն էր նա: Ես հավատում եմ հայ երաժշտության պազարին, որովհետև մի ազգ, որ ստեղծած է հայ երգը ...մի ժողովորդ, որ երաժշտական անցյալ է ունեցած, ապագայում աշխարհին պիտի ընծայէ մի շարք մեծ անուններ: Այդ անունների մեջ առաջինը կինը Կոմիտաս Վարդապետի անունը: Ընորիիվ հայր Կոմիտասի, օր. Մ. Բարպարանի և նրա երկու աշակերտների՝ պ. պ. Մուղունյանի և Շահ-Մուրադյանի՝ հայ երաժշտությունը անասելի ընդունելություն գտավ համագումարում: Այս եղավ 1914 թ. հունիս-հուլիս ամիսներին: Հայր Կոմիտասը գրավել էր ամբողջ համագումարի ուշադրությունը իր դասախոսություններով հայ երաժշտության մասին, ներկայացնելով նրա տեսական ձայն առ ձայն ոճի բեղմնավորումը, որ նա գրել էր հին հայկական նոտագրության մեջ և իր երգահանուններով:

Փարիզի ժամանակակից երաժշտական կյանքի մեջ նրա հաջողությունը ամենացայտունը եղավ: Այդ օրերի թերթերը և ամսագրերը, թե Ֆրանսիայի, և թե օտար երկրների, վկա են նրա աննախընթաց հաջողություններին: Համեստ Կոմիտաս Վարդապետը հրճվում էր ոչ այնքան իր հաջողության, այլ հայ երաժշտության փառարանության համար: Նա խորին գործնակությամբ տեսնում էր, որ իր սովորմիկ երաժշտությունը՝ իր նվիրական երշանկությունը, ամբողջ համագումարի համակրությունը և սերն էր զարթեցրել:

Պրոֆ. Թ. Հարթման

* * *

Ես երաժշտական անավիզի եմ ներարկել Կոմիտասի ստեղծագործությունները և եկել եմ այն եզրակացության, որ Կոմիտասը հրոշակավոր արվեստագետ է: Ոչ միայն հայերը, այլ ողջ երաժշտական աշխարհը կարող է հապարտությամբ արտասանել այդ անունը:

Պրոֆ. Լախ

* * *

Ոչ ոք ինձ չի կարող մեղադրել չափազանցության մեջ, եթե ես ասեմ, որ այդ համերգը (1906 թ. Փարիզ) մի հեղաշրջում էր և իր հայտնությամբ զարմացրեց մեզ: Ներկա եղողներից ոչ ոք, ի բացառյալ նորը գիտակներից, իրեն պատկերացնել չի կա-

րող այդ արվեստի գեղեցկությունը, որն ըստ էության ոչ եվրոպական է, ոչ արևելյան, բայց եզակի է իր տեսակի մեջ: Սքանչելի քաղցրակունչ, խորապես հոգական, չափավոր քննուց այդ մեղեդիները նրբակերտ են ու ավարտված: Ծկուն ու կենդանի ութմերի առառողջամբ հարուստ երաժշտություն է դա՝ կարծեք հենց սրբի խորքից հուսիսի լինի, որպես սառնորակ, վճիռ, արևշտու հոսանք: Նրա մեջ փայլատակում է արեգակը, սակայն ոչ Արարիայի և Պարսկաստանի կիզող արեգակը, ավելի շուտ երկնային ուլեւիալ լույս է, որի շերմությունը փայլիքում, փաղաքում է ձյունածածկ լեռների գագաթը, անտառների կանաչ, առվանդների խոխոչը: Մարդկային հոգուն վիճակվել է իր ընդերքում պահպանելու այդ ժպանական երկրի հարազատ հողի մաքրությունը, նրա սերն ու հավատը դեպի լուսավորը, դեպի կանքը: Այդ պարզության անգնահատելի գանձարանը ...հոսել է մեզ անձեռնմխելի հիասքանչ երգի ձևով՝ որպես հոտավետ պայծառ ծաղիներ:

Սորբոնի համալսարանի պրոֆեսոր, ֆրանսիացի երաժշտական մեծ քըն-նադատ Լոի Լաղուա

* * *

Կոմիտասը առաջինը կարողացավ գտնել հայ երաժշտության նկարագրի միանգամայն հարմար դաշնակունը, որն այսուհետև հայտնվում է մեզ գերազանց քաղցրությամբ՝ հավասարապես երևան բերելով որոշ բանասեղծական և հայեցող բնություն, որ նրա գեղեցկության գարդերից մեկն է:

* * *

1914 թվի Փարիզի երաժշտական կոնգրեսում, որ հավաքվել էին աշխարհի գլխավոր երաժշտագետները, Կոմիտասը հայ ժողովրդական ու հոգևոր երգերից մի համերգ տվեց՝ հիացնելով ներկա եղող կոմպոզիտուրներին:

Ժողովրդական երաժշտությունը, ինչպես և արորի, խոփի, գութանի երգերի մասին տված նրա դասախոսությունները, պիտի ասեմ, համագումարի նիստերից ամենից թանկագիր եղան:

Եղր Կոմիտասը դաշնամուրի մոտ նստեց մեղմորեն երգելու հայկական երգ, ունիշնեղիք հասարակությունը քարացած մնացել էր լուս, և այսուղե տիրեց այն վեհապահն հմայքը, այն գերագույն պարզությունը, որ բխում է հայկական երաժշտությունից:

Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Ֆրեդերիկ Մակեր

* * *

Եթե Կոմիտասը գրեր միայն «Անտումին», այդ էլ բավական կլիներ նրան խոշոր արվեստագետ համարելու:

Ֆրանսիացի մեծ կոմպոզիտոր
Կ. Գերյոսի

* * *

Ես կզարմանամ Կոմիտասի արտակարգ ընդունակություններուն վրա: Խորապես թափանցելով ժողովրդական երգին էլույթան մեջ, ան այդ երգերը ներդաշնակած է հազվագյուտ ճաշակով և ճշգրտությամբ: Այն բոլոր երգերը, որոնք ես անձամբ լսած եմ ուղղակի իրեն և կամ ուստմնասիրած եմ, ամեն բանե առաջ կիաստեն, թե Կոմիտաս եղակի դեմք մըն է որպես ներդաշնակող և որպես պոլիֆոնիստ:

Ավատրիացի մեծ երաժշտագետ, Վիեննայի համալսարանի դասախոս, պրոֆ.
Վելեզ Էգոն

* * *

Զարմանում եմ, որ 25 տարի սրանից առաջ փոքրիկ Հայաստանը տվել է մի Կոմիտաս, որի ստեղծագործություններն իրենց գեղարվեստական կառուցվածքի և արժեքի տեսակետից հազիկ կարելի կլիներ սպասել Ռուսաստանի խոշոր կենտրոններում ապրող հոյն ժամանակի ամենահայտնի ուսուցչություններից:

Դուն մեծ կոմպոզիտոր Գևեսին

* * *

Լրանում է Կոմիտասի 100 տարին: Նրա ծառայությունները հայ երաժշտությանը հրակայական են: Նրա գեղեցիկ ստեղծագործությունները դուրս ենան իր հարազատ Հայաստանի սահմաններից: Դարձան համաշխարհային երաժշտական մշակույթի հպարտությունը: Կոմիտասը ոչ միայն մեծ կոմպոզիտոր է: Նա նաև ականավոր երաժշտագետ է, Բիանալի ազգագրագետ և այս բնագավառում նրա ծառայությունները դժվար է գերագնահատել:

Սովետական երաժշտները, երաժշտական երգերը, սովետական ժողովուրդը սրբությամբ են հարգում Կոմիտասի հիշատակը: Սովետակայ կոմպոզիտորներն իրենց ստեղծագործություններում հետևում են և կհետև վեն Կոմիտասի հիանալի ավանդություններին:

Նրա երաժշտությունը ապրում է և հավելք կապրի սովետական մեծ երաժշտության հետ:

Դմիտրի Շուտակովիչ

* * *

Կոմիտասի ստեղծագործության մասին խորիմաստ, ներշնչված և նրաշալի շատ խոսքեր են հասցեագրված: Ես չեմ ոգում առել, թե Կոմիտասը, որին շատ դժվարին կանք վիճակվեց, երշանիկ մարդ է: Դանալով պատմույթուն, նա շարունակում է մենալ այսօրվա մեջ, և ավելին, օրեցօր ավելի ու ավելի է խուժում վաղվա օրվա մեջ: Նրա կյանքի վերջին օրը դարձավ նրա անմահության օրը: Դա մեծ երշանկություն է, որ վիճակվում է քչերին, նրանց, ովքեր իրենց կենդանության օրոք կարողանում են մարմնավորել իրենց ժողովրդի կյանքը: Այդային է մեծ Կոմիտասը: Այն ամենը, ինչ նա արել է, իսկական արվեստի, մեծ մտքերի և խոր գացմունքների տիպար է: Կոմիտասի երաժշտության մեջ չկա ոչ մի ավելորդ հնչյուն, ոչ մի ավելորդ միտք և ոչ մի ավելորդ գացմունք: Սրանում է Կոմիտասի մեծությունը: Իսկ այդպիսի արվեստը սահմաններ չունի:

Դմիտրի Կորալևի
ՍՍՀՄ կոմպոզիտորների միության
վարչության քարտուղար, Սովետական Միության ժողովրդական
արտիստ

* * *

Կոմիտասը մեր ազգային երաժշտական դպրոցի հիմքն է: Ինձ թվում է, որ ոչ մի հայ կոմպոզիտոր չի կարող իր վրա չկրել Կոմիտասի բարեքեր ներգրածությունը: Կոմիտասի երաժշտությունը մի անային անառարտություն է, մի այնային վսեմաշորք լեզու, որ դժվար է այս կամ այն կերպ նրան չառնչվելը, նրա աղեցությունը չկրելը:

Ամեն մի հայ կոմպոզիտոր պետք է իմանա Կոմիտասի ստեղծագործությունները, պետք է խորին դրանց մասին: Ես միշտ եղել և գերված կմնամ Կոմիտասի երաժշտությամբ:

Արամ Խաչատրյան

«Խոներ Կոմիտաս վարդապետից» և «Կոմիտաս վարդապետը համաշխարհային մեծ երաժշտագետների գնահատմամբ» էջերը նավարեց և կազմեց Ա. Սահմակյանը:



Հ. Ամսարան

ՀՈՒՇԵՐ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ

Կոմիտասի հետ, 1897 թվականին սկսալի, երեք տարի շարունակաբար պաշտոնավարած էնք Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Եվ ապրելով նոյն սենյակին մեջ, ես մոտեն ճանչցա անոր նկարագրի գծերը:

Կոմիտաս մարդկային բացառիկ առաքի-նություններու ծով էր: Չափազանց աշխատակեր էր ան, անձնուն կամքի տեր, անկեղծ, քարենողի, մաքրակրոն և մեծ հայրենասեր: Բացի իր երաժշտական հանձնարեն, ան ուներ նաև բրվեստի շնորհներ—բանատղի էր և ճարտար կոմիտի (երգի-ծող) դերասան մը, որ Փարսի (զավեշտի) մեջ ալ մեզ հայտնի էր: Ահա թե ինչո՞ւ ան ճեմարանի մեծին ու փոքրին սիրելին էր դարձած:

Կոմիտաս բացառիկ ախորժելի ձայն մը ուներ, որուն համար Խրիմյան Հայրիկի մասնակի համակրությն էր արժանացած:

Հայրիկի կարգադրությամբ, ան կղեկավարեր վաճքի դպրաց դասը և պատահանատու էր նաև պատարագի՝ սուրբ խորաններ երգված սարկալատի բաժնին և Ավետարաններու ընթերցման կանոնավորության:

Անգամ մը ս. Սարգսի տոնին, եկեղեցին ավարտելն վերջ, Հայրիկը ուզեց Կոմիտասին անձամբ հայտնել իր շնորհակալությունը օրվան եկեղեցական երգեցողության լավ կազմակերպման և Կոմիտասի այնքան բաղցը երգելուն համար: Եվ Հայրիկը շուտով Կոմիտասը կանչել տվալ մոտը: Անշուշտ,

մեծ էր կայթողիկոսի հրամանը: Ճեմարանի ուսուցիչ և ուսանող աշ ու ձախ ընկամբք բայց Կոմիտասը չգտանք:

Այդ օրը, ս. Գեղրդի տաճախմբության ստիլ, վաճքի և շրջապատի մեջ հատվագլեց էին Հայաստանի շրջաններներ տաւուակ հազարավոր լուստալորտ որոնք ավանդական սովորության համաձայն մատադի սեղաններ բացած, կզվարծանային: Դեռ զուտնայի երաժշտությունը լիեցներ օդը: Ծովով լուսական երգն ու պարը մժնողորտ մը կստեղծեին:

Կոմիտասի անհայտանալու լուրը հասավ Վեհի ականջը:

Ուշ երեկո էր, երբ Կոմիտասը, ճեմարանի կողունակ իշնելով, մտավ սենյակ և ուրախության բացագանչություններով ցոյց տվավ այդ օր իր հավաքած ժողովրդական երգերն ու պարերգերը, որոնք ձայնագրած էր հավական ձայնամիջներով: Երբ քիչ վերջը վեհական Հայրիկի քով գացինք, վրդոված գուանք գինքը: Կոմիտաս ծունկի եկավ անոր առջև և Նշը առնելով ըսավ. «Եթե Վեհի ցանկանա, մեղքերս շատ շուտ կրավեմ, մինա իսկ երգելով պսօր իմ հավաքած ժողովրդական երգերնեն»: Եվ Խրիմյան Հայրիկի երդողամիտ հայացքին տակ, Կոմիտաս երգեց իր ձայնագրած ժողովրդական երգերնեն՝ մեծ հաճույք պատճառելով Վեհափառին: Այդ անմոռանայի օրեն վերջ, Խրիմյան Հայրիկի հրամանով ամեն տաղավարի հետ պատարագի Կոմիտաս ազատ կշրջներ

ժողովուրդին մեջ, ծառապելով իր նպատակին:

Կոմիտաս մեծ ընթերցասեր մըն էր: Հայերեն լեզուն՝ աշխարհաբար և գրաբար, ուղեկ գիտեր, կիետաքրքրվեր ժամանակի լուլագույն հայ ամսաթերթերով և մասնակիորապես կկարդար Սովոր Խորենացին, Նարեկացին, Եղիշեն, Արովյանի «Վերք Հայատաձի»-ն և զանոնք հայ ժողովուրդի «մասութեան»-ը կանվաներ: Կպատմեր, որ

զատորեն շնորհինակելու բացահիկ շնորհը ուներ: Ծեմարանի մեր մտերիմ հայլաքոյաներուն որքան համեմ էր մեզ, եթե մեր խնդրանքին վրա, իր ծննդավայրեն տրված պարերը թե՛ կերգեր, թե՛ կապարեր, և մենք ծափերով կովորեինք իր մատներուն շրիկ-շրիկուները իր բազմածն ճնշումներուն մեջ: Տղամարդոց հայտնի հայկական ժողովրդական պարերեն առհավետ անմոռան-վիկմնա «շորոյ» խիզախ ու խրոխտ պարը,



Սողոմոն սարկավագը (Կոմիտաս վարդապետ) ճեմարանական իր դասընկերների մետ

իր ուսանողական տարիներեն ինք ընտրած էր իր կյանքի ուղին: Ան հաճախ կըսեր. «Միայն երգի մը ըլլալ և չոր երաժշտական մասնագիտությունը չի բավարարեր զիս», — և վատահ շեշտով մը կավեցներ, — «Ես պիտի հասնիմ իմ բուն նպատակին՝ հայկական երաժշտության գանձերը դորս պիտի թեքնէ հնայրենի ավերակներեն...»: Հայկական ժողովրդական բանահյուսայիշան մասնակիոր ժամեր կորամադրեր և հարյուրավոր նմուշներ հավաքած էր:

Կոմիտաս բացատար էր իր առողջության: Ան կսիրեր վաղ արշալուսին և երեկոյան արևմտի ժամանակ դաշտային պաշտպոնները և կըսեր. «Ես սակավ ուսուեիքով! Կապում, քայլ առանց մաքուր օգ ծծելո՞ւ քը բե՛ք»: Կոմիտաս թշնանդիր էր մաքրության. իր թխորակ ինձմքը, ու մագերը մաքրության

որ սուրբ ձեռքին ծանր ճնշումներով և մարտական ճներով կպարեր: Նովսպես շինական կիներու պարերգները, որոնք կարուեր իրենց ձայնի հարազատ ելաւ շներով և մարմին ու ձեռքի նորին արտահայտություններով, հավետ անմոռանալի կմնան:

Կոմիտաս հոգատար էր իր առողջության: Ան կսիրեր վաղ արշալուսին և երեկոյան արևմտի ժամանակ դաշտային պաշտպոնները և կըսեր. «Ես սակավ ուսուեիքով! Կապում, քայլ առանց մաքուր օգ ծծելո՞ւ քը բե՛ք»: Կոմիտաս թշնանդիր էր մաքրության. իր թխորակ ինձմքը, ու մագերը մաքրության

մեջ կփայլեին: Մեծ խնամք կտաներ իր հսկուատներուն մաքրության: Հաճախ երբ միասին դաշտային պտղուններն կվերադառնայինք, մինչև որ սառնորակ շուրերով չլվացվեր՝ չեր հանգստանար:

Կոմիտասի ամենասիրած գյուղերեն մեկը էր Քանաքեռը. թէ՛ Արովյանի տնակը, թէ՛ գյուղեն դիտված հայրենի ամենորիզոն տարածությունները կոգնորեին իր երգելու տրամադրությունները: Ես այնքան հափշ-

տնակը: Այդ օրը սովորականնեն ավելի երկար տևեց մեր ճամփորդությունը: Կոմիտաս հանկարծական որոշեց միացյալ տժերով դաշտային ծաղկեներեն փունչ մը կուպմել և նվիրե ի հիշատակ Արովյանին: Որքա՞ն անմոռանալի էր անոր ոգևորությունը, երբ երեխայի մը պես կթոշկուեր աչ ու ձախ դաշտային արահետներու երկալմակին, ամեն մեկ նոր ծաղիկի մը տեսքին իր ողոր ձայնով ինձ ալ իր մոտ կանչելով: Կեսօրին



Գևորգյան Շեմարանի դասախոսական կազմից մի խումբ՝ իրենց ընտանիքներով (1902 թ.)

տակված էի իր քաղցրածայն նրգերեն, «րերեք չէի մերժեր միասին Քանաքեռ երթալ, հակառակ անոր, որ ես իրեն պես մղոնենք քայլելու համար տոկուն ու աւուզ չէի: Այդպիսի օրեր, ներշնչվելով, անվեռջ կերգեր և հայրենի բնության դիմաց բանաստեղծություններ կհորիներ և երբ իր բանաստեղծական շնորհիքը կգովեի, ինչդիմքը կմեջներ և իր կոշտ ծիծաղի խրոխտ ձայնը կարձագանքեր մեր շուրջը:»

Անգամ մը, գարնանային արևածագին հետ Շեմարաննեն ճամփա եղանակ դեպի Քանաքեռ, այցելելու Խաչատոր Արովյանի

հասանք Արովյանի տնակը: Լուությունը հսկատարած էր այնանունը: Կոմիտաս մեր միացյալ փունջերը գորգուրանքով տեղափորեց տնակի պատուհանին առջև: Խնչպես միշտ, նորեն շրջեցանք տնակին բոլորտիքը, նը ւտանք անոր մուտքի սանուուղքներուն վրա և մեր խոհերուն հետ նախաճաշեցինք: Ինմիտասի փափագով բարձրացանք անսակի կտորը: Գարնանային զարթոնքը զարթարել էր անոր անմահությունը: Թոշուններու երամակներ կճովողեին մեր շուրջը: Կոմիտաս իր ապրումներու ամենաջերմ հուզումով երգեց «Ո՛վ մեծասքանչ դու լեզու»-ն...»

Անոր հզոր ձայնը արձագանքեց ամեն կողմէ: Մեր վերադարձին դրու ու դրացի, նեղլիկ փողոցներու տնակներու շենքերուն առջն հավաքված, իրարու կրացարերին սեղր էջմիածնի վաճքին ձայնել Կոմիտասը ըլլիւլը:

Աշնանային օր մըն ալ Քանաքեռի բարձութին նստած կիխանայինք մեր առջև պարզված բնության տեսարաններու վրա: Հանկարծ մնտակա ծորեա աղջկան մը գեղջուկ մեկ երգին ձայնը առինք: Կոմիտաս, ըստ իր առվորության, գրասենքն թույլի կտրու մը և մատիտ մը հանեց և սկսավ հայկական ձայնանիշերով նոտագրել:

Երեկոյան մեր ճեմարան վերադարձին ընթարքին ժամն էր, և մեր օրվան երկար ճամփորդութենեն վերջ անդիմադրելիուրեն սրված էր մեր ախորժակը: Բայց ի՞նչ զարմանք. Կոմիտաս տեսրակ մը բերելու, սկսավ իր ձայնագրած երգը մաքուրի տանել: Երբ առաջարկեցի իրեն ճաշն և հետո աշխատիլ, ան պատասխանեց. «Մինչև մարտի շաբաթ երգի եկացները, փշրաւը մըն ալ կոկորդես վար չերթար»: Ես այդ օրու հասկցա, որ Կոմիտաս սովորական մահկանացու մը չեմ:

Կոմիտաս օր մը ինձի ըսավ. «Հայկակա: Դ-ւ-ն հատ հազ կա: Ես կկարծեն, որ հայու ձայնաշարը քանի մը ձայն կպարունակա իր մեջ»: Եղ որախությամբ վրա բերաւ. «Ես գաղտնիքը գտեր եմ...»:

Օր մը Կոմիտասին հարցուցի, թե ինչո՞ն հայկական ձայնանիշերով կգրեր: Ան պատասխանեց. «Եվրոպական հինգ գծաւոր թույլ հանապատրաստից ես որդեռ՝ գտնեմ: իսկ հայկական ձայնանիշերը որնէ թույլի վրա անմիջապես կգրեմ...»:

Օր մը Կոմիտաս ինձ պղասկան շարքիներ երգել տվակ և ծոցատերին մնչ սկսավ գրել:

—Հայր սուրբ, —ըսի անոր, —եվրոպա: իները արհմամարհանքով կլեն այս շարզիները և կծաղըն:

—Աւոնք հիանալի եղանակներ են և ատոնց ծնոնեն տվողները հանձարներ են, —պատասխանեց Կոմիտաս:

Կոմիտաս Հակոբ Պարոնյանի երգիծարանական արվեստը այնքան կսիրեր, որ անոր գործերն շատերը անգիր գիւնը:

Կոմիտաս և ես կոմիզմի (երգիծանը) վարպետներ ըկատված էինք: Մեր ուսուցչական հանգատի ժամանուն ճեմարանի մեր ընկերներն կիմուրվեինք: Երբեմն ան և աւ

ոգևորվելով, Պաղտասար աղբարի դատաստանական ժողովը կներկայացնեինք, և վերջիվերջո, բռվ-բռվի, մեր քայլերը համաշափ նետելով, պոտալով դրսնեն ներա կոմիտեինք...:

Կոմիտաս օր մը օպերետա մը գրեց Հ ս. կոր Պարոնյանի «Քաղաքավարության Վրանաներ»-են և աշակերտներուն սրվեցու Ներկայացումը անհաջող անցավ և վար տպավորություն թողուց: Այս եղավ առաջինը և վերջինը:

Կոմիտաս սովորություն ուներ առաջ քարձի կարծի թախտի մը վրա քնանալու, մարմինը ուղիղ վիճակի մեջ պահելով:

Երեք տարվան մեջ անգամ մը միայն տեսա Կոմիտասի կատաղի զայրուցքը: Ենամարանի ցած պատշգամին մեջ Կոմիտասն ու ես մտերմորեն կիսունիքը: Մեզմն քիզ և անդին ուսանողները հավաքված կերպեին իրարմէ ես ու առաջ, ցած ու քարձ մաշներով: Այդ բոպեին, առաջին անգամը ըլլալով, ես դիտեցի անոր կատաղի բարկությունը: Մինչև օրս չեմ մոռնար ջղալութեցն անոր վզի երակներուն մատնաշուփ ցցվիլը:

Իմացեր եմ, որ 1906-ին Փարիզի մեջ՝ Կոմիտասի ցուցադրական մեկ համերգեան վեճուց, ֆրանսացի հայտնի կոմպոզիտոր, դաշտակահար Կլո Ներուսին ծունկի գալու կիմորութեան Կոմիտասի ձեռքերը, ըսելով. «Հունարեկ հայր Կոմիտաս, Ձեր երաժշտական առաջնարի առջև կիսունարիմ...»:

Կոմիտասի ձայնը մեծ դիապազոն ուներ: Բերլինի գտնված միջոցին հայ ժողովութական երգերը անձնապես ցուցադրած եւս. մերգեն վերջ, բեղինի օպերայի տօնուներ անձամբ կիրավիրն զինքը իրեւ օպերայի գլխավոր երգի և կիսունանա բացարկի վճարում: Կոմիտաս կպատասխանե անոր: «Եմ երգի կարողությունները մեկ հապատակի միայն պիտի ծառայեն—ժողովորդիս երգն ու երաժշտությունը ծանոթացնել երաժշտական աշխարհին»:

1899-ին Կոմիտաս Էջմիածնեն արտ սահման երթալու ատեն, իրմէ խնդրեցի, որ «Բաց համակ» հավաքածոյիս համար, անցած բոլոր տեղերն պատկերագրդ բացիներ ուղարկեր: Կոմիտաս հարգեց իր խոստումը. 7 հատ պատկերագրդ բաց համակ ուղարկեց: 7-րդ բացիկը մեր սիրաշերմ ընկերական թղթակցության վերջին հիշատակը եղավ:

ԱՎ. ԽՍԱՀԱԿՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՄԱՀ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Կոմիտասը ինձ ժամանակակից մարդ է ո. «Եղբայր Սողոմոնը», ինչպես կոչում էինք նրան Գևորգյան ճեմարանում. տափներ ապրել ենք նոյն հարկի տակ. խոսել, կատակել: Ծամփորդել ենք միասին հայ գյուղներն ու ուստատեղիները (Սևան, Հառիճ), որ նա երգեր էր հավաքում: Եղել ենք միասին

դարս: Նա հիմն է դրել ազգային երաժշտական կուլտուրայի:

Մարդիկ կային, հայեր և օտարեր, որոնք պնդում էին, թե հայ ժողովորդը, ազգային երաժշտություն չունի, թե նրա երգը նմանողություն է եվրոպականին, թրքականին. քրդականին...



Ճեմարանի սաները մի խումբ դասախոսներով Ներսիսյան անտառում

Եվրոպայում, Ստամբուլում, բայց այս ամենը թվում է ինձ ո՞չ իրական: Կոմիտասը ինձ համար հիմն լեզեմ է, հեռավոր առասպեկտ, և նրա կյանքը ու փառապանծ գործը մի շքեաղ հրաշապատում:

Կոմիտասը մեր ժողովրդի հպարտությունն է. նրա գործը՝ մեր ազգային անսպառ հարցասությունը:

...Նա հայտնագործել է մեր ազգային երգը, հայկական երաժշտությունը, ազգային մելուս՝ ինքնուրուց, ինքնատիպ և անս-

Կոմիտասը անխոնջ աշխատությամբ, իր հանճարի ուժով, իր զարմանալի ինտուիցիայի շնորհիվ, նաև իր տեսական լուրջ պատրաստությամբ ապացուցեց հակառակը, ապացուցեց հայ երաժշտության ինքնուրույն գոյությունը՝ բխած հայ ժողովրդի ուղղությունը և դարերի միջով մեզ հասած: Նա դիմեց հայ երգի ակունքին՝ հայ շինալիսին, գեղջուկի, աշխատավորի երգին. Արայիան դաշտի, Շիրակի, Վանի, Մոշի ժողովրդական երգերին: Նա ուզեց հայկական

երկի բնության մեջ, հայ գեղուկի շրջանը՝ նը-
ներից լսել հայ եղանակներն ու երգի խոս-
քերը:

Նա խառնվեց այդ երգերը ստեղծող ժողո-
վը ողողի մետ, ներձուվեց նրա մետ, ներապի-
րեց նրա երգերը և սրտով հասկացավ, որ
հայ երգի ոճը թաքնված է ժողովրդի այդ եր-
գերի մեջ, միայն պետք է մաքրել այդ եր-
գերը օստարամուտ ժանգից ու անտեղի զար-
դերից, որոնք աղարտել էին հայ երգը: Եվ
ցույց տվեց աշխարհին մեր ազգային երգը՝
մաքրված, հեքանուրույն և անաղարտ:

...Ուր որ հայ կա, այնտեղ է և Կոմիտասի
երգը: Կոմիտասը համազգային մեծություն-
է: Նրա երգով մեր ժողովուրդը ավելի գի-
տակցարար զգաց իրեն, ավելի կապվեց ի-
րար մետ, ինքնաճանաչեց: Հայ համարա-
կությունը զգաց աշխատավոր ժողովրդի
վիշտն ու հրճանքը, նրա աշխատանքի
պաֆուր, նրա սերը դեպի իր հայրենի բնու-
թութը:

Կոմիտասը հայ երգով լույս աշխարհ հա-
նեց դարերի խավարի մեջ կեղեքված ժողո-
վը իր հույս բողոքն ու ցանումը բռնության,
ստրկության դեմ. նրա խեղդված վիշտը. ի-
րավագործկ կյաճը և պայծառ ապագայի
հանդեպ տածած հավատը:

Կոմիտասը զոհն եղավ թուրք պետության
քարարուսության. նա տեսավ հայ ժողովուր-
դի՝ կանանց, երեխաների, ծերերի, աշխա-

տավորների և մտավորականների երթը դե-
պի մահ, դեպի գերեզման: Բոլորը, բարորը
անցան նրա մեծ, խորազգաց՝ սրտի միջուկ,
և նա խորտակվեց, ջախջախավեց:

Անհունորեն մեծ է մեր վիշտը, մեր լո-
րուսը. ինչքան գանձեր նա տարավ իր
մետ... Նա կարող էր այսօր մեզ մետ լինել,
մեր ազատագրված հայրենիքում, որ ինչ-
քան գործ ուներ կատարելու, ի՞նչ հրճանա-
քով պիտի տեսներ մեր երածշտական նոր
սերներին, որը Կոմիտասի պաշտամունքը
ունի:

Սիրելի՝ Կոմիտաս, այսօր և միշտ դու
մեզ մետ ես քո շքել երգերով, քո բարձր
արվեստով, պատմական սիրայի գործով:
Դու անմահ ես, ինչքան ժամանակ, որ նևու
ժողովուրդը կապի, կապի՞ և քո երգը-
Բայց դու հոգնել ես շատ, սիրելի Կոմիտաս,
տառապել ես շատ, զարհուրանքներ են
կրել, վայրագ թշնամու տորմ ես տեսնել,
հանգատացիր հիմա, մայրենի հարազար
հողի գրկումն ես հիմա: Բու սիրած Արու-
րայտան դաշտի բարումնալից երգը ծավալ-
վում է քո շուրջը, քո երգերը ծփում են քո
վրա, քո երգերի մետ ծփում են աշխատան-
քի և ազատության նոր, հաղթական կորուի
երգերը...

Հանգչի՛ր խաղաղ, սիրելի՝, նվիրական
Կոմիտաս...

1949

Ա. ՄԱՆԱՌԹԱՆ

ՀՈՒՅԵՐ

Առանձնապես եղբայր՝ Հակոբ Մանանդ-
յանը, շատ մոտ էր Կոմիտաս վարդապե-
տին, որը համարյա ամեն օր երեխները
գալիս է եղել եղբորս և մայրիկիս տեսնե-
լու:

Էջմիածնում եղբայրս մնաց հինգ տարի՝
1900 թվականի հունվարի սկզբներից մինչև
1904/1905 ուսումնական տարվա վերջը:

Կոմիտասը շատ բարի, բարձր զարգաց-
ման և բացառիկ նորոր բնավորության տեր
և չափազանց զգալիուն մարդ էր: Նա հենց
առաջին ծանոթությունից այնքան հնայի,
տպավորություն էր թողնում, որ երեք չեղ
կարելի մոռանալ: Էջմիածնում բոլորը նրան
սիրում էին:

Հատկապես ինձ համար անմոռանալի են
իմ հանդիպումները Կոմիտասի մետ:

Ամսուլա արձակուրդներին, Էջմիածնում
իմ եղած ժամանակը, երբ Կոմիտասը ինձ

հանդիպում էր, տանում էր իր համեստ կա-
հավորված խուզը, հստում էր իր դաշնա-
մուրի առաջը և ինձ ստիպում էր երգել
Ախալցխայի ժողովրդական երգերը ու ինքը
ձայնագրում էր: Նա ուներ շատ նորք լո-
ղություն և մեկ անգամ լսելով, նա իսկովն
նվագում և մեծ ճշտությամբ ձայնագրում էր:


Իմ հիշողության մեջ տպավորվել է նաև
մեծ երածշտի դասախոսությունը, որը ես
լսել եմ Տփղիսում 1900-ական թվականների
սկզբներին: Կոմիտասը մի շատ հետաքր-
քիր դասախոսություն կարդաց հայկական
երածշտության և այն ազդեցությունների
մասին, որ հայ երածշտության վրա ունեցել
են Մերձավոր Արևելյան հարևան ժողովուրդ-
ների երածշտական մոտիվները: Ի միշի պ-
լուց, նա իր դասախոսության ընթացքում
ցույց տվեց իր կատարելագործված երա-
ծշտական գործիքը, որով ինքը նվագեց և

մեծ տպավորություն թողեց Աերկա եղողների վրա: Այդ գործիքը սովորական սրինգն էր, որի վրա ինքը արտասահմանում հարմարեցնել էր տվել «կրապան»-ներ և կարողանում էր տալ կիսաձայն նոտաներ:

Իր ունեցած միջողություններից բույրուատմում է, որ Հջմիածնում, երբ Կոմիտասը գալիս է եղել մեր սունը, թե՛ մայրիկս և թե՛ բույրիկս խնդրելիս են եղել, որ երգի: Նա սովորաբար չի մերժել, սակայն կատակով լորաքանչյուր երգի համար պահանջել է տալ երկու կոպեկ, ասելով՝ «Երկու կոպեկ սուր, երգեմ»: Երբ հրան հարցնելիս են ե-

ղել, թե ինչ է անելու այդ կոպեկները, առ պատասխանել է, որ երբ այդ կոպեկներից մի փոքր գումար հավաքվի, առ առից գնալու է արտասահման: Ինձ համար հատկապես անմոռամալի է Կոմիտասի երգած Լուսա հոռովելը: Իր երգերի թվում նա վերջին տարիները մեր տանը հաճախ երգելիս է եղել առանձին կտորներ իր սկսած «Անուշ» օվերայից: Քրոշ միջողության մեջ սովորվել էին Կոմիտասի «Անուշ»-ից երգած հատվածները, որ երգեմն նա վերիիշում և երգում էր:





ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՆՁԻ ԵՎ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

Անցլալ գիշեր սրահին մեջ երգելով ու բարբառելով, զվարճաքանելով, երթեմն այ միշտ հանկուցանելով՝ Հայաստան ուստագնացության տարիք զմեա. կամ լավ ևս է ըսել քիչ մը Հայաստան բերիք Եղիպատուի հայերուս... դուք Մասին ու Արագածը փոխադրեցիք հու պահ մը. ո՞վ ըսավ, թէ լեռները չեն քալեր...

Ի՞նչ հրաշարվեստ հուշարար մըն եք դուք նախնի ու արդի հայ գեղեցկությանը. լիահավատ սիրով, բոլորանվեր ջանքով հետևողութեր, որոներ, ի քնար վերակուեր եք մեր քաղցրադու, աստվածաշունչ մեղեղիներն ու օրիներգությունները, որոնց մեջեն մեր սուրբ նախնյաց հոգիները համբուրել տվիք մեզի: Հայ գեղոցով բանաստեղծության կողման գեղեցկությունը պաշտել տվիք մեզի:

Ո՞վ վարպետ, լվարդապետ, ի՞նչ բանի սկզի հիանամ ձեր մեջ, ձեր արվեստորոն ձայնի՞ն, թէ գերանուր արվեստի՞ն, պստարուն գիտությա՞նը, թէ բոցաշեշտ պետախտության. հրապուրիչ բանահոսի՞ն... Ձեր համերգը այգու՝ «հայատամք» նըն է հայ ցեղին բարձրագույն ընդունելությանց ու անոր անհուն կատարելականության:



Մեզմն ո՞վ պիտի կրնա մոռնալ երբեք հայրենիքի հոգեզվարճ այս տեսարանները,

Կոմիտաս վարդապետը մի խումբ գրողների և արվեստագետների մետ

զոր խոսքով ու երգով մեռապարզեցիւ մեր զմայլված աշքերուն առջն, վասնզի ձեր, երգը, վարպետ, ներդաշնակություն մըն է կատարյալ, գոյն ու պեսպիտություն ունի, խորություն ու մթնոլորտ ունի,—երկրին մթնոլորտը,—լուս ու ստվերներ ունի, և յաստանը մեր լսելորդ... տեսանք մենք:

ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԻԱԿԱՆ,

* * *

Կոմիտասի առաջին ու կարևորագույն գործը հայ երաժշտական ոճը վերատաշըլլալն է:

Կոմիտաս Վարդապետ եղավ առաջին հարազատ հայագույն դաշնակողը հայ երգին, և ատիկա իր կատարած գործին երկրորդ կարևոր կետն է:

Կոմիտաս Վարդապետ հայ երաժշտական ֆոլկլորի, նովմիսկ արևելյան ֆոլկլորի, բանակեր-հավաքիչ մըն ալ եղած և, բացի նոր հայ երաժշտության մը ուսիկիրացի իր մեծ դերեն:

Կոմիտաս արտակարգ երգիս էր, հայ երգին մեր օրով մեծագույն արտահայտչը:

Կոմիտաս եղավ հայ երաժշտության մեծ պրագանդիստը, առաջավը օտարեներուն մոտ և հայոց իսկ համար:

Կոմիտաս եղած է խանդավառ ռւսուցիչ մը և արտակարգ խումբ կազմող ու վարող մը:

Կոմիտասի ճոխ անձնավորության մեջ ամենակարևոր տեղերնեն մին կրոնե գիտուն ուսումնասիրողը:

Կոմիտաս, վերջապես, ստեղծագործ երաժիշտ էր և ոչ թե միմիայն հնավարող ու դաշնակող ինչպես ումանք կկարծեն:

Ա. ՀԵՂՊԻԿԱՅԱՆ



Կոմիտաս Վարդապետի դիմաքանդակը՝ հանված մահվան օրը՝ նկարիչ Հ. Ամենյանի ձեռքով

* * *

Տեսե՞լ եք նրան իր կյանքի ու զործի մեջ, լսե՞լ եք դոք երբեւ նրա երգեցիկ խօթի հսմերգը կամ իր՝ մեծ վարպետի մեներգը՝ «Մոկաց Միրզեն», «Միրուս նման էր» և նման ժողովրդական սրանչելի ստեղծագործությունների կատարումը—երկարաշունչ, թափանակի, բայց և թուղիչ, և հոգևորմալլ: Ով էլ որ լինեիր դու, չեր կարու գոնե առծամ կտրվել քո առօրյազից ու հոգով ու սրտով չտեղափոխվել այնտեղ, որ երկրագործ աշխատավորի հանճարն է երկնուղայի երգերը, որ բախտից հալածված դարին է չարքաշ իր օրը սգացել և կամ «տուռապյալ գեղջուկն» է իր հոգն ու վիշտը հնապաչել արորին ու գութանին կոթնած:

Մյուսն էր Կոմիտասը... Չնայեով, ո՞ր նրա սենյակը զարդարուն էր գորգերով ու նկարներով, բայց ինքն՝ արվեստագետն ապրում էր, կարելի է ասել, սպարտական կյանքով, ուտելու մեջ պարզ և չափավոր, չէր խմում ու չէր ծխում, քնում էր գարուն թե ձմեռ բաց պատուհանով և, որ զիմավորն էր, պառկում էր ուղղակի հատ մի վրա, առանց ներքնակի ու բարձի: Նորուգործության մեջ մաքրաւեր էր, գորս էր գեղեցիկ, իր իսկ տողած թղթերի վրա, այնպես, որ նրա ձեռագրերից կարելի էր ուղղակի կլիշեն պատրաստել:

Գ. ԼԵՎՈՆՅԱՆ

Կոմիտասը վեմն է հայ երաժշտության, միմնաքարը: Կոմիտասը այն իմաստուն ստեղծագործողն է, որ մեծապես հասկացալվ ժողովրդական աղբյուրների կենսալից ուժը և իր հյութը վերցրեց այնտեղից: Եվ այսոր Կոմիտասը այն երաժիշտը չէ, որին մենք սովորական «արժանավորների հարկը» մատուցանելու համար միայն հարգանքի խոսք ասենք: Այսօր արդեն պարզ է ամեն երաժշտի համար, որ մեր ժողովրդական երգի վորա միմնվոր նոր երաժշտությունը Կոմիտասից է սկսվում:

Այսպիսով Կոմիտասն այն երաժիշտը եղավ, որ իմաստնաքար և հեռատեսորեն վճռական շրջադարձով լծակը ուղղեց դեպի աշխատավոր ժողովրդի երգը իբրև մականակետ ապագա հայ երաժշտության:

Դ. ՂԵՄԻՐՃՅԱՆ

Կոմիտասը միայն հավաքող չէ. ազգագրական ժողովածուն նրան չի բավարարում և ո՞չ էլ գիտական պեղումներն են նրան հագեցնում: Նա հանդես է գալիս իբրև մի նոր, կենդանի երաժշտության միմնադիր, մենակած հենց իր հավաքած ժողովրդակարսան երգերի վրա:

Նրա այդ մեծ ու անզուգական գործը մնում է իբրև մի մոնումենտալ գործ համաշխարհային մասշտաբով...

ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆ



Կոմիտաս վարդապետի մահարձանը (Երևան)

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍԻ ՀԵՏ

Կոմիտասը, ինչ խոսք, ինչպես բոլոր հանճարները, իրական մարդ է եղել: Բայց եթե շատ իրական լիներ, ել ի՞նչ Կոմիտաս: Նա իր մեջ կրել է բնուրությունը: Նա մեր հուղն է, հողի հոտը, համը, մեր ջուրը, սարերի օդը... Նա այդ բոլորը բյուրեղացնում է երգով: Ինարկե, այստեղ խոսքերը կարևոր չեն: Կարևոր երգն է, նրա երգի մեջ նենց այդ հողն ու ջուրն են զգում: Ուրեմն նա որքան ճիշտ է զգացել մեր գարունը: Մեր ա-

մեն մի գարունը եղել է մոտե տեղն ընկ ած մարդու դեպի լուս գնալու ձգուում: Ինչպես են Կոմիտասի մոտ մերդաշնակվում մութն ու լուսը: Լուսի զգացումը շատ ուժեղ է նրա մոտ, երգերը՝ անսահման լուսավոր:

Սարերն իրենց երգն ունեն: Այդ երգը գեղեցիկ է, ուժեղ: Ամպերը որքան ծածկում են սարերը, այնքան գեղեցկանում և ուժեղանում է այդ երգը: Կոմիտասը բնություն

այդ երգն է ստեղծել, ոչ թե իր անձնական երգը:

Երկրի շոնչը դարերով, ժամանակենրութիւն է կուտակվում մարդու մեջ: Կոմիտասը այդ շնորհ մարմնացած էակ է, և նրա ուժը դրա մեջ է, այդտեղից էլ պետք է հասկանան նրան:

Կոմիտասը, անշուշտ, և ազգային է, և համամարդկային: Այդ երկուսը իրարից անշատել չի կարելի: Կոմիտասին մենք սպեիի ենք գզում, որովհետո մեր մեջ մեր երկրի ու գին ավելի հարազատ ենք գզում: Աշխարհը արդյոք ճանաչո՞ւմ է Կոմիտասին. ուսունահիրե՞լ է, լս՞ում է, ինչպես Բախին, Շումանին, Վերդիին...

Հավերս մեր անցած պատմությամբ ու մշակույթով նման ենք մի ճամփորդի, որը

շատ ճամփորդների նման, փոխանակ գնացրով գնալու, գնացքի հետ վազել է: Ու չեն ել մտածել, թե ինչո՞ւ պահ ճամփորդը եւս չի մնում: Լուսին գնալու, լուսին հասնելու ձգուում է աս: Ժողովուրդը հաստատուի է երկրագնդի մեծ օրենքը՝ միշտ արևի մեւ մնալու օրենքը:

Կոմիտասը այնպես է երգում, կարծես շոշափում է հողը: Կարծես երգողը իրալիս մարդ չէ: Նա Պատարագ է ստեղծել: Պատարագը մեր ժողովորդական ոգու խռացումն է: Մենք նեռ լրիվ չենք հասկանում Կոմիտասին: Նրա մեծությունը իր մեջ է: Նա հայտնաբերել է մեր երաժշտության այրութենքը: Մի օր էլ ինքը պիտի հայտնաբերվի իր բոլոր գաղտնիքներով:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԱՅԱՆ

ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԶՎԱՐԹՆՈՑԸ

Այս երգը, որ հնչում է մեր ականջին, մեզ է հասել ոչ թե մի քանի տասնակ տարիների հեռավորությունից, այլ դարերի խորքից: Հասել է ինչպես հազարամյակներ հողում թաղված կավե սափորն է պեղումներից հետո ենում արևերես, և կամ հնամիա որմնանկարն է դարերի պաղը քերելուց հետո՝ իր հրաշալի սկզբնապատկերով հայտնվում աշխարհին:


Հիմ է մեր երկիրը, ու մեր ժողովուրդն էլ հնուց ի վեր սիրել է կառուցել, ստեղծել, երգել: Սակայն ժամանակն ու այլազան ցեղերի արշավարձներն ու գրավումները քանի են ոչ միայն մեր մայրաքաղաքներն ու տաճարները, ավերումների ծովս ու փողով պատել են ոչ միայն մեր զարդարանդակները ու մագաղաթները, այլև մեր երգն ու երաժշտությունը՝ օտարամուտ ձայնարկու-


թյունների տակ խեղդվելով մեր հորովելաշունչ մեղեդիները:

Եվ Կոմիտասն էր, հազվադեպ այն հնարանը, որ ժամանակի շերտերի տակից լուս աշխարհ հանեց ոչ թե քարե խոյակն ու պունաշարը, կավե սափորը և կամ մետաղյա զարդերը, այլ հնչյունը, մեղեդին:

Հայ երաժշտության Թորամանական է Կոմիտասը, ու նրա թողածը՝ հայ երաժշտության Զվարթնոցը, այս դեպքում արդեմ ոչ բեկոր-բեկոր ու մասնատված, այլ վերաշարված ու ամրորեն վերածեփված՝ նախնական իր ողջ գեղեցկությամբ ու ամրողականությամբ:

Թող հավերժ դողանչեն այդ սրբազն տաճարի զանգերը՝ մշտապես ավետելով աշխարհին կյանքի և ստեղծումի հաղթանակը՝ ընդդեմ մահվան ու քանդումի:





ԱՐԱՔԵԼ ԱՐԱՔԵԼՅԱՆ

(Գիրագույն Բոգնոր խորհրդի անդամ)

ՄԵԾ ԿՈՄԻՏԱՍԱԸ

Հին հովաներն ունեին իրենց մեծահանձար հնագույն երգիշը, որին անվանում էին Օրփեոս։ Հունական առասպելաբանությունը զարդարել է Օրփեոսի հանձարը մի գեղեցիկ առասպելով, որ ասել է՝ երբ երգում է Օրփեոսը, նրա երգերը մեղմացնում են վայրի գազաններին և ոգեշնչում ծառերին։

Հայն էլ ունեցավ իր Օրփեոսը։ Նրա նվիրական անոնն է Կոմիտաս։

Հին Հունատանի շնորհալի երգիշ Ալկմանը շրջեց հայրենի երկրի գյուղերն ու քաղաքները, ժողովեց ժողովրդական երկու հազար երգ, հինգ այն, մշակեց ու տվավ հունական ժողովրդին, որից ստացել էր նա։

Հայոց աշխարհի կյանքի կոչեց հայ Ալկմանին, որի անոնն է սրբատիրը Կոմիտաս։

Ու հայ Ալկմանը շրջեց հայրենի գյուղերը, մտավ մթնում կորած խոճիթները, տեսավ անհրապույր և պատերը խոճիթների, ունկընդուեց շինականի երգերին։ Եվ նրա հոգին վառվեց շինականի անմահական ստեղծագործությամբ, բոցակիզվեց այդ երգերի երկնառար թուլությամբ։ Կոմիտասյան հանձարը թափանցեց շինականի երգերի անհատնում խորքը, ընկալավ նրանց ոգին ու շունչը և առավել հմաստավորեց, պայծառացրեց և իբրև տաղ երկնարծան նոյն շինականին վերընծավեց։

Դեռ պատանի էր նա՝ հայ Օրփեոսը, երբ իր թուիշ ձայնով շարժեց ծերունազարդ Գելվորդ։ Դ կաթողիկոսի՝ ճեմարանի հիմնադրի սիրութ և արցունքներ քամեց նրա աշերից։ Ու հայ Ալկմանը՝ փերդիկ Սողոմոնը, մտավ կաթողիկոսի հիմնադրամ և անդամ անդամում՝ նրա պրատող հոգու անդորրը և հանգստությունը։ Սիրում էր նա այդ հաստատությունը և նրա սաներին շերմ սիրով. որիշ աշխարհ, որիշ մսիթարություն և հանուլը նա չուներ, քան նվիրական աշխատանքը ճեմարանում և դաստիարակություն-

իանձարը, որ ի սպաս դրեց իր հարազատ ժողովրդին։

Սակայն Գևորգյան ճեմարանը չէր կարող բավարարել մեծ գեղագետի ստեղծագործական պահանջը։ Մայր Արտոռը ընդառաջեց Գևորգյան ճեմարանի տեսուց Կարապետ Կոստանդնուպոլիսին, և վերջինիս խնդրելով Կոմիտասը գործողվեց Գերմանիա՝ կատարելագործելու և առավել գարգացնելու իր երաժշտական բնաւոր տաղանդը։ Կոմիտաս վարդապետը եռանդով ուսումնափրում է Եվլուպական մեներգության արվեստը «Ճեմարանական խմբի ձայները կրթելու և կունելու» հսկատակով։ Այդ է վկասում ճեմարանի տեսուց և Կոստանդնուպոլիսի հոգած իր համակը, որտեղ գրում է. «Ժամանակից օգուտ քաղերով, կամեցա և մի այլ թերի կողմն լրացնել։ Երկու շաբաթից ի վեր առևու և և երգեցողության ու ձայնագործության դասեր, որ անհրաժեշտ է խմբական երգեցողության և առհասարսակ ճեմարանական խմբի ձայները կրթելու և կունելու հմար»։

Կոմիտասը Բելովինում լիովին հագուրդ տվալ երաժշտական գիտության անհազ ծարավին, վերադարձավ ճեմարան և անձնատոր եղալ իր նվիրական աշխատանքին։ Գևորգյան ճեմարանը դարձավ մեծ արվեստագետի աշխատանցը, իսկ անդամում, մեղվաշան աշխատանքը ճեմարանում՝ նրա պրատող հոգու անդորրը և հանգստությունը։ Սիրում էր նա այդ հաստատությունը և նրա սաներին շերմ սիրով. որիշ աշխարհ, որիշ մսիթարություն և հանուլը նա չուներ, քան նվիրական աշխատանքը ճեմարանում և դաստիարակություն-

Ար մատադ սերնդի նոյն ճեմարանում: Մայր Աթոռը և Գևորգյան ճեմարանը լիցք տվին երան, այնուղի արգասավորվեց, ուոճացավ մեծ արվեստագետի հանճարը և ստեղծեց բաղցրահնչուն, խորապես հոգական, նըր-

Մանուկ Աքեղյանը և Կոմիտասը: Աքեղյանը կարդում է իր բամբ ձայնով, Կոմիտասը երգում է քաղցրաձայն՝ «Միե՞ր, Միե՞ր», և դահիճն արձագանքում էր՝ «Միե՞ր, Միե՞ր»: Կոմիտասը ճեմարանում նորինեց հոչակա-



Գևորգյան ճեմարանը

բակերու և քննուշ մեղենիները, ինչպես բնուրոշել է նրա ստեղծագործությունները Սորբոնի համալսարանի պրոֆեսորը: Վիթլսարի է Կոմիտասի ստեղծագործական աշխատանքը Եջմիածնում և Գևորգյան ճեմարանում: Նրա պրատող միտքը առաջինը սեվերեց ժողովրդական գոհար երգերի վրա: Նա շրջեց հայ գրութերը, ժողովեց հայ շինականի հազարավոր երգերը և առաջինը հրապարակեց մեծ հայագետ Մանուկ Աքեղյանի հետ «Հազար ու մի խառ» վերնագրով և հավերժական կորատից փրկեց հայ ժողովրդական գոհարները:

Կոմիտասը առաջինը կազմակերպեց Մանուկ Աքեղյանի հետ համեմատվոր երեկոյաց՝ ավիրված «Սասունցի Դավիթ» հայ մեծ էպոսին: Հիշում եմ այդ նվիրական երեկոն: Ճեմարանի դահիճը հրավառված է: Խրիմյանը բազմած է իր գահին: Նրա աջ և ձախ կողմում շարքով հատած են Եջմիածնի միաբանութերը: Դրանց դիմաց, փոքր-ինչ հետո, դրված է ամբիոնը: Այդուղի կանգնած են

վոր «Սիփանա քաջեր» խմբերգը, որը կարելի է անվանել նրա գլուխ-գործոցը: Դա քայլերգ է, որի բառերը հորինել է Մ. Աքեղյանը, իսկ երգը՝ Կոմիտասը: Կոմիտասի առաջին հրապարակական ելույթը տեղի ունեցավ 1890 թվականի սեպտեմբերի վերջերին, ճեմարանի 25-ամյա տարեդարձին: Այդ օրը պատարագից հետո ճեմարանի հյուսիսային բակում խուն բազմության առաջ ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանդնար կարդում է գելուցում ճեմարանի անցյալ ուսումնական տարիա աշխատանքների մասին: Գելուցումից հետո տեղի է ունենում համերգ Կոմիտասի դեկալավությամբ: Խոնմբը կազմված էր ճեմարանի աշակերտներից: Ժողովուրդը, ոխտավորները Անդրկովկասի բոյլը տեղերից, շրջապատել էր երգչախմբը ին, դիտում էր Կոմիտասին և հափշտական աշխատանքներում խմբին: Քառաձյան էր խումբը՝ բաղկացած միայն տղաներից: Խրգում էինք Կոմիտասի սպոնսորները՝ երգերը՝ «Գարուն ա, ձուն ա արել», «Հով արելք,

սարեր շամ», «Հաբրբան», «Քելեր, ցոլեր» և այլն։ Յուրաքանչյուր երգից հետո ժողովուրդը իր հիացմունքն էր արտահայտում բուռն ծափակարություններով։

Ուստինական տարին սկսված էր։ Կոմիտասը հանգիստ չունի. եղեկը պարապում է ճեմարանում որպես դասասու, ճաշից հետո նույն ճեմարանում պարապում է քառաձայն խմբի հետ, սովորեցնում է աշխարհիկ և պատարագի երգերը, իսկ երեկոյան, մինչեւ ոչ գիշեր, իր տանը կատարում է ստեղծագործական աշխատանք։ Նա հանգիստ չունի և կիրակի օրերը։ Պատարագի ժամանակ նեկավալարում է երգեցին խմբին և երգում համուր պատշաճի մեղեղիներ՝ «Հավիկ», «Աչքն ծով ի ծով» և ուրիշը։ Եվ այսպես տարիներ շարունակ և կիրակի օրերին, և տոն օրերին, տարվա ըրոյդ ժամանակներին։ Առավել դյուրիշ էին և սրտահուզ «Ո՛վ զարմանալի» և «Պարզւատուն ամենեցուն» ու «Տիրամայրն» մեղեղիները, որոնցից առաջինը երգվում էր չորրեների տոնին, իսկ վերջին երկուսը՝ Զատկի շաբաթին։

Կոմիտասը ճեմարանում դասավանդում է երաժշտություն։ Նա մտցրեց ելքրոպական հոտամերը գործադրության մեջ, որ չկար էջմիածնում, որովհետև շարականները և եկեղեցական երգերը տպագրված էին հայկական հոտամերով։ Նա մեզ սովորեցնում էր նաև այդ հոտամերով գրված եկեղեցական երգերը։ Դասերից հետո նա հանգիստ չուներ։ Նա ճեմարանուն էր, քառաձայն խմբի հետ, սովորեցնում էր ժողովրդական երգերը, որ հավաքել էր ժողովրդից և վերամշակել էր աշխատանոցում։ Հետ ճաշու այդ աշխատանքները տեղի էին ունենում մեծ մասամբ ճեմարանի դահլիճում, որտեղ գտնվում էր նոր դաշնամուրը։ Մենք այլ աշխատանքներին հաճախում էինք եռանդով ու չերմ սիրով. մեզ գրավում էր Կոմիտասի քննությունը և արա դյուրիշ երգերի հրապուրը ու թովշուրջությը։

Դասերն անցնում էին արտակարգ հետաքրքրությամբ։ Կոմիտասը բացատրում էր ժողովրդական ու եկեղեցական երգերի ծագումը, բնույթը, նրանց մեջ արտահայտված հայ ժողովրդի աշխատանքը, վիշտն ու ուրախություն, սերը՝ առ հայրենիքը, շեշտում էր այդ երգերի բնուրույն հայկական ոգին ու շունչը։ Նա ոգեշնչվում էր ժողովրդական երգերով և մեզ վարակում սիրով դեպի ժողովրդական ստեղծագործությունը և դեպի ինքը։ Յուրաքանչյուր երգ սովորեցնելուց առաջ նախապես մեզ ճանոթացնում էր այն պայմաններին ու միջավայրին (քննության թե հասարակության), որի մեջ առաջացել է այդ երգը, և ապա երգում էր հոգեզմայլ, յուղիչ ձայնով, մեզ պատճառում գեղարվես-

տական անքացատրելի մեծ հաճոյք, կրթում ու ազնվացնում մեր ճաշակը և մեր հոգին։

Ուշագրավ են Կոմիտասի դասախոսությունները նա հոգեր և պատարագի երգերի մասին։ Կենարանի, համոզիչ օրինակներով ցուց էր տախի, որ մեր հոգեր երգերի ակնաքը, պատարագի ու այլ հոգեր երգերի անապակ ու մշտարով աղբյուրը ժողովրդական երգերն են, նայ ժողովրդի ստեղծագործությունը։ Եվ Կոմիտասը երգում էր՝ «Այգեպան, ի՞նչ ես անում, շամբը բրուրասն չի լինի» և ապա պատարագի մի «Տէր, ողբրմեա»-ն։ Նմանությունը ակրեարան էր և փատերն ամրակուու, անհերքելի։

Նա մեծ մանկավարդ էր և զիտեր գրավել մեզ իր արվեստով։ Ներս էր մտնում դասարան, մեղմ ժախտը դեմքին։ Անցյալ դասը հարցնում էր և ապա նորը տախի։ Նա ելրոպական հոտամերով գրում էր գրատախտակին երգը, և մենք արտագրում էինք ու իր հետ երգում գրածը։ Հայկական մեղեղիները ձայնագրում էր ելքրոպական հոտամերով և դրանցով սպառեզնում մեզ։ Կոմիտասը հայկական հոտամերը չէր գործածում, չնայած մեզ սովորեցնել էր և՛ հայկականը, և՛ ելքրոպականը, բայց մենք գործադրում էինք ելքրոպականը, որովհետև այդ էր պահանջում ինքը։

1905 թիվ, հունիս ամիս։ Խրիմյան կաթողիկոսը Կոմիտասին հրավում տվալ նամերգ արտադրություն, Սենյրկովկասի կենտրոնական քաղաքություն։

Շեմարանի տեսուն էր Կարապետ Կոստանյանը, հայտնի բանակեր, ազդեցիկ մի մարդ, որ վայելում էր Խրիմյանի և Էջմիածնի միաբանության հարգամքը։ Նա շատ բարձր էր գևահատում Կոմիտասի տաղանդը և ոչինչ չէր խնայում մեծ երաժշտին՝ իր ծրագրերի իրացման համար։ Թիֆլիս մեկնելուց առաջ Կոստանյանը մեզ կանչեց իր մոտ, իրատեց՝ լինել կարգապահ, ամեն կերա աշխատել բարձր պահելու ճեմարանի անունը և բարի ճանապարհ մաղթելով մեզ ճանապարհեց Թիֆլիս։ Մենք ուրու գևացինք Կարախուն (այժմ՝ Էջմիածնի) կարգապահը և ամսեղից գևացքով Թիֆլիս։ Գևացքում մենք Կոմիտասի հետ էինք ինքնիւ։ Նա անհանգիստ էր, մտախոհ, մտքերը պաշարել էին երան, առաջին անգամն էր հոգեւորականի համերգը Սանրիլուվկասի կենտրոնական քաղաքում, մարդաշատ Թիֆլիսում։ Նա պառկած էր վագոնի չոր նատարանին ու սուզված իր խոհերի մեջ։

— Հայր սուրբ, բարձր ու վերմակ ենք բերել ձեզ համար. չոր տախտակին անհանգիստ կիսենք, ասում էինք ու խնդրում, որ վերցնի բարձր ու վերմակը։

Որբան սիրելի էր նա մեզ համար և որ-

քանց ցավում էինք տևանելով նրան այդ սիճակում: Մենք ըմբռնում էինք մեր սիրելի ուսուցչի հոգեվիճակը, բայց չէինք վատահանում ամոքել նրան:

— Եւ, տղաման՝ ու, —պատավանում էր Կոմիտասը, —ոչինչ պետք չէ, գնացք, հանգստացք:

որվ նեա էր մնացել մեզնից: Գրկախառնվեցին երկու մեծ արվեստագետները, և սկսվեց խանդավառ զրուցը նրանց միջև: Մենք դիտում էինք նրանց զրուցը և լցուում անհում հրճվաներով:

Հրաժեշտ տալով Սունդուկյանին, մենք շարունակեցինք մեր երթը և հասանք Ղամ-



Կոմիտաս վարդապետը և Հակոբ Մանանյանը մի խոր ճեմարանականների նեա

Գիշեր է. գնացքը սուրում է ձորերի միջով, վագրնում լուրջուն է, քնած են բոլորը, արյուն է միայն նա, մտքերը հուզում են նրան, և քոն չի գալիս նրա աշքերին:

Սուավուու է, մենք արդեն Թիֆլիսում ենք և ուրուվ գնում ենք դեպի Ղամբարյանների տունը, որը հատկացրած էր մեզ: Զհասած Ղամբարյանների տանը, նեռվից մենք տեսանք Գարբրիկ Սունդուկյանին, որը մեզ նկատեղով, կանգ էր առել փողոցու և դիտում էր մեզ: Նա, անշուշտ, ապաստ էր մեզ. մենք ուրախությունից թուանք դեպի մեր սիրելի լրուց, չերմ մեղմեցինք նրա ձեռքը և հարազատորեն զրուցում էինք, երբ հապավ Կոմիտասը, որը մի քանի աշակերտնե-

բարյանների տունը: Դա բազմաթիվ սենյակներից բաղկացած մի վիթխարի շենք էր, որ հարնած էր փոխարքայի պալատին: Սկսվեց հյուրերի այցը մեծ արվեստագետների երգիշներ, երգչուիթներ, գրողներ, հասարակական գործիչներ, հայ, ոուս, վրացի հանգիստ չեն տալիս Կոմիտասին: Այցելուների մեջ մեզ գրակում էր մեկը, ժպտադեմ, կենսուախինո, առողջ ո զեղեցկադեմ մի երիտասարդ: Դա Հովհաննես Թումանյանն էր. գրկախառնվեցին երկուար, կարծես երկրության բացակայությունից առաջին անգամ են հանդիպում իրար նուերիմները:

Թումանյանը ցիշտ մեզ մոռ էր, Կոմիտա-

սի հետ, առավոտ, կեսօր, ոչ երեկո և սպա-
պես ամեն օր:

Հասալ համերգի ժամը: Արտիստական
թատրոնը լեփ-լեցուն է: Երգեցիկ խոմքը,
բաղկացած ճեմարանի աշակերտներից,
սրտադրով սպասում է վարագույրի բաց-
մանը: Կոմիտասը հուզված է, ժպիտ չկա
դեմքին, անթարթ հայում է մեզ, խոր չունի
մեզ ասերլու: Նա գլխարաց է, հոգևորականի
պարզ, ու հագուստով: Վարագույրը բաց-
վեց, երևաց խուներամ բազմությունը, թրե-
նաց դահիճը որոտագին ու երկարատև ծա-
փահարություններով: Կոմիտասը դարձավ
հանդիսականներին ու զլիի թերթ շարժու-
մով ողջունեց հրանց: Ծափերի թերթունը ա-
վելի սաստիացավ և դադարեց միայն այն
ժամանակ, երբ Կոմիտասը ձեռքի մի թերթ
ու հանգիստ շարժումով մեր երգն ազդանը-
շանեց: Մենք սկսեցինք երգել «Էջ Միածինն
ի Հօրէ» երգը, որն հայության համար միշտ
համազգային հիմն էր: Դահիճը ոտքի
կանգնեց մի մարդու հման մինչև երգի ա-
վարտը: Բուժն ու որոտագին ծափահարու-
թյունները ոգի ներշնչեցին մեծ արվեստա-
գետին, հոգունուքը անցավ, և մեղմ ու կեն-
սուրախ ժպիտը փայլեց նրա մաշված դեմ-
քին:

Համերգը բաժանված էր երկու մասի՝ հո-
գեկոր և աշխարհիկ երգերի: Համերգի սա-
շին մասն ալիստմեց անբարդում և որո-
տագին ծափահարությունների թերթունների
տակ: Երկրորդ մասը Կոմիտասի մշակած
հայ ժողովրդական աշխարհիկ երգերից էր
կազմված: Երգու էին խոմքը և մեսակա-
տարները՝ Կոմիտասը և իր սան, ձայնեղ
Վահան Տեր-Առաքելյանը: Կոմիտասի
«Կոունկ»-ը, «Մոլոց Միրզա»-ն, Տեր-Առա-
քելյանի «Կուծն ատավ», «Սիրոս և մասն» և
այլ երգերը հանդիսականներն ընդունում
էին բուժն ու երկարատև ծափահարություն-
ներով ու «կրկնել» բացականչություններով: Ընդհշումին ու համերգի ալարտին բեմը
լցվում էր հանդիսականներով, որոնք սր-
տագին ողջուններով իրենց գոհունակու-
թյունն ու հիացմունքն էին արտահայտում
համարելու երգչին: Յնծում էր Կոմիտասը,
թախիճը և մտաքաղ լրջությունը տեղի
տվին կենսուրախ ժպիտներին, որ փալում
էին նրա պայծառ դեմքին:

Ժամանակի մամուլը չերմ ու պրտահուզ
հոդվածներով դրվատեց մեծ արվեստագե-
տի աշխատանքը, իսկ նրա երգերը դարձան
համաժողովրդական սեփականություն:

Այդ համերգը Կոմիտասի առաջին երլուս
էր Անդրկովկասի մայրաքաղաքում: Այն
տարածեց Կոմիտասը ատեղծագործական
հմայքը բովանդակ Անդրկովկասում և կա-
զմության բաղաբերում ու գյուղերում:

Կոմիտասը սիրում էր ոռոսական երգերը
և ոռոսական մշակույթը: Նա նետաքրքրվում
և ուսումնասիրում էր ոռոսական ժողովրդա-
կան երգերը, Գլինկայի, Բորովիկինի, Միմսկի
Կորալովի ատեղծագործությունները: Կո-
միտասը ոռուերեն խոսում էր շատ լավ: Նա
մեզ սովորեցրել էր ոռոս ժողովրդի սիրելի
երգը՝ «Բնից ու մատակե, ու Յոլու», ինչ-
պես և ոռոսական այլ երգեր, և հիացմունքով
էր խոսում ոռոս գրականության և երաժշ-
տության մասին: Դասերի ժամանակ նա հա-
ճախ մեզ ներշնչում էր սեր առ ոռոս ժողովր-
դուր և շեշտում, որ մեր գյուղացիներ պայ-
մանակրոված է ոռոս ժողովրդով, և սուսաց
ոուսի մենք հայերս փրկություն չունենք: Դա Կոմիտասի բաղաքական հայատակըն էր, որ ներշնչում էր մեզ:

Կոմիտասը բազմաժամկ ատեղծագործող
է: Նրա ատեղծագործական հիմնական թե-
ման գյուղական աշխատանքը, գյուղեն է, որ
ծնուն է աշխարհիկ երգը և պահպանում ազ-
գային աշխարհիկ երաժշտությունը. «Ազգա-
յին աշխարհիկ երաժշտությունը պարուն է
հայ գյուղի շնորհիվ», ասում է Կոմիտասը:

«Գուրանի երգը», «Լալի երգը», «Երկրա-
գործի երգը», «Քաղաքան» երգերի մեջ դրսե-
փությունի է հայ գյուղացուներին: Հայ աշխատավոր
զյուղացուները նույնական բարձր նույնականու-
թյամբ արտահայտվել են «Չիսար եւ, կե-
ռանա մի», «Գարուն ա, ձուն ա արել», «Քեկեր, ցոյեր», «Ծիրամի ծառ», «Լուսակն անուշ», «Մեր դասն իսկ սանի ծառ» և այլ բարձր նույնական իսկ սանի ծառ» և այլ
բարձրագիւն երգերի մեջ: Հայ ժողովրդի տա-
րաբախտ վիճակը հուզել է մեծ արվեստա-
գետին, որ իր խորը վիշտն արտահայտել է
հայրենափրական երգերի մեջ, ինչպիսին
են «Կոունկ»-ը, որ մշակել է Կոմիտասը,
«Կանչե», կոունկ», «Անտունի», «Մոլոց», «Ծո լաճ տնավեր» տրտմանուզ
երգերը:

Բացի աշխարհիկ երգերից Կոմիտասը
վերաբշակել է նաև բազմաթիվ հոգևոր եր-
գեր, որոնց մեջ հայտնի են «Հախին», «Աչքն
ծով ի ծով», «Ծիրամայր», «Աշխարհ ան-
նային» և «Պատարագ», որ կազմում է եկե-
ղացական երգերի թագն ու պակը: Քաղա-
րը հեռու է եղել նրա տեսադաշտից, բա-
յացը չի հորինել աշխատանքի երգեր:

Հայ երաժշտությունը շատ բարձր է գնա-
հանակ մեծ Կոմիտասը և իր բովանդակ
արգասակը կանեցը անդարդում աշխա-
տանքով, նիշելի ժողովրդական գանձերի
հակամանը, ուսումնապրությանը և վերա-
մշակմանը: «Հայ երաժշտությունը, —ասում
է Կոմիտասը, —համան ուժ է և կենդանու-

թյուն, որ իր մեջ կանուցանե փիլիստիվայությունն իսկ, ոգին իսկ իր ցեղին, որովհետև երածխովթունն ամենն մաքուր հայելին է ցեղին, ամենն հարազատն ու կենքանին անոր բոլոր արտահայտությանց մեջ, կենդանի՝ որքան կենդանի է այդ ցեղը, ուժեղ՝ որքան ուժեղ է իրեն ծնունդ տվող ժողովորդը»:

Կոմիտասին շատ բարձր են գնահատելիայ և աշխարհի ականավոր արվեստագետները:

Հարազատ ժողովորդը Կոմիտասի արձակը կանգնեցրեց Էջմիածնում: Այդուղի է հասակ առել և արգասավորվել նրա երաժշտական մեծ հանճարը: Հայ երախոսագետ ժողովորդը Երևանում էլ կանգնեցրեց նրա արձանը նրա անունը կրող, մեծ պողոտայում:

Հարազատ կառավարությունը արժանաւայել շքեղությամբ տոնեց նրա 100-ամյա հորեվանը, որը վերածվեց վեհաջոր փառատոնի համաշխարհավիճ չափանիշով:

Կոմիտաս անմահ է: Մեծ հանճարը կարող է հոռմեական բանաստեղծ Հորատիոսի բերանով ասել՝¹


Կանգնեցրի անմեռ արձան ես ինձ համար ամրակուր, քան պղինձն Ու պալատներն արքայական և բարձրա-

բերձ, քան բորգերն այն: Եվ չեն եղի անձրևը, ոչ Աքվիլիոնը¹ հյուսիսի,

Ոչ անհամար շարանները դարերի: Ո՛չ, չեմ մեռնի ես լիովին, և լավագույն մասն իմ կյանքի Կփրկվի թաղումից և փառաշոր պասկն իմ Կըփթթի տոհավետ...

Համերժական փառք և պատիվ հանճար՝ արվեստագետին՝ մեծն Կոմիտասին:

¹ Աքվիլիոնը (Աքվիլիոնիուս) լատինական դիցարանության մեջ հյուսիսային քամիների անձավորումն է:





ԳՐԻԳՈՐ ԳՅՈՒՂՅԱՆ
(Հոգևոր ճնշադահի դասախոս)

ՍՈՂՈՄՈՆԻՑ ԿՈՄԻՏԱՍ

Արդեն վաղուց կորցրել էր մորը, կորցրեց առև, և մի օր, որբ ու անօգնական, կանգնեց Սմբատյան Հայոց Հայրապետի առաջ: Իր երգով գերեց նրան և մեաց լաւ քում:

Եշմիածնական խորհուրդը վերցրեց նրան իր թների վրա ու տարավ...

Վանքում, ուսումնառության տարիներին, հալվեց նրա որբությունը: Ազգը որդեգրեց նրան:

Բայց, այնուամենայնիվ, նա մենակ էր. երբ լուս էր աղմուկը, և գիշերը յանձնան: Այս խցիկի առանձնության մեջ, նա բախտում էր: Երեքն երազում տեսնում էր Թագուհուն՝ լուսերի մեջ բաթախաված իր մորը. երկարում էր թները՝ գրկելու համար նրան, բայց երազը ցնորս էր, և թները փակվում էին իր կակ կրծքի վրա: Փղձլում էր: Ո՞ւմ սիրել, ո՞ւմ սրտի մեջ դատարկել իր սիրով. ո՞ւմ հետ բաժանել իր հոգու կարուս ու աղապատանքը. ո՞ւմ թոցնել իր երազի թևերի վրա: Նա աշխարհում առանձին էր, ոչ ոք չուներ. ուստի սիրեց բոլորին: Ամբողջ դարձավ նրա ընտանիքը:

Ծնողներից որբ՝ աշխարհին կպավ նրա սիրով: Ու աշխարհը փոխվում, կաթիլ առ կաթիլ գալիս էր նրան, բախվում նոգու մեջ, աղմուկ էր: Վանքը մի որդոյն աշխարհ էր, խույզայ մի Հայոստան: Կային պատահներ՝ Վանից, Մուշից, Սասունից՝ հախուն տենչերով, վեր ձգտումներով, իդենց ազգային կոլորիտով, համով, հոտով:

Կային և թուրքական ջարդերից ճողովրած ծերութիներ՝ արցունքակալած աշքերով՝ որոնց մեջ վիշտն ու տառապանքը անդունդներ էին փորել: Այս, մի որդոյն մեծ աշխարհ էր վանքը, որ գալիս խաչաձևում էին ճամփաները և հարցանիշ կազմած՝ կափալում խորանում թախծող Աստվածածրը աշքերից:

որ ող - բա - լով
կար - դամբ
առ բեզ:



Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

«ԱՐԱՐԱՏ»-Ն ՈՒ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ

Սույն հոդվածը շարունակությունն է ««Արարատ»-ն ու երգ-երածուության նարցերը» խորագիրը կրող աշխատության, որ ուսահայ մամուի ննագույն օրգանու հիմուն տարիների ընթացքում նրամբարակված ու մեզ ննատքքրոյ նորթերը խճանկարելով չորս կատերի շորջ, ոստունասիրել էինք երկուուր (Ա. և Բ.)¹: Սակայն, նաչի առնելով, որ պատող բնաբարկող նորթերի շարքում զիսավոր տեղը գործափառ և՛ Կոմիտաս վարդապետի գրվածքները, և որ նայ մեծագոյն երգանարդար-տևարանի ծննդյան 100-րդ խորիրապի տարիում մեջ և՛ ենք արդեհն, մոր ոստունասիրության շարունակությանը տախի ենք նոր խորագիր, ի պատիվ քանրարաշատ արվեստագևոտ-գիտնականի փառապանձ հորեյանին:

Գ.

Հայ մին երածուության պատմության և տևության նարցերը լուսաբանող զուտ երածուա-դիտական նորթերը «Արարատ»-ի էջերում հիանալիորեն նախապատրաստված են, և կամ միշտակ նորթերը ըստ ամենայնի լրացնում են հայագիտական մի ամրոց շարք հոդվածներ, որոնցում քննված են՝ ժողովրդական առասպեկտերի և գորշան երգերի, վիպական տաղերի և ազգային էպոսի, գեղուուկ իշաղիկների և գուսան-աշուղական առեղծադրությունների, այլև ժամանակագույշյան, շարականների ու միջնադարյան հշանավոր դեմքերի ժառանգության ոստունասիրությանը կապված կարևորագոյն խընդիրներ: Անհրաժեշտ է, որևէ նաև սրբանց անդադանան, գեր համառության:

Հերանու Հայաստանի վիպական քանայուսության հարցերը մասնագիտորեն բարձրացրել է Ս. Արևոյանը, իրեն հասուն խորթափականցությամբ ննապաղ-տեղով Սովուս Խորենացու պատմության մեջ քննա-

կան մոտեցմամբ օգտագործված նայոց ժողովրդական առավելները, ընդ նմին տարրերերով ապօյ և նախալածարար երգիոյ պատմախան դիցարաններու բանաստեղծությունները (բուն «անապակինքը») «վէպ», «զրոյց», «վիխասանը», այլև «երգը վիպատանաց» ու «քուելիսաց երգը» պրտամաստություններով բնույագրվող սառավելախան պրտամական բանաստեղծություններից, և ցուց տապով երկուսի ևս արթեքն ու վալիրականության ասինանները: Այսուն ննինամբ նաև «երգը ցցոց և պարոց» նաև կացությունն է մկնարանում, որտես քննարկուն կարճ տեկով պարերգերի տևակներ, ու անդրադանում գողյան երգերի տաղաչափության նարցերին էլ, շեշտեղով, որ դրանք ըստ էության վեներու նամար նարկ է նախ քննական բնագիր ունենալ ձեռքի տակ: Դրանով Արենյանը իրավացիորեն մարժում էր սոյն խնդիրի կապակցությամբ ևս Գ. Խալարյանի նապենակ ձևակերպած մտքերը, այլև արտամաստիած որիշ կարծիքներ: Թեև վերջիններին շարքում (միուր շարժմու առումով) որոշ շատեկանություններ գուրկ չի եղաւ Ս. Պայցանի նայտնածը մի հոդվածում², որ նա գողյան երգերի մեջ փորձում է տևանել «հայկական բազմավանի» (18-վանկանի) չափը և այդ տևակիւտով դրանք զուգակշռում Ներսես Շնորհալու «Չարթիք, փառք իմ» հայտնի երգի մեջ:

Միշնադարյան վիպական երգերին ու էպոսին վերաբերող նորթերից հիշատակելի են՝ «Մոլաց Միրզա»-ի և «Կարոս խաչ»-ի բնագրերի տարրերակներ:

¹ Տե՛ս Ս. Արենյան, Հայ ժողովրդական առավելները Սովուս Խորենացու պատմության մեջ, «Արարատ», 1899, էջ 30, 81, 186, 200, 246, 304, 360, 459, 529. 1900, էջ 32, 86, 140, 198, 284, 302, 354, 415, 484, 548, 628. 1901, էջ 107, 174, 250:

² Ս. Պայցան Գողյան երգերի տաղաչափության մասին, «Արարատ», 1901, էջ 99:

¹ Տե՛ս «Էջմիածին», 1968, Նոյ Ժ. 1969, 1969, Նոյ Գ ու Ե:

րը⁴, Խաչիկ վրդ. Դադյանի գրառած «Տղա ՚ Խավիթ»-ը, որին նախակցված է Նիկոլայոս Քարամբանի հմտու առաջարանը⁵, առևասարակ «Աշունս ծոկը»-ի անանուն պատումը (Խարաք քարառով)⁶, այլև Ս. Հակոբոսու զրի առածը («Թրլ Դավիթ»)⁷:

Ամսագիրը լուրջ ուշադրություն է դարձրել գլուխուկ-ժողովրդական բանահյուսության խնդիրների արձարձմանը, հրապարակելով ն' ազգագրական կարգի նյութեր կամ նորմանենք⁸, Ա տեսական նարցադրումները բարձրացնող ուսումնափրառություններ, ինչպիս է Մ. Արևազնի աշխատությունը⁹ նվիրված ժողովրդական-քնարական խաղիններն, որ ննդինակը դրանք թնառու է սկզբանակ ճեկի ո ծավալի և մետաքանարգացման, կառուցվածքի ո հանգավորման, տարրերակների ստեղծման ո գործունեան և այլ ուսակեցներու¹⁰: Աններա չեն մնացել կրոնական (Կամ քրիստոնեական) հնագոյն մի նկարագիր պահպանած ժողովրդական ստեղծագործություններն էլ¹¹: Այսունեւու, իր տեսակի մեջ լորորինակ ո շամեկան գործ է բողեկ Գարեգին վրդ. Հովսեփյանը, որ զըրշագիր տաղարանների մեջ իսկ որոնել և գտել է ժողովրդական երգաստեղության մնացորդները, և առաջ թերել դրանցից մի-երկուսի գրական խոռքը, ինչպես նաև բուն միջնադարյան ժողովրդական պարեգիրից մեկի զարմանայի նարազատորքամբ պահպանած եղանակն էլ, Սամակ վրդ. Ամասունու որովայլ ձայնագրությամբ¹²:

Աշունների մասին անսարքագիր մի նորված է լույս տեսել¹³, որ հավանաբար Ն. Քարամյաննեն է: Նրանում նորինակը ժողովրդական բանաստեղծ-երաժշտության Միմիկն Բորջի և աշուղ Ղազարի, Քիշիկ Նովայի և Ղազար Օղլիի, աշուղ Քյաննանի և Քեշիշ Օղլիի, այլև Զիվանու ստեղծագործություններից առանձնացնելով Էջմիածնի նվիրված գոլտրիկ, սըրտառուչ և զաղափարապես նագեցած մի ամրող շարք երգեր, մատնանշում և արժեքավորում է աշուղական երգաստեղության ամենազնիվ ո գրավիչ մոտիվներից մեկը՝ նաև աստարմությունը հայրենի-

⁴ «Արարատ», 1902, էջ 507. և 1917, էջ 543:

⁵ «Արարատ», 1895, էջ 429:

⁶ «Արարատ», 1898, էջ 520:

⁷ «Արարատ», 1909, էջ Ե—Զ (Բավելված), էջ Լ—Ը (Բավելված) և էջ Թ (Բավելված):

⁸ Տե՛ս «Արարատ», 1896, էջ 556 (Ժողովրդական գրականության թեկությունը Բովանդակի քարառով). 1908, էջ 912 (Վիճակ Բանելու ստվորությունը և վիճակի եղանակը) և այլն:

⁹ Մ. Արենան, Ժողովրդական խաղեր, «Արարատ», 1904, էջ 172, 259, 354, 467, 556, 642, 772, 884, 975:

¹⁰ Տե՛ս օրինակ՝ Ղարաբաղի ժողովրդական Զըրօրթնաց եղանակի, «Արարատ», 1895, էջ 469:

¹¹ Գ. վրդ. Հովսեփյան, Ժողովրդական բանահյուսության նետքեր միջնադարյան տաղարաններում, «Արարատ», 1898, էջ 544. և 1899, էջ 44:

¹² Ս. Էջմիածնի հայ աշունների եղանակում, «Արարատ», 1903, էջ 511;

թին և նայոց նույնը գամին: Այս նյութը Քարամյանն այնքան է նույն, որ ան մի ազգագրում էշ-միմիկն ու հայրենիքն օրինաբանող նոգերը և աշխարհիկ երգերը թնառու է ժամանակագրական կարգով, սկսելով 7-րդ դարից, երբ Սամակ Գ. Զորափորեցի կարողիկուն նորինեց իր «Էշ Միմիկն ի Հօրէ» հրաշագեղ շարականը¹³:

Քանի արդեն խոր բացվեց շարականների մասին, գոնք նիշառակինքն իրանց ուսումնափրառությանը ընկանան ողղողություն հաղորդակ այնպիսի գրավածքներ, ինչպիսիք են Ս. Ամասունու նորվածները¹⁴, որոնք նախապատրաստեցին նրա «Հին և նոր պարականն կամ անվանից շարականներ», իր տեսակի մեջ եղանի երկասիրությունը. Ն. Տեր-Միքայելյանի նորվածները¹⁵, որոնց շնորհիլ հայ ընթերցողներն ևս ծանոթացան նրա «Դաս արտենիչ Հոյոնարկու» աշխատության հիմնական դրույթներին. այլև Մ. Արենանի նորվածաշարը¹⁶, որ ննդինակը պարզաբանում է հայոց նոգերը ինքնուրույն երգի ծագման ո զարգացման նաև նամականակությանը, շարականների ձեռն ո բովանդակությանը կավաված զվարկու խնդիրներն ո հնագոյն շարականների տարրերի հատկանիշները:

Բայց եկեղեցական արվեստի հարցերի լուսաբանությունը չի ասմանափակվում շարականների մետապությամբ: Ուշագրավ են, ապա տեսակետից, Հովսիկ արքափակուղուի դիտողությունը¹⁷ Տոնացոյցի և օրացուցի զարգացման նորագոյն շրջանի մասին, Արել արք. Միմիարյանի գրությունը՝ Հայոց ժամակարգության վերաբերալ¹⁸, այլև Ս. Ամասունու նորվածքը՝ հայուսակներ վաղ միջնադարի ժամակարգության շորք¹⁹, որ թնանակ նոր մոտեցմամբ հայասպատրաստում է կարծեա Վ. Հացունու «Պատմություն Հայոց աղոթարասուցին» հալտնի երկասիրության մի քանի թեզերը:

¹³ Ն. Քարամյան, Ս. Էջմիածնին հայ երգինների տալիքում, «Արարատ», 1895, էջ 194:

¹⁴ Տե՛ս «Արարատ», 1894, էջ 85, 120, 176 և 218 (Ժարականների ուսումնափրառություն). 1897, էջ 121 (Ս. Լուսափորիչ և Տրդատ և նոցա նոր շարականներ). և 1898, էջ 229, 275, 325, 374, 418 (Նոր շարականներ):

¹⁵ Տե՛ս «Արարատ», 1909, էջ 864 (Էջմիածնի մատնադարանի հնագոյն ձեռագիր շարականներ). և 1910, էջ 163, 284, 348, 408, 523 (Հին և նոր շարականներ):

¹⁶ Տե՛ս «Արարատ», 1912, էջ 720, 828, 1002, 1146 (Ժարականների մասին):

¹⁷ «Արարատ», 1909, էջ 341 (Մեր եկեղեցական տոները):

¹⁸ «Արարատ», 1872, էջ 381 (Ժամակարգություն Հայոց եկեղեցւոյն):

¹⁹ «Արարատ», 1902, էջ 24 և 785 (Հայոց ժամակարգությունները հինգերորդ դարում. ժամագրքի թարգմանություն. ժամակարգություն. Գիրք Աղոթից. Աղոթարասուցից և ժամագիրք):

Վերջապես, ամսագրում տարբեր առիթներով և այս կամ այն ձևով ո չափով վերակենացվել են իրենց գործունեությամբ նաև հարց մին ո միջնադարյան երաժշտությանը կապված մեծ ո փոքր բազմաթիվ մեղմակենացր անուններ, հոգևոր թե աշխարհիկ արվեստին ծառայած շատ դեմքեր։ Մերուակ Մաշտոցը՝ Սասնեցու երրորդի հրատարակությամբ, որ իրազրուց Մ. վրդ. Տեր-Մովսեսանը²⁰, պատմահայր Խորենացին Գր. Լուսավորչին Վիրքած իր մեղմելով²¹, Պետրոս Սրբացին՝ Սատվածանա գովեստով²², Սուտիսոն Սյունեցին՝ ծամակագործության մեկնությամբ²³, Համամ Արևելցից²⁴, Գրիգոր Նարեկացին²⁵, Գևոտայած կաթողիկոսը²⁶, Ներսէս Շնորհական²⁷, Ֆրիկը²⁸, Թովման Մեծոնիցին²⁹, Վկորտիք Նաղաշը³⁰, Հովհաննի Սերաստացին³¹ ու Գրիգորի Սրբամարցին³², Սիմեոն Երևանցին³³, այլն ուրիշ երգիչներ՝ Առաքել Բաղդիչեցոց մինչև Պետրոս Ղափանցի՝ միասին վերցրած³⁴։

²⁰ Ներրողեան յաղագ վարուց սրբուն Մեսրոպայ, սասցեալ Կարապետ եպիսկոպոսի և վարդապետի Սասնացոյ, «Արարատ», 1897, էջ 380, 378, 456։

²¹ Ն. Քարամյան, Մովսէս Խորենացու մեղմելով ի պատիվ և Գրիգոր Լուսավորչի, «Արարատ», 1825, էջ 202։

²² Գ. Տեր-Մկրտչյան, Պետրոս Սյունեցաց եպիսկոպոս, «Արարատ», 1902, էջ 80, 88, 200։

²³ Ս. Վրդ. Ամատումի, ծամակագործեան մեկնութիւն (ընդարձակ), Սուտիսանոսի իմաստապիրի Սիւնեց եպիսկոպոսի, «Արարատ», 1915, էջ 225, 361, 485, 684. և 1916, էջ 128, 406, 694։

²⁴ Կ. Կոստանյան, Համամ Արևելցի, «Արարատ», 1896, էջ 169։

²⁵ Նարեկայ վանից վաճականին Գրիգորի տաղը բաց ի տպացոն, «Արարատ», 1874, էջ 188։

²⁶ Կ. Կոստանյան, Տեր Պետրոս Ս. Գևոտայած, «Արարատ», 1897, էջ 12։

²⁷ Ս. Ներսէս Շնորհակի և նորա «Յիսուս որդի» եղերեքությունը, «Արարատ», 1898, էջ 107։

²⁸ Տիրապը եպիսկոպոս, Սոռացված մի հայ երգի, «Արարատ», 1918, էջ 64, 171։

²⁹ Գ. Վրդ. Հովհաննիան, Նոր Ծովթեր Թովման Մեծոնիցու կենսագրության, «Արարատ», 1918, էջ 788, 1151. և 1914, էջ 87։

³⁰ Կ. Կոստանյան, Մկրտիչ Նաղաշ, «Արարատ», 1898, էջ 20, 66: Տե՛ս նաև «Արարատ», 1900, էջ 45 (Նաղաշի երկու կիսատիպ տաղերը):

³¹ Գ. Վրդ. Հովհաննիան, Հովհաննի Սերաստացի, «Արարատ», 1918, էջ 226—261։

³² Գ. Վրդ. Հովհաննիան, Գրիգորի Սրբամարցի (գրական-կենսագրական նոր նյութերով), «Արարատ», 1919, էջ 3։

³³ Նյութուր Հայոց եկեղեցական պատմության համար. Սիմեոն կաթողիկոսի կենսագրությունը, «Արարատ», 1896, էջ 495։

³⁴ Տե՛ս Ն. Քարամյան, Հին հայ երգիչներ, «Արարատ», 1895, էջ 12, 55, 90, 124, 485։

Այսպիսին է, չսփազանց համառոտակի, այն հարուստ մենախորքը (Փոնը), որի վրա առավել խոտուն են դատում հայոց մին երգարիշտի պատմության ու տնօտքան հարցերին վերաբերող և «Արարատ»-ում լոյս տեսած երաժշտագիտական ուսումնակիրությունները: Այսինքն՝ ստոգանության հաշմանդերի համակարգին հնիված Սպակ: Մեղմանի մեկ գրությունը³⁵, և Կոմիտասի մին հոդվածները³⁶, որոնք շոշափում են հայութիւն երաժշտության ակուտիկական հիմնությունը մինչև ճայնականական դրույթունը ու հայապահությունը տարածվող խոնիքը: Դրանցից Կոմիտասի հոդվածը անդամանական կապությամբ³⁷: Այստեղ ուշադրությունը մենուկը ենք դրանց մեջ շոշափված զուտ տեսական խոնիքին: Եվ առնապարակ հշված կյութերը զննելու ենք ըստ տեսական հարցադրությունների, մի կողմ բողնուով դրանց հարպարական ծամանակագրական կարգը:

Հայ երաժշտության (այդ թվում և նոգեր) ակրատիկական հիմնությունը, բնականարար, տարբեր չեն Մերձավոր Արևելքի երաժշտության նոյն հիմնությունը, և Կոմիտասի էլ նենց այդ որոշիչ մեջ է քրնում դրանք, ընտ նմին շոշափելով հայկական հիմնական հնչյունաշարը ևս, որ դարձայ կառուցվածքով համեմնում է ընդմանուու Մերձարևելլանի մետ: Միայն թե, հիշյալ խոնիքներին անդարձանակով իր թիշ շտապով գրված ու այնպիս էլ չամբուջացված նորմանենք մեկում (Բ.), նա թույլ է տախի միերկու ճգդուման կարուս բացեր: Նպատակ ունենալով ցոյց տալ արևմայան (որի մեջ է հայկական էլ) ու կերպական հնչյունաշարերի ակրատիկական տարբերությունները, Կոմիտասը քրնում է դրանց

³⁵ Սպ. Մելիքյան, Առոգանության խաղեր. խաղերի ծագումը (Մի հատված Սպ. Մելիքյանի պարտական շարադրությունից), «Արարատ», 1902, էջ 681։

³⁶ Ս. Կոմիտաս Վրդ., Հայոց եկեղեցական եղանակները, «Արարատ», 1894, №№ 7 և 8, էջ 222—227 և 256—260։

³⁷ Բ. Կոմիտաս Վրդ., Հայոց եկեղեցական երաժշտությունը Ժթ դարում, Ա. Չըշան, 1839—1874 (տարաբախտարար՝ թերավարություն), «Արարատ», 1897, № 5, էջ 221—225։

³⁸ Գ. Կոմիտաս Վրդ., Երգեցողությունը Ս. Պատրիարքի, «Արարատ», 1898, №№ 3—4, էջ 111—117։

³⁹ Կ. Կոմիտաս Վրդ., Recueil des chants populaires arméniens («Հայկարած հայոց ժողովուրդական երգերի»), «Արարատ», 1900, № 7, էջ 367—368։

⁴⁰ Կ. Կոմիտաս Վրդ., Մի համեստ բանագոր, «Արարատ», 1901, № 4, էջ 228—229։

Ստորև սոյն նորմանենք վկայակոչելու ներ ըստ հշված բնականարմների (Ա, Բ և Այն):

⁴¹ Տե՛ս «Հշմանձն», 1968, № ԺԱ—ԺԲ, էջ 88. և 1969, № Ե, էջ 48:

ձայների ու ձայնամիջոցների թվային արտահայտությունները, ըստ միալարի մասերի, նևուպակ կերպ, համեմատության համար միմբ վերցնելով c-d-e-f-g-a-h-c դիատոնի շարքը:

Արևելյան—1, 9/8, 5/4, 11/8, 3/2, 5/8, 11/6, 2:
Արևմտյան—1, 9/8, 5/4, 4/8, 3/2, 5/8, 15/8, 2:

Ուղղանկյուն փակագծերով ցոյց տրված հարաբերությունները հշուելի են: Խնչուանկարգի ձայներն ու ձայնամիջոցները Կոմիտասը արտահայտում է բնական ձայնաշարի հարաբերություններով: Մինչդեռ հայտնի է, որ այդ հնչյունակարգը լինելով հավասարաշափ տեղաբարացված, երբեմն հոյնիկ զգայի շեղումներ է երևան թերում բնական ձայնաշարի համապատասխան հարաբերությունների համեմատությամբ: Տվյալ դիպում, օրինակ, հշված տիպի շեղումները դիտելի են և լիդրապական մեծ հոյակում (տերցիալում) և մեծ վեցյակում (սեքսատում), որոնք, համապատասխանաբար, 1/16 և 1/14 տոնի չափով ավելի մեծ են Կոմիտասի ցոյց տված 5 : 4 և 5 : 3 հարաբերություններով արտահայտվող բնական ձայնամիջոցներից³³: Ընթակառակը, արևելյան (այդ թվում և բայկական) հնչյունակարգի բարյակը (կլարտուն, որ մաքրու է), և մեծ բարյակը (սեպտիման, որ բնական ձայնամիջոց է), ճիշտ և ճիշտ ներկայացնում են, մեկը՝ 4 : 3, իսկ մյուսը՝ 15 : 8 հարաբերությունները (և ոչ թե 11/8 ու 11/6):

Քննարկվող հոդվածում Կոմիտասը թերում է նաև արևելյան (տաճկական և բայկական) ու ևլիուպական բրուտակի ձայնաշարերի համեմատական տախտակը, մեկնական ընդունելով Եթզամի=Փուշ=Ré հիմնադայըք: Կոմիտասը աչքի առաջ է ունեցել ժամանակին Ե. Տնտեսանի կազմած համանամատ տախտակը, բայց օգտվելիս գրության շատ անհարմար ձև է ընտրել՝ արաք=վերնախաղ ձայնաստիճանը համապատասխանեցնելով ևլիուպական «Fa»-ին, որով, ի վերջո, մի թյուրիմացություն է վերականգնվել ու շարունակվել մինչև մեր օրերն իսկ³⁴: Կոմիտասը

³³ Հավասարաշափ տեղաբարացված ու բնական հնչյունակարգերի ձայնամիջոցների տարրերությանց մասին մաերամասն տես՝ Մուզակալնայ Ակուստիկա, ուժ բարձրացնելու համար Հ. Գարբյուզով, Մ.—Լ., 1940, էջ 214—216:

³⁴ Այսպես՝ «Հայ եկեղեցական երգեցողության սանդուիսի առաջին ձայնաստիճանը «քրե»-ին կալքահի, —գրում է Խ. Տնտեսան, —մինչ ևլիուպականը «ողո»-ին: Նոյն բանն է, կարծեն ումանք, բայց չէ: Բայկական սանդուիսը=պարան՝ ուղարկություն է, իսկ ևլիուպականը՝ տայօր=մեծազույն» (տես Խ. Տնտեսան, Ընթացք հայ եկեղեցական երաժշտության, Գիրք Ա, Վենեսուիլ, 1957, էջ 12): Այնինչ հայ երաժշտության (թէ ծոլովդրական և թէ եկեղեցական) միմնական ձայնաշարը մաքրու գույն է սահման, նաև երբ «փուշ»-ը նախասարեցնում ենք «քրե»-ին, բանի որ այս դիպում «Վերնախաղ»-ն էլ հավասարվում է ևլիուպականի համեմատությամբ փոքր-ինչ ցած «Էլիս»-ին, բայց ոչ «Fa»-ին:

բացատրում է, թե մասնավորապես արաք=վերնախանակ ձայնաստիճանը թիւ բարձր է արևմտյան «Fa»-ից: Սակայն, մինչունցն է, ատացվում է պահպես, որ կարծեն խոսքը վերաբերում է տոնիկային թիւ լայն փոքր եղակին (տերցիալից), և, նետևաբար, ողջ ձայնաշարի մինոր բնություն: Մինչդեռ արևմտյան հայկական ձայնաշարը բնույթով մաքրու է, որպեսին նրա տոնիկային եղակը, ևլիուպականի հարաբերությամբ, թիւ ենդ (այն է՝ բայկան կամ իսկական) մեծ եղակ է:

Հայկական «Փուշ»-ը ևլիուպական «ողո»-ին համապատասխան հնչյունները (որ շատ բնական ու տրամարածական մի քայլ էր), Գ. Երանցյանի նախաձեռնությունն էր: Նրանից էլ ծառանձնի էր տեսականորեն հիմնավորված այդ դրույթը Ն. Թաշճանը և ավանդ թողել եցմանըն ու առնապատակ Արևելյան Հայաստանին: Կար, սակայն, հայ ձայնագրայտների մի որիշ նուանը էլ, Հ. Տերչյանի գլխավորությամբ, որ «Փուշ»-ը միշտ «Ré»-ին էր հավասարեցնում³⁵, պահպանած լինելու համար Հ. Լիմնաշանի սկզբնական մտահայտումը: Վերջինս հայկական նոր ձայնագրությունը ստեղծելիս պարզապես ձգտել էր հաշվի առնել արևմտյան դասական և վագարանի՝ բամբուրի մատնաւորելիք «Ré»-ից սկսվու շարքը ևս (այլ ոչ թե նրա բարերի կամ լարվածքի)³⁶: Բայց այն, որ բամբուրի մատնաւորելիք շարքը, սկսած «Երգաբան»=«Ré»-ից, նույնական ներկայացնում է մաքրու տիպի հնչյունաշար, համոզի կերպով ցոյց էր տվել տակավին Ե. Տնտեսանը, ևլիուպական 13-ձայնանի և արևելյան 15-ձայնանի բրումատիկ ձայնաշարերի աստիճանների թվերով³⁷:

Կոմիտասը նեմարանում սովորելու տարիներին յուրացրել էր հայ նոր ձայնագրության՝ պատճե ժամանակին Ն. Թաշճանի միջոցով տարածված դրույթները: Եվ իր անդրանիկ հոդվածում էլ (Ա.): Գր. Նարեկացու «Հարության» տաղի գրառումը առաջ ընտրել հենց այդ դրույթամբ: Երեք տարի անց, երբ Կոմիտասն մկնել էր հատկապես խորանալ պայմանայ երաժշտությունիքի կատարած տարրեր ձայնագրություններին, հայ երաժշտության հիմնական ձայնաշարին և նրա ևլիուպական ու արևելյան հնչյունակարգերի մեջ ուղեցած հարաբերությանը կապված նարցերի ուսումնասիրության մեջ, նախ հաճածք վերը թիշատակված արդյունքներին: Բայց շուտով տեսականության նորովի իմաստավորեց հայկական ձայնաշարի եւրիպունը, և վերադարձավ Ն. Թաշճանի ավանդած

³⁵ Ե. Տնտեսանը յուրահատուկ միջին տեղ գրավեց այս երկու հոսանքների միջև, կիրառած գրության ձևով հարելով Հ. Տերչյան—Հ. Արվազյան գծին, իսկ տեսական մի քանի կարտու նարցերում Գ. Երանցյանը:

³⁶ Հմտու: Ռուբեն Արենա, Բարա Համբարձում Լիմնաշան և հայ նորագրության ծագումը, Էջմիածին, 1915, էջ 13:

³⁷ Տիւ Ե. Տնտեսան, Նկարագիր երգոց Հայաստանաց եկեղեցւոյ, Կ. Պոլս, 1874, էջ 45:

դրույթանը, այն էլ սկզբունքային նշանակություն ունեցող երևոյթի բացահայտման առնչությամբ:

Խոսքը վերաբերում է Բագկական ճայնաշարի քառյակային (վկարտային) կառուցվածքին և հրաման քառունակների (տեսրաքրողների) շյուպակցման սկզբունքին: Բանն այն է, որ անցգաղում, հայ երաժշտների վերն հիշատակված երկու նուանքների ներկացուցիչներն են, Բագկական նոր ճայնագրության իրենց դասագրքերում մեր ճայնելանակներից յուրաքանչյուրի բացատրության առնչությամբ առաջ էին քերում եվրոպական ուժեղակային կառուցվածքի գամմաները միջնեղոյն «Եշիլներ» կամ «Ելեզներ» ևս, որոնք տեսական մնացած դրույթների կապակցության մեջ խորը էին հնչում, որ ի վերջ անգամ շփոթ տեղեցին թոյլ մասնագետների մտքերում⁴³: Ազգային երգարվեստի տեսականին և մասնավանի գործականին լավատեղյակ երաժշտների համար սակայն, ճշված պարագան մոտրումների առիթ չէր տալիս այնքան ժամանակ, քանի դեռ նայ երաժշտությունը մնում էր գլխավորապես միաձայնության ուրոտմերում: Գրույրունը փոխեց, երբ նայ երածը-տորոյունը վերջնականապես թևակողուց ազգային կոմպոզիտորական նոր դպրոցի կազմավորման և բազմաձայնության փուլը, և անցնելով ներդաշնակության՝ Կարա-Մուրզայի սկզբունքներին հասուն նախական շրջանից, կանգնեց Մ. Եկմալյանի արվեստի շնչքին:

Հիրավի, մեր երաժշտագիտության նախակոմիտաւայան շրջանում, Բոմփոն բազմաձայնության արտանայտամիջոցներին դիմած Եկմալյանը, Բայրական հնավանդ մեղեդիները ներդաշնակելին, ընդհանուր կորդմորոշման նպատակով կամա թե ակամա «Ելե-վեզներ» («Եշիլներ») պիտի փնտրեր ազգային ճայնելանակներում, ինչքան էլ որ նա գիտակցեց դրանց ինքնատիպությունը: Գործնականում Եկմալյանը շատ գգուշակիր էր: «Պատարագում» կիրառելով ակնորդների ուղղակիաց հաշորդականության սկզբունքը, նա ստիպված եղավ հայկական եկեղեցական երգերը դիմել որպես եկեղեցական ժար և ովով ութեակային այս կամ այն չափով մոտեցող, այս ձևերը այս կամ այն չափով միջնեղոյն, բայց, ըստ ամենայնի, լադային ազգային կառուցվածքներ, ինչպես նշու ներ ուրիշ անձան էլ⁴⁴: Մեծածավալ աշխատության առաջարկանում, սակայն, հեղինակը այնպես էլ չկարողացավ խոսակիր «Ելեչչ» հասկացությունից (գանձն իմաստով), տեղիք տալով Կոմիտասի քըն-նադատության:

«Բայց թշակու և գիտէաք, —գրում էր Եկմալյանը, —երբ ներդաշնակնակ բազմաձայն երաժշտութիւն չէ ինչ անդէա և Բակառակ ոգոյ եկեղեցւոյ մերոյ, զի կատարելութիւն և լուրին իմն է երաժշտութեան, յորմ ոչ խորեցին և նախնիքն մեր..., բայց ի ձեռ-

⁴³ Տե՛ս օրինակ՝ Դաաագիրը հայկական ճայնագրության, աշխատամիջոց Եզնիկ քի. Երզնկանց, Վաղարշապատ, 1880:

⁴⁴ Տե՛ս մեր հորվածաշարը՝ Մակար Եկմալյան, «Եշմիածին», 1958, № Ե, էջ 58:

նարկելու մեր բայ գործ ներդաշնակութեան արքյ պատարագի կարի զգուշութեամբ և երկիրածութեամբ վարեցաք: Բանից մարկ անշուշտ ի վերայ կայր՝ անայլպակ փոխարել գմայ լուսանակն... և զեկրդաշնակնութիւնն այնպէս իմ յօրինել, զի վայելուց իցէ ողմ եկեղեցական երաժշտութեան և պատշաճ լինեցի ոգոյ եկեղեցական երգեցողութեանց մարոց: Կան պատրիկ խորչեցաք ընդհանրապէս ի կիսամայնից արտաքը կմէշին (chromatisme) և ի գարտուղարենն լուսանակին (modulation), այլ շանցաք մնա լինելու նորին իսկ լուսանակին (diastopisme) և բայ կարի պարզ յօրինել զներդաշնակութիւնն»⁴⁵:

Եկմալյանի «Պատարագ»-ի գրախոսության մեջ (Գ.) Կոմիտասը թնանդատությունն սկսեց մնաց այս հատվածից, և նախ տվալ իր դրույթների տևական ընդհանուր միմնավորումը: «Մեր եկեղեցական երանակները ոչ մենա էլ եկեչ չտնին, —շեշտուց նա, — այլ կազմված են քաղաքների դրույթամբ: Բացատրենք Հայունի է, որ բոլոր ազգերն էլ նախ երգեցին, առաջ երգեցողությունը, մնան նվազածությունը առաջ կարդալ. առաջ կարդացան ձայնատիճանը որոշել, գանձանեն, ապա նիմագրանը կերա հաստատեցին: Հայունի է նոյնան, որ նուաց սկզբանակ նվազարար բատար թնարք էր (lira). բարում էին աստիճանաբար և այսպէս. Ա և Բ լարի ձայնամիջոցն էր կես, Բ—Գ և Գ—Դ-ինը մի-մի ամբողջ ձայն. որեւն Ա 1/2 Բ 1 Գ 1 Դ. այս ձայնների հաջորդականությունը նորա բառապար (տեսրաքրողում) էին կոչում: ...Ժամանակի ընթացքում ավելացավ մի երկրորդ բառապար, բայց այնպէս, որ առաջնի վերջին լարը՝ Դ-ն միանաման իյրը Ա լար էր երկրորդի համար. որեւն պատեն. Ա 1/2 Բ 1 Գ 1 Դ=Ա 1/2 Բ 1 Գ 1 Դ, որ նախասար է լորեն ձայնից բաղկացած մի երգի, ուստի զործիքն է լորեապար էր կոչվում: Այս լորեակն ութեակի վկրածելու համար ոչ թե վերից, այլ վարից էին մի լար պղում...: Սիալ՝ Ա 1/2 Բ 1 Գ 1 Դ=Ա 1/2 Բ 1 Գ 1 Դ 1 Ա. Բ1Գ1Դ1Ա-ն արդեն եռաձան է: Ուղիղ. Ա 1 Ա 1/2 Բ 1 Գ 1 Դ=Ա 1/2 Բ 1 Գ 1 Դ: ...Ամեն անգամ, երբ այս ութեակին բառապար ենք ուզում ավելացնել, պետք է վարվել այս կանոնով: ...Ուրեւն կատանանք ոչ թե եկեչ արդի մորով, այլ բառակների մի շղոյա: Քայլակների դրույթամբ են նորին վահած և մեր թե՛ ծողովրդական, թե՛ եկեղեցական եղանակները, որոնք բոլոր եկեղեցարքեան և նորուն կազմությունն ունին: ...Մեր լորեակը բաղկացած է երկու ժար քայլակից՝ Ա 1 Բ 1 Գ 1/2 Դ=Ա 1 Բ 1 Գ 1/2 Դ, որ ձայնամիջներով պատեն է պատկերանում...: Այսուել էլ մենա երաժշտագետը հայկական լորեակը առաջ քերելով եկեղեցական ճայնամիջներու, այն սկսում է Ը-ից (c-d-է-ի=f-g-ա-ի):

Հատուկ ուշադրության արժանի է այն պարագան:

⁴⁵ Երգեցողութիւնը սրբյ պատարագի, փոխադատութեամբ լի խազ երաժշտական և ներդաշնակեալ ի ձեռն Մ. Եկմալյան, Լեպացիդ, 1898 (Յառաջարան):

որ Կոմիտանը քայլակների համակարգը դիտում է հավասարպես թե նայ ժողովրդական (գեղջուկ), և թե եկեղեցական երգարվեստների հիմքում: Եվ իրոք, ինչպես ակուստիկային, այնպես էլ հիմնական ձայնաշարի կառուցվածքին վերաբերող նրա տեսական դրույթները նկատի ունեն նայ ազգային երաժշտությունն ընդհանրապես: Խոկ թե ինչ է հականում տեսարանը՝ «ժողովրդական» ասելով, նատակ ձևակիրաված է և. Եղիազարյանի կազմած ժողովածի առաջին գրքումի երաժշտակության առջիվ նրա շարադրած գրախսականում (Դ.), որ ատմած է նետույլը, առ ի գիտություն նաև նրանց, ովքեր ժողովրդական (ժանավանի ազգային-ժողովրդական) երգը շփոթում են կենցաղում տարածված որևէ երգի, և կամ նույնին՝ մասնագիտական ցած (ասենք՝ ինքնագործունեության) մակարդակով հորինված որևէ ստուդագործության հետ: «Ժողովրդական է միայն այն երգը, որ բնազումածը և անմիջապես է ստեղծում մի ժողովուրդը» (Ընդգծում մերը է—Ն. Թ.):

Քննիլի մյուս հարցերը վերաբերում են միայն եկեղեցական երաժշտության: Հարկ է Եղիշ սակայն, որ, ինչպես նայում է, Կոմիտանի գրվածքները՝ թե նայ ժողովրդական, և թե նոգեսր երգարվեստի խնդիրները շոշափող հորվածները, նույնին ամրողացրյամբ առած (Հյուսելով լոկ «Արարատ»-ում երաժշտականացների մասին), թեսկուն ընդգրկում են տեսական հարցերի լայն շրջանակ, բայց ընդհանրապես կրում են անակարտ բնույթ: Դա բացարկվում է նրանով, որ մեծ երաժշտու ժամանակներ ստիխաված իր վրա էր վերցրել նայոց երաժշտական ազգային մշակույթի ստուդագործական, կատարողական, մասնակիրածական, ազգագրական, պրոտմագիտական ու տեսարանական բնագավառները նոր հիմքերի վրա դնելու տաճանակի բոլոր աշխատանքները: Այսուել մենք կանգնենք «Արարատ»-ի մեջ լույս տեսած Կոմիտանի հորվածներում հարուցվող հարցերից առավել ամրողականների, և կամ թենուու հպանացիկ կերպով շոշափված խնդիրներից առավել կարևորների վրա: Դրանցից մեկն է նայ եկեղեցական երաժշտության ձայնեղանակների համակարգի անկյունաբարային հարցը, որը ժամանակին Կոմիտասը նույնին անզամանալից կերպով է բարձրացրել:

Նախքան այդ ասենք նետույլը: Բացամատկույլ հայկական ձայնաշարի կառուցվածքը, Կոմիտասն անշուշտ պետք է անցներ ազգային նոգեսր երգեցողության այն ձևերի ընթացքանը, որոնք իրենց լայացին կազմով անմիջականորեն (առանց ձայնեղանակների մշնորդության) մնանում են այդ ձայնաշարի վրա: Եվ նա այդպես էլ վարվեց, գերմանական մամուլում երաժշտական իրադրության մեջ ներկայական երաժշտական մեջ ներկայական տարրերուն հայկական եկեղեցական թվերության հիմնական ձևերը, և, մինույն ատեն, ըստ ամենայնի լուսարանը նրանց խազագործության արվեստի երեք հատվածներից մեկը⁴⁶, այսինքն առողանության խազերի գործնական

հաշանակությունը: Դրա փոխարևուն, «Արարատ»-ի էջերում էլ (և նենց Կոմիտանի դպրավանդության տարիներին), տպագրվում է առողանության խազերին նվիրված Սպ. Մելիքյանի վերոնիշալ հոդվածը: Նրանում նեղինակը, նաև տեղեկացնելով, որ առողանության նշանների վաղագույն գործադրությունը հանդիպում է Սանալիքիսի մեջ, և որ այդ նշանները նին նունական դպրության միջնորդությամբ 5-րդ դարում բրացվում են նայերից, առաջ է քերում նայկական միջնադարյան մեկնողական թերականություններում առկա և առողանության արվեստի վերաբերու տվյալները ու գալիք նետույլա, վերջին հաշվով, ընդունելի երգակացության⁴⁷:

«Ուստմասահրությունը ցուց է տախի,—գրում է նա, —որ մեր թերականագուները ինչ որ գտել են նունաց թերականությունների մեջ շառողանության մեջ առնչվողը, վերցրել են անհատի վերպատճենությունը: Սակայն ամեն ինչ իրեն օրենք դրվելով գործնականություն չի գտնում: Այսպիսով, առողանության արվեստի նայ նին թերականական տնտերքները ամփոփող Մելիքյանի գրվածքը և նայ եկեղեցական թվերից մեջ առողանության խազերի գործնականությունը ձեռք բերած երաժշտական նշանակությունները բացահայտող Կոմիտասի նորմածը այդ տարիներին⁴⁸ որոշ չափով փոխադարձարար լրացրին իրար:

Ի դեպ, նայ եկեղեցական թվերով նետախուզը իր աշխատության վերջում Կոմիտասը խոստանում էր անդրախտնաց ուժանակներով կատարվող

պետն ու խազագրության արվեստը, «Էջմիածին», 1966, №№ Ժ.Ա.—Ժ.Բ, էջ 159—161:

⁴⁷ Հիրավի, տարիներ հետո միայն պարզ ձևակերպելու էին ինչպես: առողանության խազերի, այսպես էլ նայ եկեղեցական երաժշտության մյուս երավոյթների ու մնայուն արժեքների նկատմամբ Սպ. Մելիքյանի միթիլիստական տեսակներները, որոնք հրապարակ եւան նրա՝ «Հունական աղեղեցությունը նայ երաժշտության տեսակների վերա» (Թիֆլիս, 1914) սկզբունքորեն պայմ ու հետադեմ դիրքերից հոգաված աշխատության մեջ:

⁴⁸ Ասում ենք՝ այդ տարիներին. որովհետև ամենի ուշ, 1914-ին, Բարիզում, երաժշտագուների միջազգագիր կոնցրեսում, Կոմիտասը դասախոսություն է կարդում (Փրանքներներով), զոյթ ունենալով՝ «Հայ եկեղեցու առողանության նշանակություն», որտեղ տեսարանը ինքը էլ նենց կանց է առնում առողանության դրույթան վերաբերյալ նայ սին մեկնողական թերականություններում առկա փաստերի վրա (տես՝ Les signes de prosodie de l'Eglise arménienne, ձեռ., երկու խմբագրությամբ, Երևանի Կոմիտասան դիմավանդությունը տես՝ Կոմիտաս վարդապետ, Հայ գեղջուկ երաժշտություն, Փարիզ, 1988):

⁴⁶ Այդ մասին տես մեր հորվածը՝ Ուկան վարդա-

սաղմուներին և⁴⁹: Սակայն, ինչպես միշտալ սաղմուների, ազնպես է առաջարարակ հայ երաժշտության ձայնեանակների միման վրա ծավալվող հոգևոր երգի տարրեր տեսակների ո երանց առանձնահատկությունների մետաղությունը Կոմիտասը շնացրեց կատարել: Այդ մասին թեև կարևոր, բայց լոկ նարեւանցի դիտողություններ է արև նա իր անդրանիկ հոդվածում (Ա.), Եշիով, որ մինչև գործի գյուտը (այն է՝ 4-րդ դարում), սաղմուներությունը մեզ մոտ կատարվում էր «Բաւանականարար մողովության մեջ եղանակներով». իսկ 5-րդ դարակըներից, գրեռի գյուտից հետո, երբ ըստ ձայնեանակների մեջող բուն սաղմուներությունը պաշտամներային արարողություններում գերակշռող դեր ասականարար զիշտում էր ինքնուրույն նորաստեղծ հոգևոր երգին, առաջացած շարականներու ո եկեղեցական արվասի մուս ժամերեր: Նաև կարճամփուր բնութագրությունը է ովել գիտնականը այդ ժամերից շարականներին, որոնց «մեծագույն մասը արձակ, փոքրագույնը՝ տաղաչափական բանաստեղծություն է», և որոնցում, «առաջապիտյան երկու ձևն ուն կա՝ շեշտական և վանկական». գանձերին ու տաղերին, որոնց «զանազանությունն այն է, որ առաջններն ինչպես ճառում են, արտաքին ձևն փոխած՝ տաղաչափական»: և ավետիսներին, որոնք վերագրվում են «Մ. Խորենացուն, բայց ոճը իսկա փոխված է՝ ծոլովիդի մեջ թերեւության մեջ անցնելով»:

Հիշյալ բնութագրությունների և դիտողությունների մեջ կան շամենան որիշ կետեր ևս, ինչպես, օրինակ, այն որ շեշտական տաղաչափությամբ գրված երգերում, անենք, Մ. Խորենացուն վերագրվող «Շննդեան և Աստուածայայտնութեան ճրագալուց» կանոնի առաջն եռատառում («Ծրախացիր Սրբութի»), կամ «Խորհուրդ մեծ և սրանչելի» շարականում տողերի մեջ վանձերի քանակը բաստառուն չէ, բայց հաստառուն է ամրող տան մեջ շեշտերի քանակը. և կամ այն՝ որ ավետիսները «զանազան տեղեր այլ կերպ և այլ եղանակով են երգվուն. բայց ընդհանրապես խոսքերի բովանդակությունը միևնույնը է. զանազանությունը բարբար մեջ է. իսկ եղանակները կամ Դկ, որպես «Խորհուրդ մեծ» շարականը, կամ Ա.Չ դարձվածք՝ ԴԶ-ի և ԴԿ-ի խառնուրդից բաղկացած» և այլն:

Ավելի մետաքրքիր և ուսանելի է մեզ գրաղեցնող հոդվածի բուն նպատակադրումը՝ որոշել հայ եկեղեցական երգերի գլուխոր ու երկրորդական եղանակների ընդհանուր, մոտավոր թվաքանակը: Այս կապակցությամբ Կոմիտասը հայ տարրերուն է շարականի եղանակները՝ հոգևոր մուս երգերի եղանակներից: «Ծարականի գլուխոր եղանակների մեջ և սոցա ստորաբաժնությունների ընդհանուր թիվը է բառապուն»—գրում է առ, հաշվի առնելով՝ «քուն» և «կողմ» ինչպես և «ստեղի» ու «դարձվածք» տիպի 20 ձայնեանակներն ու դրանց շուրջ նույնքան տարածեակ-

ները: Այս բոլորի հիմքում երաժշտության տևարանը իրավացիորեն դնում է՝ «ոյք ձակն և երկու ստուխի» դրույթունը և գտնում, որ այդ դրույթան մշակումը 5-րդ դարակըներին վերագրող ձեռագրական պատառկները պատմական միմբ ունեցող նկատառելի հյութեր են: Ինչ վերաբերում է եկեղեցական մնացած առաջնագործությունների եղանակների բարականակն, ապա այն՝ «Բարյոր միտուն երկուն» է, ուղիկացնում է Կոմիտասը և բացարում, որ «սոսուրի, գանձերի և մուս հոգևոր երգերի եղանակները զանազան դարերում, այլ և այլ անձանց ճաշակին նայելով, փոփոխվել և անել են, որպիսն ուցա գործածությունը ատիպության չէ եղած, իսկ շարականի եղանակները պարտադիր և գործածության մեջ ասմանափակ լինելով՝ չեն փոխվել ըստ էության»: Հետո սոյն «152» թիվը եղական ընդունելով, զանազան հաշվությունը է կատարում տեսաբանը, որոնց նպատակն է՝ որոշել առանձին տեսակ կազմող եղանակների բանակը, և նոյն սկզբունքով դիմակալի մաս շարսկանի եղանակների թիվը ինչեցնելով 20-ի, գային է եղանակցության, թե մեր հոգևոր երգերի բոլոր տեսակների եղանակների ընդհանուր գումարը կինը 140 կամ 150: «Այս թիվը մեզ չվախոր է զարմացնել, ավելացնում է նաև մենք արևելյան ազգ գոյով, մեր եղանակները ևս արևելյան բազմացրող եղանակներից են և մեծ անշնորուն տեմին»:

Վերոբերյալ թիվը անշնուած մոտավոր է ու ճշգրտման կարուտ: Բայց պատեղ դա չէ կարուորը (ինչքան էլ արվատագիտը նպարտության օրինական զգացումը է հշում ազգային միելեղիական նարբառությունների տվյալ ցուցիչը), այլ այն՝ թե սկզբունքուն մետաղուտական ինչպիսի հիշու դիրքեր է վերցնուում Կոմիտասը, երբ հազարավոր երգերի պատկանի մի համանագիտարան եղանակացնուր նայ հոգևոր եղանակներուն փետրում է ընդհանուր 140—150 առանձին (կամ չափանմուշ) եղանակ: Արդարու, զարմանալին նախ և առաջ սա է նենց, եղածուական մեր արդի կյանքի ու դաստիարակության տեսակներից, որ և կարուտ է բացարության: Արդ, իմանալի է, թե միշին դարերում, ինչպես այլուր, այնպիսի է Հայաստանում, և՛ գեղուկ-ժողովրդական, և՛ գուանական, և՛ նոգելոր-պրոֆեսիոնալ երաժշտության մեջ երգելու անհատեական լուրաքանչյուր ուսանաւուուր նորաստեղծ ինքնակների նորաստեղծ կամականի մեջ չէ, որ գուգորդում էր: Եներ բնագավառներում և՛ ավյալ մամանակի ու միշավարի շրջանակներում գլուխունը են ունեցել ավանդական ճայթեանակներ, որպես մելեղիական լուրատեան չափանմուշներ, որոնք գուգորդվել են մեծ թվով տարրեր ուսանավորների հետ, նայելով դրանց մի-երկու էական (կարլած բովանդակության), որ մի-երկու ևս ձևական կառուկաներին:

Ավանդական եղանակների նման կիրառումը, սակայն, ենթադրում էր (բնագական կամ գիտակցական) ստեղնագործական մոտեցում՝ հանկարծանության (իմպրովիզացիոն) շնորհը, որ դրսկուում էր՝ որոնք ձայնեանակն նոր խոսքերի բովանդակության ու կառուցվածքի համեմատ, տրված շառակի-

⁴⁹ Steu' Komitas Keworkian, Die Armenische Kirchenmusik, Sammelbände der Internationalen Musikgesellschaft, Jahrgang I, Heft I, 1899, s. 54.

դով տարրերակելու ունակության մեջ: Այդ տարրերակում հանգեցնում էր՝ չափանմուշ մեղենիի թեթևակի ձևափոխությունը կամ յորովի երթերանազավորությունը մինչև նոյն ճայնուղանակի սահմաններում երած ծառական նոր կերպարի տուղմանը: Պատմական զարգացման ընթացքում նաև հաղթահարվում էր ավանդական ճայնուղանակների շրջանակը: Տարրեր խաչածումների, հասարակական կանոնին կապված նոր նույնի, ինչպես և տաղանդավոր անհատների գործության շնորհիվ նոր կերպարի, կամ պարագաների գործության շնորհիվ նոր կերպարի տուղմանը:

Ավագանի ակնառու ապացույցներն են միջնադարյան խազքրերում հաստատագրված մանրուաման եղանակների ճոխ շարքերը, որոնք հշանափորում են նայ նովուր երաժշտության ճայնուղանակների համակարգի զարգացման բարձրագույն փուլերից մեջ եվ զարգանակի չե, որ Կոմիտասը այդ եղանակներին էլ դիմում է ի վերջ դիտարկվող իր նորմածում: Հայունի է, որ մանրուաման եղանակների վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել Դ. Ավիշանը: Հետապուրով բազմաթիվ խազքրեր, «Ընդդիմաց» կարգերից նա բարեկ է ամենի բան 70 եղանակների անուններ և կամայի դրանց պրենական տախատակը՝ «ի զրոսան բանափառաց»⁵⁰: Ավիշանից հետո խազքրերով գրադիւնք Կոմիտասը և առաջ թերելով մանրուաման եղանակների 46 այլ անուններ, արև շահեկան մի շաբթ դիտողություններ: «Եղանակների տևականությունը գտն-գտն անվանակոչությունը, —նկատեց նա, —շատ վաղ մամանակներից է հայտնի. մի սովորություն, որ հատուկ է եղել միշտ արևելյան պագերին՝ բակերին, պարսկերին, բրդերին, արարելերին, տաճիկներին և այլն, որոնք մինչ այժմ են

⁵⁰ Մեր ժողովրդական երգ-երաժշտության մասին Մ. Արենյանը վկայում է: «Ամեն խաղ, երկակ լինի թե եղակ կամ քաղաք, կազմում է առանձին երգ: Սակայն կանոնի մեջ, պահենք երգելին, մի քաղաքով չի քավականանում երգիչը, —այդ կոնքը միշտ մի երկու վայրկան: Երգեցողությունը սովորաբար ավելի երկար է տևում. Բանելեսների և պարերի ժամանակ մուշեկ ժամերով երգիւում է: Բառերն արագ փոփոխվում են, ինչ եղանակն անփոխ մնում» (տես՝ Արա՞ ժողովրդական խաղեր, ուսաքար, Վաղարշապատ, 1904, էջ 71): Նոյն պարագան, մի այլ առիթով, Արենյանը դիտում է մեր միջնադարյան գուսանական երգարվեստի առնչությամբ և Բատկանական կապականությունում նոր կառանական կապականությունը մեջ տաղաշարքերը (տես՝ Հեն Գուսանական ժողովրդական երգեր, Երևան, 1931, էջ 108): Դուք եկեղեցական արվեստի վերաբերյալ արդեն ունեն Կոմիտասի բնարկվող մտքերը:

⁵¹ Տե՛ս Դ. Ավիշան, Սիստան և Լոռ Մեծագործ, Վանաստիկ, 1885, էջ 254:

գործածում են՝ բացի հավերից»: Եվ կամ «այս եղանակների մեջ կան տեղերի, երաժշտուների կամ սոցականականների, տոնմերի, եղանակների, հանդիպությունների, գործիքների, եղանակի բնավորությունը պատկերացնող բույսերի և մի քանի անհականակի բառերի անունները»—բացատրեց նա, ո կոտմեց, որ դրանք (անունները) ցույց են տալիս ուր ճային «նորությունները» (իմա մասը սոտրաբաժանումները):

Հիրավի, գրական միննույն քառասույի (այս դեպքում՝ դավթյան մեջ ապամուս և տամ) նետ գուգորդվող և ճոխ խազավորված տասնյակներով եղանակները ութ ճային բաժանումներով առաջ գործանությունը առաջ թերեւն ու, միաժամանակ, այդ եղանակներից յուրաքանչյուրին հատուկ անուն հատկացնելը ուրիշ ոչինչ կարող է հաշվել, եթե ոչ՝ տվյալ ճայնուղանակի նեթարածանումների որոշումը: Եվ այսուղ Կոմիտասի կուհած երևույթը նոր լույս է սփռում հայոց ճայնուղանակների համակարգի և խազանիշների դրույթան փոխարքնակցությունների կարևորագույն հարցի վրա: Որովհետև՝ ինքնարերաբար նետուում է: Եթե անգամ ճոխ խազագրված երգի սկզբում անհրաժեշտ է նշել ճայնուղանակը, և նոյնիսկ ճայնուղանակային ստորաբաժանումը ցույց տվող համապատասխան մի անուն, ապա որևէն պարզ է, որ այդ երկու կետերն էլ դուրս են խազագրությամբ արտահայտվող իրողությունների շրջանակից: Խազագրության արվեստի վերաբերյալ մի դիտողություն ևս արեց Կոմիտասը «Արարատ»-ի էջերում, հատկապես Դ. Խաչկոնցի հոդվածներից մեկին⁵² անդրադառնախի (թեև շատ խիստ խորերով), նկատելով, որ այն միտքը, թե հայոց «խազերն ալ, եղանակներն ալ ծագումով հայացի չեն, այլ հայացած», ինքը հենց «հայացի չե, այլ հայացած» (Ե.): Կոմիտասը մի առանձին կրով էր մերժում միակողմանի ազդեցությունների տիրամուշակ տեսությանը ուղարկի կամ անուղղակիորեն ստորք տվող հեղինակների հակագիտական գաղափարները: Միննույն ատևն սակայն, նա ընդունում էր բացի ժողովրդների մշակութային փոխադարձ կապերի թեղմանավոր երևույթը: Եվ խազագրության արվեստն էլ ուսումնասիրություն էր այդ երևույթի հաշվառումով, մասնավորապես՝ հայ-բյուզանդական հարաբերությունների լույսի տակ: Ցավոք, Կոմիտասից հետո այս առողջ ու ճիշտ մոտեցումը պատշաճ հիմնավորում և խորացում չստացավ:

Վերջապես, Կոմիտասի քննարկվող հոդվածներում շշափական են նաև հայոց եկեղեցական երաժշտության զարգացման 19-րդ դարին հասուն վիճակն ու խնդիրները (տես՝ հիմնականում Բ., մասամբ էլ՝ Գ.): Դրանց անդրադառնախ անհրաժեշտ է և այն պատճենով, որ մեզ մոտ լույսայն ընդունված մի թյուր կարծիքի համաձայն կոմպոզիտոր-երաժշտականի վերաբերմունքը դեպի պարահայ եկեղեցական երա-

⁵⁰ «Էլումա», 1901, Գիրք Ա., էջ 209—240 («Հայոց կրոնական բանապատեղությունը»):

ժիշտներն ու հոգևոր երգերի եղանակների նրանց կատարած ձայնագրությունները իրք բացասական է եղել: Այս կապակցությամբ նաև ասենք, որ հայկական հոգևոր երգերի եղանակների տարրեր երգվածքների նկատմամբ Կոմիտասի մշակած տեսակները հասունելի ու պարզելլ կարծվածից ավելի բարդ խնդիր է, և պետք է վճռվի՝ նաև նրա մոտ նորվածների, նամակների, ձեռագրերի և իր ձայնագրած ու ներդաշնակած հոգևոր երգերի համակրողմանի քննության հիման վրա: Ընթանապես ևսած, ու նաև «Արարատ»-ի էջերում, Կոմիտասը խորին նարգանքով է խոսում Հ. Լիմնաշահի, Ար. Հովհաննեսանի, Գ. Երանյանի, Ն. Թաշճանի, Ե. Տնտեսի և առաստաղական պատմահայ հմտությունների մասին, որոնց անձնութաց շաբաթերով ժամանակին ստուդիեց ու կատարելագործեց հայկական ձայնագրության նոր դրույթունը, և հաստատագրվեցին մեր նկատմական երաժշտության բազմանարդուր նմուշները այնպես, ինչպես դրանք նաև էին մինչև 19-րդ դարը, մասամբ գրշագիր ու համատիպ ժողովածուների օգնությամբ, մասամբ է բանավոր ավանդությամբ:

Նա միայն հցում է, որ մինչև նայ հոգևոր պահանջական մեղեդների ձայնագրության հաջող իրագործումը, Ա. Պոլում, մի ժամանակ, նկեղեցական երաժշտությունը երկրորդական կազմով ստուգությունից անմատական ճաշակի խաղալիք է դարձել: Սակայն այդ շրջանը, ըստ էության, երկար չի տևել, և որ կարևոր է, նրա ալիքների վրա բարձրացած կորառարեր ուղղությունը կյանքում չի հաստատվել: «Անձնարձակ տիրացուների շրջանը տևեց 1864—1873-ը՝ գրում է Կոմիտասը, —երբ ազգային նկեղեցական երաժշտության համար մի նոր շրջան է սկսում: Եվ նրա հիշատակած վերջին թվականը հատկանշական է նրանով, որ, ինչպես նայում է, այդ տարին Գևորգ Դ կաթողիկոսի հրամանով Ն. Թաշճանը նկազ էջմիածին և գլուխ թարեց Շարականի, Պատարագի ու Ժամագրի երգերի՝ նայ նկեցնու կողմից պաշտոնապես վավերացված ձայնագրությունները:

Դ.

Հայկական պարբերական մամուլն իր տեսադաշտի լայնությամբ, հյութերի բազմազանությամբ ու բազմակողմանիությամբ աշխարհի հարուստ մամուլներից է, որ բացատրելի է ոչ միայն հայությամբ ամենատարրերում ափոված լինելու հանգամանքով: Դա համեմատադրու լրջագուն ամսագրերից մենք «Արարատ»-ն են, որը նույնիսկ երաժշտական (կամ երաժշտության և վերաբերող) հյութերի ասմաններում չափանակակիրով լոկ ազգային շրջանակների մեջ, իր էջեր տրամադրել է նաև երաժշտության ընթանալու պատմության առանձին խնդիրներն ու միջազգային երաժշտական կյանքի տարրեր երևույթները ժողովրդականացնելող գրություններին:

Վերջիններս բովանդակությամբ վերաբերում են մին ու միջին դարերին և նորագուն ժամանակներին:

Դրանց այստեղ կանդրադառնանք շատ նաևիք, դարձալ, նատուկ առանձնացնելով Կոմիտասի մի նորվածություն:

Հին դարերի արվեստի մեջ առաջվող գրվածքներից հիշատակելի են Ղ. քի. Հովհաննեսի⁵³, Ա. Տեր-Հովհաննեսի⁵⁴ և Լ. Մելիքսեթ-Բնիկյանի⁵⁵ նորվածները: Առաջինի նորվածություններից կարծիքության մեջ նար է, որ շշարիվում է, բայց նրանում տեղակորյուններու և թրվում մերանական երգերի ու ծիսականական արաժական արաջարարությանը, ինչ նույնական երաժշտական մշակույթի և Օրիենտի, խաղական երգ-երաժշտության ու Սուրադելայի մասին, և այդ տեղեկություններից հիման վրա ժողովրդականացնելու երաժշտության ներգործության ուժի մասին գտայի արարարությունը⁵⁶:

Ա. Տեր-Հովհաննեսը շամելան մտքեր է շարադրել (և բավական ընթարձակ) խրայնացլոց կրոնական ու աշխարհիկ երգ-երաժշտության, այն նրանց խաղանիշների դրույթան շորջ, օգտվելով Աստվածաշրջից և ուրիշ աղբյուրներից: Խոկ Լ. Մելիքսեթ-Բնիկյանը խոսում է վրաց նարագույն (7-րդ դարակրություն անհետացած) զարգացման («Վարդորա») տոնի վերաբերյալ, այն կապելով կապադովյան Յարշաւ-Յար-ի հայկական «Վարդապատ»-ի ներ:

Բայց միջնադարին նվիրված մի նորված ունեմք «Արարատ»-ում, բարված «Նեցելի» շարաթաթերթից⁵⁷, որ ընթերցողին գաղափար է տրվում նվիրապայում 9—16-րդ դարերում մի շարք առարկաների, այդ թվում և երաժշտության դասավանդման մերդերի շորջ:

Ավելի բազմազան են նորագույն ժամանակների երկուցները, դեմքերն ու գործերը վեր նաև ուղղ գրվածքները: Հշենք Եղիսաբետ Բնարած քրոնոգրաֆի-ի մասին հիմանական հաղորդումը⁵⁸, Բրեմենում Ռորինց-տեղին «Քրիստոս» թատրոնգության (օվերայի) բեմական մարմանավորման աղյուղ գրված ընթարձակ նորվածը⁵⁹, այն Յա. Խելքիցի ու Վիլի Ֆենքերոյի երաժշտական կանոնահամար տաղանդը նայ ընթերցությունները:

⁵³ Երաժշտության աղեցությունը, «Արարատ», 1886, էջ 385:

⁵⁴ Խրայնացոց երաժշտությունը, «Արարատ», 1914, էջ 659:

⁵⁵ Վարդապատ Վրացոց մեջ, «Արարատ», 1918, էջ 129:

⁵⁶ Նշենք նաև, որ նեղինակը մի-երկու փաստ էլ թերում է բայկական կանչեցից: Դրանցից ուշագրավ են՝ հոգևոր հիմանական հայկական գրույրում մինչև վերջերս էլ երաժշտության միջոցով բուժելու փորձ, և «շորան բայալի» նովվական եղանակի բուն հայկական անվանակոչությունը, որ է՝ «ոչխրաբանգի»:

⁵⁷ Միջնադարյան դարոցները, «Արարատ», 1896, էջ 567:

⁵⁸ «Արարատ», 1877, էջ 146:

⁵⁹ Գ. Ս., Սի նոր կրոնական թատրոնգություն, «Արարատ», 1895, էջ 226:

դիմ ծանրացնող գրվածքը⁶⁰. մի կողմ բողնուով կաթողիկ, բողոքական և օրթոդոքս եկեղեցների պաշտոներգությանը վերաբերող փոքր, բայց փաստական հյութերը⁶¹:

Այս բոլորի մեջ յուրահատուկ տեղ ունի՝ Էդ. Գրելի Missa solemnis մատուցվող առեղծագործության 18-րդ կատարման առթիվ Կոմիտասի գրած բնախոսականը (ուղենազիան)⁶², որտեղից երևում է, թե ինչպես հնահնակը օտարության գրկում (Բեղողինում) լած եւլուպական պատարագի տպավորու-

⁶⁰ Minor (Ա. Տեր-Հովհաննիան), Երկու մասուկ և բաժտագլուխներ, «Արարատ», 1914, էջ 176:


⁶¹ Տե՛ս, օրինակ, Անտևկաները. Եկեղեցական խըմբական երգեցողությունը («Արարատ», 1914, էջ 214), Սաղմոսացների դասընթացը (Առվն, էջ 817), Սովորայի Սինոդական ուսումնարանի երգեցողության ծրագիրը (Առվն, էջ 599) և այլն:

⁶² Կոմիտաս Վրդ., Տաճա և վեց ձայն երգեցողություն Պատարագի, «Արարատ», 1897, էջ 64:

թյան տակ վերապրում է նայ արվեստագիտին հատուկ նվիրական մի հոգում:

«Բայց նայ մարդու ուրախությունն ավելանում է, — գորում է նա, ընդհանրապես բարձր գևանաւուղղվ Գրելի երաժշտությունը, — և կործը փեզում է արդար հպարտությամբ, երբ լսում է «Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր օգործեանց» սրբվեական փառարանությունը. նա մոռանում է բոլոր նախկին տպավորությունները՝ առ ժամանակ՝ առանց զգալու թե ինչ է կատարվում յուր շորջը, տեղափոխվում է հոգեպես հաստաթիմն, անսասան լուս Մոր՝ Մայր Այտոն. Ա. Էջմիածնի սրբազն կամարների տակ, և լսում նայ քրիստոնեական երգած «Սուրբ, Սուրբ, Սուրբ», ... և Բրեշտականվագ մեղեղին ազգային ներդաշնակությամբ, համատակիցների երգակցությամբ միայն իսկապես վերացնում է նորան»...:

«Արարատ»-ը Կոմիտասի երաժշտագիտական անդրանիկ հոդվածներն ու ուսումնահրությունները լույս աշխարհ Բանած ամսագիրն է. իսկ Կոմիտասը՝ նրա երաժիշտ-աշխատավայիցներից ամենազիտակն ու Բնինակալորը:





ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՌԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԻՐՎԱԾ ԿՈՄԻՏԱՍՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԾՆՍԴԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Կոմիտաս վարդապետ... Այս մի անվանում է, որի կողքից լուրաքանչյուր հայ մարդ, լուրաքանչյուր զարգացած անձնավորություն չի կարող անցնել՝ ներքին ակնածումի գգացումը չգգալով։ Կոմիտասն իր գործունեությամբ փայլատակեց հայոց երկանականարում և, որպես մի լուսավոր ջահ, մնաց հավերժությանը։ Նա ամրողացությունն էր՝ մարդ-հոգեկորական-արվեստագետ և ուսեզր ամրողության։ Նրա արվեստը ամրողությունն է՝ իրեն ծնող ու սնող ժողովրդի հոգևոր մշակույթի։

Ահա այս հանճարեղ վարդապետ-երգիշերգահանի ծննդյան 100-ամյակն է, որն իր ողջ ոգու հարստությունը նվիրաբերեց հայ ժողովրդի ինքնուրույն արվեստի, ինքնուրույն մշակույթի մասուցմանը ողջ աշխարհին։ Այդ նա էր, որ աշխարհի զարգացած ժողովուրդներին ներկայացրեց հայոց անադարտ, մարդասիրական, ազնիվ աշխատանքով ու նույնքան ազնիվ ձգտումներով ասրել ցանկացող ժողովրդի հոգեկան հարստությունները։

Եվ ժողովուրդն էլ այսօր արժանին է մատուցում իր մեծ զավակի հիշատակին՝ նրա ծննդյան 100-ամյակը համարելով համաժողովրդական ցննության տոն։

Նոյեմբերի 17-ին, երկուշաբթի։—Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնարքի դաჩիճում տեղի է ունենում ակադեմիայի արվեստի ինստիտուտի, Հայա-

տանի երգահանների միության և Երևանի Կոմիտասի անվան պետական իռնսերվատորիայի միացյալ գիտական և առաջազնան՝ նվիրված Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակին։

Այսուղի էին հավաքվել արվեստի, գիտության, մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ, հյուրեր՝ Սովորական Միության եղբայրական հանրապետություններից։

